

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3-4 (69-70)  
2015 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.12.2015

Հանձնված է տպագրության

29.12.2015

СОЮЗ ЮРИСТОВ РА  
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 3-4 (69-70)

2015 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 18.12.2015

Подписано к печати 29.12.2015

### ՔՐԿԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

#### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Մարտիրոսյան  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐԸ ԻՐԱԿԱՍԱՀՄԱՆՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ..... 4

#### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ

Վաղարշակ Սարգսյան  
ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ..... 13

#### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սոնա Թևանյան  
ԿՏԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐԿՈՂ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱԿԵՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ..... 19

Վարդուշ Եսայան  
XX ԴԱՐՈՒՄ ԶԵՎԱԿՈՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԴԻՍՊՈԶԻՏԻՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱՆՄԱՆ  
ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ..... 27

Տիգրան Խաչիկյան  
ԱՆՁՆԱԿԱՆ ԶՆՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԶԵՎ..... 40

#### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան  
ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ..... 49

Գոռ Միրզոյան  
ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄԸ..... 54

Էմմա Ավագյան  
ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐ ԿԵՂԾԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 69

Աննա Ասատրյան  
ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 78

Նարեկ Մինասյան  
ԱՆՁԻՆ ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... 85

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿՈՒՆՔ

Նարինե Կարապետյան  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 94

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻՋՄՆԵՐԸ ԻՐԱՎԱՍԱՀՄԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

### Հայկ Մարտիրոսյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության  
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Հասարակական կյանքը կանոնավորող և կարգավորող կարևորագույն գործոն, մարդկանց կենսագործունեության վրա նպատակամղված ներազդելու արդյունավետ միջոց են սոցիալական նորմերը: Ընդ որում, որպես սոցիալական կարգավորման հիմնական ձև՝ իրավական կարգավորումը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ հասարակական կենսագործունեությունը բնականոն ճանապարհով իրականացնելու համար: Իրավունքը՝ որպես սոցիալական և նորմատիվ կարևորագույն կարգավորիչ, ձևավորվում է մարդու ստեղծագործ (մտավոր) գործունեության շնորհիվ: Համաշխարհային պատմությունը բազմիցս ապացուցել է, որ իրավաստեղծ գործունեությունը պահանջում է պետական կամքի դրսևորում: Իրավաստեղծ գործունեությունը հասարակության ղեկավարման պետական ձև է<sup>1</sup>: Դա մի բարդ գործընթաց է, ուր պետք է հաշվի առնվեն անհատական, խմբային, հասարակական և պետական շահերը, նրանց պահանջմունքները: Դրա վրա ազդում են նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններ: Իրավաստեղծ գործունեությունը նաև իրավական ակտերում դասակարգի (ժողովրդի) կամքն արտահատելու և ամրագրելու ձևավորված և զարգացող ընթացակարգ<sup>2</sup> է, իրազեկ մարմինների և կազմակերպությունների՝ օրենքի հիման վրա իրականացվող գործունեություն՝ ուղղված նորմատիվ իրավական ակտի ստեղծմանը<sup>3</sup>: Ըստ որում, իրավական ակտի արդյունավետ կիրառումը մեծապես կախված է դրանց նկատմամբ մարդկանց վերաբերմունքից: Հասարակության կողմից հավանության են արժանանում միայն այն իրավական ակտերը, որոնք իրենց բովանդակությամբ չեն հակասում սոցիալական արդարության, հավասարության, ազատության պահանջներին: «Որպեսզի օրենքը կարողանա կարգավորել հասարակական կյանքի կարևորագույն հարաբերությունները, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի համընդհանուր նորմերին, արտացոլի տիրող փաստացի վիճակը, գոյություն ունեցող իրավական խնդիրները, իրավաբանորեն հիմնավորի հասարակության բոլոր ձեռքբերումները և ամրագրի պետության մեջ կատարվող և կայանալիք փոփոխությունները՝ որպես վկայություն այն բանի, որ իրավական օրենքն օրենսդրի ինքնակամություն չի հանդուրժում»<sup>4</sup>:

Հասարակության գիտակցության մեջ արմատացած է այն մոտեցումը, որ օրենսդիր մարմինը կարող է ընդունել ցանկացած օրենք, իրավունքի ցանկացած նորմ: Այս մոտեցումն անտեսում է այն իրողությունը, որ իրավաստեղծումը իրավա-

<sup>1</sup> Стів Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под. ред. В.С. Нерсисянца, М., 1999, էջ 307:

<sup>2</sup> Стів Ковачев Д. А. Механизм правотворчества в социалистическом государстве. М., 1977, Правотворчество в СССР, М., 1974:

<sup>3</sup> Стів Лазарева В. В. Общая теория права и государства. М., 2005, էջ 200:

<sup>4</sup> Стів Ասիյան Ն. Ա., Պետրոսյան Ա. Հ. Իրավական պետություն և օրինականություն, Երևան, 1999, էջ 70:

սահմանման ամբողջական գործընթացի միայն մեկ փուլն է, իսկ վերջինս իրավակազմավորման և իրավաստեղծման փուլերի ամբողջություն է, իրավական նորմի ստեղծման միասնական գործընթաց՝ սկսած հասարակական հարաբերություններում դրանց ձևավորումից մինչև համապատասխան նորմատիվ իրավական ակտերում դրանց ամրագրումը<sup>1</sup>:

Հասարակության զարգացմանը զուգահեռ՝ ձևավորվում են իրավունքով դեռևս չկարգավորված հարաբերություններ: Սկզբնական շրջանում այդ հարաբերությունները դրսևորվում են տարբեր կերպ, սակայն հասարակության անդամների վարքագծում աստիճանաբար արմատավորվում են դրանց՝ իրենց հարմար ձևերն ու դրսևորումները: Վարքագծի այդ տարբերակները դառնում են սովորական և ի վերջո ձևավորում են համընդհանուր ճանաչում ձեռք բերած կանոններ: Հենց այդ կանոնների որոշ մասն էլ հետագայում ընդունվում է պետության կողմից և համապարտադիր բնույթ ստանում՝ ամրագրվելով նորմատիվ իրավական ակտերում:

Իրավակազմավորումը պայմանավորվում է հասարակական զարգացման օրինաչափություններով և կրում է օբյեկտիվ բնույթ: Հասարակական հարաբերությունների ձևավորման այդ փուլում այս կամ այն չափով մասնակցություն է ունենում ողջ հասարակությունը: Այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ իրավակազմավորման գործընթացում վճռական նշանակություն է ձեռք բերում հասարակական գիտակցության մակարդակը (բարոյական, իրավական, քաղաքական, ինչպես նաև կրոնական, գիտական, բնապահպանական և այլն):

Յուրաքանչյուր մարդու գիտակցություն ձևավորվում է կոնկրետ այն պայմանների ազդեցության ներքո, որում ինքը ապրում, աշխատում, սովորում է: Ընդ որում, դրանց շարքում կարևոր նշանակություն է տրվում նաև դաստիարակչական գործունին՝ հատկապես անչափահասների և երիտասարդների շրջանում: Այս պայմանների ձևավորումը էապես թելադրված է այն տնտեսական, սոցիալական գործոնների ազդեցությամբ, որոնք առկա են տվյալ հասարակական միջավայրում: Անշուշտ որպես գործոններ կարևոր նշանակություն ունեն նաև քաղաքական, իրավական, մշակութային ոլորտները: Իրավաբանական և տնտեսագիտական գրականության մեջ առկա է մի մոտեցում, որն ըստ ազդեցության աստիճանի դասակարգում է այդ գործոնները առաջնայինի և երկրորդայինի:

Հարկ է նշել, որ, հատկապես տնտեսական և սոցիալական գործոններով պայմանավորված, հասարակական միջավայրում կարող են առաջանալ դրական կամ բացասական միտումներ, որոնք էլ վերջին հաշվով ձևավորում են առողջ և արդյունավետ դաշտ՝ հասարակության առաջընթացն ապահովելու համար<sup>2</sup>: Ընդ որում, վերոնշյալ գործոնները չպետք է դիտարկել քաղաքական գործընթացներից դուրս<sup>3</sup>:

Այս համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում հետևյալ խնդիրների պարզաբանումը. ի՞նչ քաղադրիչներ են պարունակում տնտեսական և սոցիալական գործոնները, հասարակական կենսագործունեության և քաղաքական գործընթացների որ հանգույցներում են դրանք փոխկապված և ինչ մեխանիզմներով են ներազդում իրավակազմավորման գործընթացի վրա:

<sup>1</sup> Տե՛ս **Лазарева В. В.** նշվ. աշխ., էջ 196:

<sup>2</sup> Տե՛ս **Кузьмин С. А.**, Социальные системы: Развитие и метаморфозы. М., 2005, էջեր 84, 98:

<sup>3</sup> Տե՛ս **Дзарасов С., Меньшиков С., Попов Г.**, Судьба политической экономики, М., 2004, էջեր 56, 72, 96:

Հասարակության յուրաքանչյուր շերտի նկատմամբ տնտեսական և սոցիալական գործոնների ազդեցությունը տեղի է ունենում տարբեր ճանապարհներով և ըստ այդմ էլ տարբեր են այդ ազդեցությամբ ձևավորված հասարակական գիտակցության (այդ թվում և՛ իրավագիտակցության) մակարդակները, ինչն էլ ի վերջո հանգեցնում է հասարակական հարաբերությունների կարգավորման համապատասխան տարբերակների ձևավորմանը: Ի վերջո պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ յուրաքանչյուր անհատի համար (նաև՝ հասարակության շերտերի) հիմնական և ածանցյալ խնդիրներ և նպատակներ կան, որոնք էլ պայմանավորում են նաև նրանց ակնկալիքների տարբերությունը իրավական կարգավորման բնագավառում: Հենց այստեղ է կարևորվում քաղաքական գործընթացների դերակատարումը այն առումով, որ դրանք պետք է հնարավորինս համադրեն տնտեսական և սոցիալական բնագավառներում հասարակության անդամների հետաքրքրությունները: Արդյունավետ քաղաքականությունը, ըստ մեզ, պետք է ենթադրի հասարակության մեջ հանդուրժողականության և սոցիալական արդարության հաստատում: Դրա բացակայությունը կարող է հասարակական միջավայրում հանգեցնել տարբեր արատների, ինչն էլ, բնականաբար, հասարակության համախմբմանը խանգարող հանգամանք է: Անշուշտ, այս համատեքստում քաղաքական համակարգի դերը չափազանց մեծ է:

Տնտեսական և սոցիալական դաշտերում հասարակության իրավական ակնկալիքների առումով կարևոր է քննարկել այդ գործոնների բաղադրիչները: Պետք է նշել, որ դրանք տարբեր են՝ կախված այն հանգամանքից, թե հասարակական-տնտեսական համակեցության որ տարբերակն է իր համար ընտրել հասարակությունը<sup>1</sup>: Խնդիրն այն է, որ տնտեսական և սոցիալական գործոնները՝ որպես ազդեցության միջոցներ, ներառում են ոչ միայն իրական միջավայրում առկա իրողությունները, այլ նաև պարունակում են հասարակության և նրա առանձին անդամների ակնկալիքները այդ գործոններից: Բնականաբար, որպես քաղաքական համակարգի տարր՝ պետությունը, հասարակական, քաղաքական կազմակերպությունները էական ազդեցություն ունեն այս դաշտի վրա այն առումով, որ ի վերջո նրանք են որոշում պետության, ուստի և հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման ուղիները: Պլանային տնտեսություն ունեցող երկրներում, անշուշտ, հասարակության համար առավել դյուրին է ընկալել տնտեսական և սոցիալական զարգացման այն ճանապարհը, որով ինքն ընթանալու է: Բայց և այնպես, նույնիսկ կապիտալիստական հասարակարգի պայմաններում հասարակության համար առկա են մի շարք ինստիտուտներ, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս կողմնորոշվելու այն հարցում, թե ինչ ճանապարհով է ընթանալու տնտեսական և սոցիալական գործոնների զարգացումը<sup>2</sup>: Այս գործընթացների շրջանակներում է, որ հասարակությունը կարող է իր պահանջները ներկայացնել նաև տնտեսական և սոցիալական դաշտում: Ընտրությունների շրջանակներում հասարակության տարբեր շերտերի հետ կազմակերպվող հանդիպումները կարող են նաև բացահայտել իրավական կարգավորման անհրաժեշտություն պահանջող հասարակական հարաբերությունները: Անշուշտ, պետությունը տարբեր մեթոդներով կարող է խրախուսել և

<sup>1</sup> Տե՛ս История мировой экономики, Под. ред. Г. Б. Поляка, А. Н. Марковой, М., 2003, էջ 86:

<sup>2</sup> Տե՛ս Дзарасов С., Меньшиков С., Попов Г., Судьба политической экономики, М., 2004, էջ 88:

խթանել հասարակությանը կամ նրա առանձին հատվածների հասարակական հարաբերությունների զարգացումը (իրավական կարգավորման կամ իրավաստեղծագործության ճանապարհով), կարող է նաև խոչընդոտել վնասակար և սոցիալական տեսանկյունից լարվածություն առաջացնող հարաբերությունների ձևավորումը կամ զարգացումը: Այս համատեքստում կարևոր նշանակություն է տրվում պետության մեջ կառավարողների արժեքային համակարգին, քանզի հենց նրանց գիտակցության մակարդակից և կամային որակներից է կախված վերոնշյալ գործընթացների արդյունավետությունը:

Ըստ Մարքսի՝ արտադրական հարաբերությունների ամբողջությունը հասարակության տնտեսական կառուցվածքն է, որը իրական հենարան է իրավական և քաղաքական գործոնների ձևավորման համար, ինչին էլ համապատասխանում է հասարակական գիտակցության այս կամ այն աստիճանը<sup>1</sup>:

Անշուշտ, այս մոտեցումը ճիշտ է, սակայն միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ իրավական և քաղաքական գործոնները իրենց հերթին կարող են կանխորոշել տնտեսական գործոնի բաղադրիչների ամբողջությունը, դրանց բովանդակությունը, ինչու՞ չէ՝ նաև ազդեցության մեխանիզմները<sup>2</sup>: Աշխարհում ընթացող գլոբալիզացիոն գործընթացները ենթադրում են նաև միջազգային իրավական չափանիշների ներդրում ազգային իրավական համակարգերում: Այս գործընթացների շրջանակներում որոշակի տարրեր կարող են ներմուծվել նաև այս կամ այն միջազգային կառույցին անդամակցելիս, որը, սակայն, կարող է չընդունվել հասարակության կողմից՝ ազգային ավանդույթների և ձևավորված մենտալիտետի առանձնահատկությունների պատճառով:

Պետք է նկատի ունենալ, որ տնտեսական և սոցիալական բարեփոխումների ճանապարհին պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող միջոցառումները կարող են նաև չարտացոլել հասարակական պահանջումները: Իհարկե, որոշակի խնդիրների նկատմամբ մասնագիտական մոտեցումները կարող են թելադրել այնպիսի գործողությունների իրականացում, որոնց վերաբերյալ հասարակական դիրքորոշումը կարող է լինել բացասական: Որպես օրինակ կարելի է մատնանշել խորհրդային կարգերի քայքայումից հետո Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական ծրագրերը:

Այն, որ իրավակազմավորումը օբյեկտիվ բնույթ ունի, տեսական հիմնավորման կարիք այլևս չի գգում: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, քաղաքական համակարգը կարող է ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ հասարակական գիտակցության տարրեր ձևերի նկատմամբ և ի վերջո պայմանավորել նաև իրավակազմավորման գործոնների մեխանիզմների ձևավորումը: Այս առումով բավականին հետաքրքիր և օգտակար տվյալներ է պարունակում Ե. Մ. Բաբասովի «Կառավարման սոցիոլոգիա» աշխատությունը<sup>3</sup>: Մասնավորապես, ըստ նրա՝ պետական մեքենան կարող է քարոզչական մեխանիզմներով (գաղափարական ներ-

<sup>1</sup> Ст'ю Правотворчество в СССР. Под ред. А.В. Мицкевича. М., 1974, էջ 19:

<sup>2</sup> Ст'ю **Киреев А. А.**, Международная экономика – открытая экономика и макроэкономическое программирование, М., 2006, часть 2, էջ 99; **Дзарасов С., Меньшиков С., Попов Г.**, նշվ. աշխ., էջեր 54, 65:

<sup>3</sup> Ст'ю **Бабасов Е. М.**, Социология управления, М., 2006, изд. «Тетрасистема», учебное пособие для студентов вузов, пятое издание.

գործությամբ) ձևավորել որոշակի նպատակների իրականացման համար հարմար միկրոմիջավայր, որի պայմաններում առկա տնտեսական և սոցիալական գործոնները կարող են ունենալ ազդեցության այն բովանդակությունը և չափը, որոնք անհրաժեշտ են հասարակական գիտակցության մեջ համապատասխան մոտեցումները չեզոքացնելու համար<sup>1</sup>: Ընդ որում, թե՛ Բաբասովը և թե՛ այլ հեղինակներ իրենց աշխատություններում արձանագրել են, որ հասարակության կառավարման հնարքներում և մեխանիզմներում բովանդակությունը պետք է արտացոլվի գաղափարական ազդեցության միջոցներում: Մեր կարծիքով, քարոզչությունը (դրսևորման գրեթե բոլոր եղանակներով) իրականում կարող է եթե ոչ վճռական, ապա գոնե էական դերակատարում ունենալ հասարակության կառավարման գործում: Պետք է նկատի ունենալ այն կարևոր իրողությունը, որ կառավարվողները ևս մարդիկ են՝ իրենց սուբյեկտիվ պատկերացումներով և ընկալումներով հանդերձ: Վերոնշյալ հեղինակները մարդկանց պահանջմունքները առաջին հերթին պայմանավորում են տնտեսական և սոցիալական ոլորտներում արդարության հաստատման անհրաժեշտությամբ: Այստեղ կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ իրավակազմավորման փուլն անցած որոշ կանոններ կարող են իրավաստեղծագործության ճանապարհը չանցնել հենց կառավարողների սուբյեկտիվ մոտեցումների պատճառով, ինչպես նաև թեկուզև կարճ ժամանակով իրավաստեղծագործության փուլում ստանալ հակասական ձևակերպումներ:

Հարկ է նշել նաև, որ գլոբալիզացիոն գործընթացների շրջանակներում շատ հաճախ պետությունները հնարավորություն չունեն միայն կառավարման ներքին ռեսուրսների շրջանակներում ներագրել հասարակական գիտակցության վրա: 20-րդ դարի 90-ական թվականներից հետխորհրդային տարածքում սկսված ինտեգրման գործընթացները շատ ոլորտներում հանգեցրեցին նաև ունիֆիկացիայի անխուսափելիությանը:

Պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ հետընտրական ժամանակաշրջանում հասարակական տրամադրություններն ուշադրության տակ պահելը կարևոր նախապայման է իշխանության և հասարակության միջև փոխվստահության դաշտ ձևավորելու, վստահության պաշարն ավելացնելու համար: Վերոնշյալ խնդիրը հաջողությամբ իրականացնելու ճանապարհին հասարակական հետաքրքրությունների և պահանջմունքների իրավական ամրագրումը չափազանց կարևոր գործոն է: Ամբողջ խնդիրն այն է, որ իշխանությունները կարողանան համապատասխան մեխանիզմների օգնությամբ բացահայտել հասարակական տրամադրությունները և պահանջմունքները այս կամ այն հարցի վերաբերյալ, ինչպես նաև ամրագրել դրանց լուծումը իրավական դաշտում, որը արդի ժամանակաշրջանում մեծապես կախված է նաև զանգվածային լրատվամիջոցների օբյեկտիվ և արդյունավետ գործունեությունից: Վերջիններս հնարավորություն ունեն իշխանությունների ուշադրությունը բևեռել հասարակության համար լուծում պահանջող խնդիրների վրա:

Վերոնշյալից ելնելով՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

- Իրավակազմավորումը իրավասահմանման առաջնային փուլն է և կրում է օբյեկտիվ բնույթ, ձևավորվում է տարերայնորեն,

<sup>1</sup> Տե՛ս Поляка Г. Б., Марковой А. Н., նշվ. աշխ., էջ 87:



- Իրավակազմավորման գործոնների դասակարգումը առաջնայինի և երկրորդայինի չի արտացոլում ամբողջական պատկերը, ուստի և չի կարող դիտվել արդյունավետ,

- Քաղաքական համակարգը տարբեր եղանակներով կարող է կանխորոշել իրավակազմավորման գործընթացի նկատմամբ ազդեցություն թողնող գործոնների բովանդակությունը:

Ժողովրդավարական պետություններում կարևոր նշանակություն է տրվում հասարակական կարծիքին պետական մարմինների կողմից որոշումներ ընդունելիս: Վերջինս կարևորագույն երաշխիք է սոցիալական կառավարման ոլորտում ժողովրդավարության զարգացման համար: Հրապարակայնությունը՝ որպես իրավաստեղծ գործունեության կարևոր սկզբունք, ենթադրում է ոչ միայն հասարակության լայն զանգվածների մասնակցություն իրավաստեղծ որոշումներ կայացնելու գործընթացին, այլ նաև դրանց հրապարակում հասարակությանը հասանելի եղանակներով: Ընդհանուր առմամբ, հասարակական կարծիքի հետազոտությունը և հաշվառումը առանձնահատուկ տեղ ունեն իրավաստեղծ գործունեության սոցիոլոգիական ապահովման համակարգում<sup>1</sup>:

Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 6-րդ հոդվածի՝ «Օրենքները ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո»: Սակայն մեր երկրում հանդիպում ենք այս սահմանադրական նորմի և բնականաբար հրապարակայնության սկզբունքի խախտումներ: 1997 թ. հունվարի մեկից, երբ ուժի մեջ մտավ «Օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի հրապարակման կարգի մասին» ՀՀ օրենքը<sup>2</sup>, մեր պետությունում ընդունված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ճնշող մասը թերթերում չի հրապարակվել, ուստի և բնակչությունը չի իրազեկվել ոչ դրանց ընդունման և ոչ էլ դրանց բովանդակության վերաբերյալ:

Իրավաստեղծ գործունեության հրապարակայնության և ժողովրդավարության սկզբունքները պահանջում են հասարակության ակտիվ մասնակցություն, մասնավորապես՝ իր տեսակետների և կարծիքների արտահայտում նախապատրաստվող և ընդունվելիք իրավական ակտերի վերաբերյալ: Հասարակական կարծիքը կարող է ունենալ մեծ ազդեցություն իրավաստեղծ գործունեության նկատմամբ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հասարակական կարծիքը չունի միասնական բնորոշում, քանի որ այն բազմաշերտ երևույթ է: Հասարակական կարծիքը կարող է քննարկվել հետևյալ մոտեցումներով.

- Ըստ առարկայի և ըստ արտահայտման միջոցների (իմացաբանական տեսանկյունից),

- Դրա դերը հասարակական կյանքում, այսինքն՝ սոցիոլոգիական տեսանկյունից<sup>3</sup>:

Նորմատիվ ակտի ստեղծման գործընթացը առանձին փուլերի միասնություն է: Մինչև նախագծի մշակումը անհրաժեշտ է պարզել համապատասխան բնագավառի

<sup>1</sup> Տե՛ս **Лапаева В. В.** Социологическое обеспечение законотворчества//Советское государство и право, 1989, N10., Общественное мнение и законодательство. Соц. исследования, 1997, N19:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 19, 1996:

<sup>3</sup> Տե՛ս **Ասիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Հ., Հակոբյան Զ. Հ.**, Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, 2001, էջ 226. **Корабейников В. С.** Пирамида мнений. М., 1981, էջեր 8-9:

հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման անհրաժեշտությունը: Այդ գործընթացում նախ պետք է հստակ պարզել, թե ինչպիսի փաստական վիճակ է տիրում հասարակական կենսագործունեության այն ոլորտում (սոցիալական, տնտեսական, քաղաքական), որին առնչվում է առաջարկվող ակտը, ինչպես նաև իրավական կարգավորման իմաստն ու նշանակությունը: Վերջին հաշվով կարևոր է նաև ճիշտ հաշվարկել այն հարցը, թե տվյալ իրավական ակտը կարող է արդյոք կարգավորել խնդիրը:

Պետք է նկատի ունենալ, որ նորմատիվ-իրավական ակտերը նախապատրաստվում են ինչպես պրակտիկայի վերլուծությունից բացահայտվող և իրավական կարգավորում պահանջող նոր հարցերի լուծման համար, այնպես էլ տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա բացերը լրացնելու, հակասությունները հարթելու և վերացնելու նպատակով:

Նախապատրաստվող նախագծի հետ առնչվող օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու հետևյալ հարցը. հնարավոր է արդյոք հարցը կարգավորել արդեն իսկ ընդունված ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելով, թե՞ անհրաժեշտ է պատրաստել ակտի նոր նախագիծ<sup>1</sup>:

Իրավաստեղծ գործունեության մեջ ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երկու կողմ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Իրավաստեղծման օբյեկտիվ կողմը ենթադրում է ստեղծվող իրավունքի նորմերի բովանդակային հաստատում այդ գործընթացում ձևավորվող օբյեկտիվ գործոնների, երևույթների ազդեցություն: Իրավաստեղծման սուբյեկտիվ կողմը ներառում է հասարակական իրավագիտակցության և կամքի արտահայտումը և դրա վերարտադրումը պետական կամքի կամ իրավունքի ձևով:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ իրավունքի կազմավորումը պայմանավորված է հասարակական զարգացումների թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ գործոններով:

Քննարկելով հասարակական կարծիքի դերը իրավաստեղծ գործունեության մեջ՝ կարևոր է նաև պատկերացում կազմել այն հարցի վերաբերյալ, թե մասնավորապես ինչպես է ձևավորվում հասարակական կարծիքը, և թե ինչպիսի աշխատանք պետք է տանել, որպեսզի նախապատրաստվող ակտի վերաբերյալ ձևավորվի և արտահայտվի հասարակական կարծիք: Ինչպես ասել է Հեգելը, հասարակական կարծիքում ամեն բան կեղծ է և ճշմարիտ, իսկ դրանում ճշմարիտը փնտրելը վերապահված է միայն հանձարեղ մարդկանց<sup>2</sup>:

Այս համատեքստում պետք է նշենք, որ կարևոր նշանակություն ունի նաև նախապատրաստվող ակտի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով տեղեկություն տրամադրելը: Հայաստանի Հանրապետությունում այս առումով իրականացվող աշխատանքները, մեղմ ասած, անբավարար են, չնայած այն հանագամանքին, որ պետությունը ունի բոլոր անհրաժեշտ միջոցները իրավաստեղծման գործընթացը հրապարակայնության սկզբունքին համապատասխան կազմակերպելու համար:

Կարևորելով պետության դերը հրապարակայնության սկզբունքը կյանքի կոչելու գործում՝ հարկ է նշել, որ այդ հարցում պակաս դերակատարում չեն կարող ունե-

<sup>1</sup> Стів Головистикова А. Н., Дмитриев Ю. А. Проблемы теории государства и права. М., 2005, էջ 464:

<sup>2</sup> Стів Гегель, Философия права. Л., 1934, էջեր 338-339:

նալ նաև հասարակական կազմակերպությունները և կուսակցությունները: Թերևս կուսակցությունների պարագայում ակտի ամբողջական անաչառ ներկայացումը հանրությանը, քաղաքական մոտեցումներից ելնելով, դժվար է պատկերացնել, ինչը չի կարելի ասել հասարակական կազմակերպությունների առումով: Մեր հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունները (այդ թվում և իրավապաշտպան) բավականին պասիվ են այս առումով, չնայած այն հանգամանքին, որ նրանց առաքելությունը հենց հանրության շահերը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ներկայացնելը և պաշտպանելն է: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը: Այդ փաստաթղթի մասին հանրությունը տեղյակ է դարձել միայն օրենսդիր մարմնում իրականացվող գործողություններին հետևելով: Ակտի նախապատրաստման ընթացքում չեն կազմակերպվել հասարակական լսումներ՝ դրա բովանդակությունը իրավական տեսանկյունից ներկայացնելու, ինչպես նաև դրա վերաբերյալ հասարակական կարծիքը ձշտելու համար: Դեռ ավելին, իրականացված քաղաքաշինական ծրագրերի շրջանակներում այդ հարցին իր պատասխանն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ ծրագրերի իրականացման համար ընդունված կառավարության որոշումները համապատասխան մասով ձանաչելով հակասահմանադրական: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ պետական իշխանության մարմինները պետք է ձեռնարկեին բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հասարակությանը տեղեկացնելու ընդունվելիք օրենքի նախագծի բովանդակությանը: Եվ պատահական չէ, որ արդեն Ազգային ժողովում բարձրաձայնում են սահմանադրական դատարանում այն վիճարկելու մասին:

Նախապատրաստվող իրավական ակտի գործունակությունը և դրա վերաբերյալ հասարակական տեսակետներն ու դիրքորոշումը բացահայտելու կարևորագույն եղանակ կարող է հանդիսանալ իրավական փորձարարության կիրառումը: Ընդ որում, փորձարարությունը ենթադրում է օբյեկտի (տվյալ պարագայում հասարակական հարաբերությունների) նկատմամբ նպատակային ազդեցություն՝ ապագա իրավական կարգավորման դրական և բացասական հետևանքները պարզելու համար: Հարցի մասին իր տեսակետը շարադրել է Վ. Լապաևան, ըստ որի՝ փորձարարության (թե՛ իրավական և թե՛ սոցիոլոգիական) գործընթացում ամենակարևոր գործոնը դրա մաքրությունը և իրապարակայնությունը կամ ներկայացուցչականությունն է<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, հասարակության տարբեր սոցիալական խմբերի առանձնահատուկ շահերով են պայմանավորված հասարակական կյանքի տարբեր երևույթների գնահատման և արժեքավորման գործընթացները, որոնք էլ արտահայտում են հասարակական կարծիքի բազմաշերտությունը:

Պետք է նկատի ունենալ, որ հասարակական կարծիքի դերին բացարձակ բնույթ հաղորդելը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել ոչ ճիշտ գնահատականի: «Գիտությանը հայտնի է, որ ոչ բոլոր դեպքերում է հասարակական կարծիքը իրավասու ճիշտ և համարժեք գնահատել, արժեքավորել, դատել հասարակական կյանքի բարդ հիմնահարցերի մասին (օրինակ՝ սահմանադրությունը հանրաքվեով

<sup>1</sup> St'u Никитинский В. И., Самощенко И. С. Правовой эксперимент и совершенствование законодательства. М., 1998, էջ 20:

ընդունելը, և պատահական չէ, որ այդ ճանապարհով ընդունվել են նաև մի շարք ավտորիտար քաղաքական ռեժիմների սահմանադրություններ»<sup>1</sup>:

Անշուշտ, մի շարք հայեցակարգային բնույթի հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը ուղղակիորեն չի կարող պատասխաններ տալ: Օրինակ՝ պետական կառավարման ձևի, դատախազության համակարգի կառուցման և մի շարք այլ հարցերի վերաբերյալ հիմնավորված և գիտական պատասխաններ կարելի է ակնկալել մասնագետներից, իսկ որ ավելի ճիշտ է՝ գիտության և պրակտիկայի համադրումից կատարված եզրահանգումներից: Սակայն, նորմատիվ իրավական ակտում ընհանուրի շահերը պատշաճ մակարդակով արտահայտելու համար անհրաժեշտ է զալ համաձայնության, փոխզիջման գիտականորեն մշակված համակարգերի և հասարակական կարծիքի միջև:

## THE MECHANISMS OF SOCIAL INFLUENCE UPON THE PROCESS OF LAW MAKING

**Hayk Martirosyan**

*Docent at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences*

The article is dedicated to the process of making law and the main problem of participation of the society in it. It is especially important in the sphere of the present constitutional reforms. The problem is especially important for societies wich go to democracy, as in the process of using law its understanding and application without influence is important. For this it is also important the power of government in the process of law making.

## МЕХАНИЗМЫ ОБЩЕСТВЕННОГО ВЛИЯНИЯ НА ПРАВОВОТВОРЧЕСКУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ

**Гайк Мартиросян**

*Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук*

Данная статья посвящена процессу прововторчества и участия общественности в нем. Это особенное важно на данном этапе конституционно-правовых реформ. Вопрос особенно важен для общества, стремящегося к демократии, поскольку для эффективного правоприменения надо иметь представление о цели правовых норм. Для этого также важна и воля государства при создании правовых норм.

**Բանալի բառեր** – իրավաստեղծում, իրավագիտակցություն, հասարակություն, տնտեսություն, քաղաքականություն, իրավակիրառում, պետականություն

**Ключевые слова** – правотворчество, правосознание, общество, экономика, политика, правоприменение, государственность.

**Key words** – law making, law consciousness, society, economy, policy, law using, statehood.

<sup>1</sup> Ապիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 226:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

### Վաղարշակ Սարգսյան

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ*

Ներկայումս վարչական հայեցողության ինստիտուտը տեսական և կիրառական առումով ծեռք է բերել առանցքային նշանակություն: Այս ինստիտուտի անհրաժեշտության հարցն ինքնին հարուցում է բազմաթիվ գործնական խնդիրներ, որոնք համարժեք ընկալելու և լուծելու նպատակով հարկ է անդրադառնալ վարչական հայեցողության հասկացությանը, սահմաններին, դրա տեղի ու դերի վերաբերյալ գիտական շրջանակներում առկա մոտեցումներին և դրանց համադրմամբ մատնանշել վարչական հայեցողության հիմնական չափանիշները:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու իրավասու պաշտոնյաները վարչարարություն իրականացնելիս երբեմն խախտում են մարդու և քաղաքացու իրավունքները, ինչը պայմանավորված է նաև վերջիններիս վերապահված լայն լիազորությունների պարագայում բավարար չափով չկարգավորված հայեցողության հանգամանքով: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում վերանայելու վարչական հայեցողության սահմանները, հիմքերը, կիրառման եղանակները, բարելավել պաշտոնյաների արհեստավարժությունը և այլն: Հարկ է նշել, որ հայեցողության սահմանները գիտության մեջ դիտարկվում են տարբեր տեսանկյուններից և չափանիշերով, մասնավորապես՝ առանձնացվում են դրա իրավակիրառական, վարչական, դատական, նյութական ու դատավարական շրջանակները:

Իրավական հայեցողության սահմանների առնչությամբ մոտեցումների ողջ բազմազանությունն ունի կարևոր տեսական ու կիրառական նշանակություն. այն թույլ է տալիս մշակելու գործնական արժեք ունեցող այնպիսի հիմնադրույթներ, որոնք միտված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հարկ է նշել, որ կենցաղային հարաբերություններում հայեցողությունը ի տարբերություն իրավական հայեցողության, ծագում է որպես բնական գործընթաց, ինչն արդեն պայմանավորված է իրավունքի՝ որպես սոցիալական երևույթի գոյությամբ, որը կանոնակարգում է հասարակական հարաբերությունների բազմազան համակարգը և սահմանափակում է ազատ վարքագիծ դրսևորելու իրավական հնարավորությունները: Մյուս կողմից, կարծում ենք, հստակ տարանջատել կենցաղային բնույթի հայեցողության վերաբերյալ պատկերացումները իրավական հայեցողությունից ևս ողջամիտ չէ, քանզի հենց կենցաղային հայեցողության առնչությամբ ձևավորված մշակույթն է պայմանավորում իրավական հայեցողության էությունը: Ինչպես կենցաղային միջավայրում է հայեցողությունն ընկալվում որպես կամայականություն դրսևորելու աղբյուր, այնպես էլ վարչարարության շրջանակներում է այն համարվում լիազորությունների չարաշահման հնարավոր միջոց, ինչն էլ թելադրում է դրա կիրառման հնարավոր կանխատեսելի նախադրյալների մշակման անհրաժեշտությունը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ գործնականում հայեցողության առնչությամբ ձևավորված է երկակի մոտեցում. մի կողմից այն դիտարկվում է որպես վարչարարության անհրաժեշտ բաղադրիչ, որը հնարավորություն է տալիս տվյալ իրավիճակին առավել համահունչ որոշումներ կայացնելու և գործելու, մյուս կողմից՝ այն ընկալվում է որպես վարչական լիազորությունների իրականացման գործընթացում հնարավոր չարաշահումների աղբյուր՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Ընդ որում, հենց այս երկակիությունն էլ հաճախ թելադրում է միմյանց խիստ իրարարմերժ տեսակետների առկայությունը, այլ կերպ ասած՝ վերը նշված գործոններին հաճախ վերապահվում է անհամեմատ մեծ, իսկ երբեմն էլ ծայրահեղ նշանակություն, ինչը, մեր կարծիքով, խոչընդոտում է ողջամիտ տեսակետ ձևավորել:

Հանրամատչելի գրականությունում, օրինակ՝ հանրաճանաչ լեզվաբան Է. Աղայանի բառարանում, հայեցողությունը մեկնաբանվում է որպես նախ որոշում՝ հիմնված կարծիքի վրա, ապա՝ եզրակացություն<sup>1</sup>: Գրեթե նմանատիպ է նաև ռուսերենի բացատրական բառարաններում այս եզրույթի մեկնաբանությունը: Օրինակ, Է. Օժեգովի բառարանում «հայեցողություն» տերմինը բացատրվում է որպես որոշում, կարծիք, եզրակացություն<sup>2</sup>: Այսպիսով, հասարակական կյանքում հայեցողությունն ընկալվում է որպես սեփական կարծիքով ինքնուրույն որոշում կամ վարքագիծ դրսևորելու ունակություն: Ըստ էության իրավական հայեցողության բովանդակությունը ևս համահունչ է նույն եզրույթի կենցաղային նշանակության վերաբերյալ հիշյալ բնորոշումներին: Մասնավորապես, այս դեպքում ևս հայեցողությունն ընկալվում է որպես եղած հնարավոր իրավաչափ տարբերակներից սեփական պատասխանատվությամբ որևէ մեկն ընտրելու և որոշում կայացնելու կամ գործելու իրավական հնարավորություն: Իհարկե իրավական հայեցողությունն օժտված է նաև լրացուցիչ հատկանիշներով, սակայն դրանք արդեն այլ բնույթի են և նկատելիորեն չեն ազդում տվյալ եզրույթի բովանդակության վրա:

Հայեցողական լիազորությունն ինքնին բացասական երևույթ չէ, ավելին՝ այն հնարավորություն է տալիս վարչական մարմիններին՝ գործելու առավել ձկուն ու ստեղծագործաբար, բացահայտելու պաշտոնյաների մասնագիտական ու գործնական ունակությունները, բարձրացնելու նրանց պատասխանատվությունը, ստեղծված իրավիճակում գործելու հնարավորինս համարժեք և այլն: Բացասականը տվյալ դեպքում այդ լիազորությունների չարաշահումն է, և սահմանափակումները բացառապես միտված են դրանց չեզոքացմանը<sup>3</sup>: Այսպիսով, անհնար է ապահովել վարչարարության արդյունավետությունը առանց վարչական մարմինների հայեցողության սահմանման: Հավելենք, որ բացասական կարող է համարվել այն իրավիճակը, երբ վարչական մարմինը նաև ցածր արհեստավարժության պարագայում չի կարողանում արդյունավետ օգտվել հայեցողության ընծեռած հնարավորություններից, ինչի պատճառով կայացնում է ոչ իրավաչափ որոշումներ:

«Հայեցողություն» եզրույթի վերաբերյալ մոտեցումները իրավական հանրությունում, հատկապես սահմանադրագետների, վարչական իրավունքի մասնագետների և դատավարագետների շրջանում լուրջ տարաձայնությունների տեղիք են տվել:

<sup>1</sup> Տե՛ս Է. Բ. Աղայան, Արդի Հայերենի բացատրական բառարան, 1967 թ., էջ 254:

<sup>2</sup> Տե՛ս Կ. Ի. Օժեգով, Словарь русского языка, 1994 թ., էջ 828:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Դանիելյան, Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ/Եր., Տրգրան Մեծ, 2011 թ., 384 էջ:

Տարբեր են նաև կոնկրետ իրավական հարաբերություններում դրանց կիրառման եղանակների և սահմանների վերաբերյալ դիրքորոշումները: Հայեցողությունն այդ մասնագետները տարանջատում են մասնավորապես ըստ այն հանգամանքի, թե հայեցողական լիազորությունները կոնկրետ հանրային իշխանության որ մարմնին են վերապահված:

Առաջին մոտեցումը հետևյալն է. հայեցողությունը որոշակի գործողության իրականացման ազատությունն է<sup>1</sup>: Արդյոք կարո՞ղ է ընդունելի լինել այս մոտեցումը, եթե նկատի ուենանք, որ հայեցողությունը ենթադրում է միայն որոշակի սահմաններում ազատություն: Ազատությունը, հատկապես երբ դրա կրողի դեպքում հանդես է գալիս հանրային իշխանության մարմինը, չունի սահմաններ, և այս դեպքում մենք գործ կունենանք ոչ այնքան հայեցողության, որքան կամայականության հետ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ ազատությունը իրավական առումով առաջին հերթին ենթադրում է պատասխանատվություն, և հետևաբար վերոնշյալ դիրքորոշումը կարող է այդ տեսանկյունից այնքան էլ վիճահարույց չլինել: Այնուամենայնիվ, այս մոտեցման թերությունը, մեր կարծիքով, այն է, որ ազատությունը, բացի պատասխանատվությունից, ենթադրում է նաև, որ դրանով օժտված սուբյեկտը կարող է ձեռնպահ մնալ այդ գործողությունները կատարելուց, ինչը պետական մարմնի դեպքում բացառվում է և կոֆտվի որպես անգործություն: Բացի այդ, պատասխանատվությունն ինքնին չի մեղմացնում ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասների աստիճանը, չի կարող բավարար հիմք լինել այն իմաստով, որ պատասխանատվության պարագայում այնքան էլ մտահոգող չեն հետևանքները: Վերջին հաշվով, ողջամիտ իրավակարգի գերնպատակը ոչ այնքան իրավախախտումների պարագայում համարժեք արձագանքն է, որքան այդպիսի իրավախախտումները կանխելը:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ հայեցողությունը որպես լիազորություն (հնարավոր իրավական վարքագիծ) համարելն է:<sup>2</sup> Կարծում ենք՝ սա ևս անընդունելի է, քանզի հանգում ենք առաջին տարբերակի սուսկ մասնավոր ընկալմանը: Եթե իրավունքի սուբյեկտն անկախ այն բանից, պաշտոնյա՞ է, թե՞ հանրային իշխանության մարմին, հայոցողությունն առաջին հերթին նրան տրված իրավական հնարավորությունն է, հետևաբար դրանից կարելի է հրաժարվել և չկատարել: Սակայն տվյալ դեպքում կարևոր է այն վերապահումը, որ եթե իրավունքի մասնավոր սուբյեկտի պարագայում իրավունքն անվերապահորեն հնարավոր վարքագիծ է, ապա հանրային իշխանության մարմնի դեպքում լիազորությունը միաժամանակ բովանդակում է պարտադիր վարքագծի տարրեր, որի պարագայում վարչական մարմինը զրկված է անհիմն կերպով հրաժարվելու իրեն վերապահված իրավական հնարավոր վարքագծից: Այսպես, եթե օրենսդրությամբ ամրագրված է ձեռնարկատիրական գործունեության կոնկրետ տեսակների համար արտոնազրի հատկացնելու լիազորություն, և առկա են այն հատկացնելու բավարար հիմքեր, դա բնավ չի նշանակում, որ վարչական մարմինը կարող է սուսկ հայեցողության վրա հղում անելով հրաժարվել արտոնազրի հատկացնելուց:

<sup>1</sup> Տե՛ս **Звоненко Д. П.**, Административное право: учебник. М 2012 թ., էջ 149:

<sup>2</sup> Տե՛ս **Кладков А. В.**, Коррупционная составляющая норм уголовного законодательства и практики их применения// Актуальные проблемы борьбы с коррупцией и организованной преступностью. М., 2011 թ., էջ 73:

Երրորդ՝ ամենատարածված և գիտական լայն շրջանակներում ընդունված տեսակետը, Իսրայելի Քերագույն դատարանի նախկին նախագահ Ա. Բարակի առաջարկած բանաձևումն է, որի համաձայն՝ հայեցողությունը անձի հնարավորությունն է՝ ընտրելու երկու կամ ավելի իրավաչափ որոշումներից մեկը<sup>1</sup>: Կարծում ենք՝ այս բանաձևումը առավել համարժեք է արտացոլում հայեցողության էությունը, սակայն այն նույնպես խոցելի է: Ինչպես իրավագիտորեն նշում է Ա. Առուշանյանը, «Ամբողջովին կիսելով Ա. Բարակի մոտեցումները հայեցողություն եզրույթի հասկացության վերաբերյալ՝ հայեցողությունը կարելի է բնորոշել որպես օրենքով նախատեսված իրավաչափ լուծումներից մեկի ընտրության հնարավորություն՝ դրանց համադրման միջոցով»<sup>2</sup>:

Այլ կերպ ասած՝ որպեսզի հանրային իշխանության ոլորտում հայեցողությունը չվերածվի «թաքնված» կամայականության, այդ ինստիտուտին դիմող վարչական մարմինը ոչ միայն պետք է հիմնավորի իր ընտրած տարբերակի իրավաչափությունը, այլև փորձի արտացոլել այլ հնարավոր տարբերակների հետ համադրման արդյունքները: Միաժամանակ կարևոր է նաև տարբերակ ընտրելիս հաշվի առնել մարդու և քաղաքացու իրավունքների առաջնահերթության սկզբունքը՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունը: Հայեցողության հենքով տարբերակ ընտրելու հստակ օրենսդրական հիմքերի առկայության պարագայում, կարծում ենք, վիճահարույց է խոսել «իրավաչափ» տարբերակներից որևէ մեկն ընտրելու լիազորության մասին: Մեր համոզմամբ, իրավաչափ կարող է համարվել միայն մեկ տարբերակ. դա կլինի այն տարբերակը. որը լիովին կբավարարի օրենսդրությամբ ամրագրված պահանջները, ինչը չի կարելի պնդել մյուս տարբերակների պարագայում:

Այսպես, արտոնագիր հատկացնելու վերը նշված օրինակը մեկ այլ տեսանկյունից վերլուծելու դեպքում կարող ենք ունենալ այն պատկերը, թե իբր իրավաչափ է և՛ արտոնագիր հատկացնելը մերժելու, և՛ այն հատկացնելու լիազորությունը, քանի որ այդ երկուսն էլ ամրագրված են օրենսդրությամբ որպես տվյալ վարչական մարմնի լիազորություններ: Սակայն դրանք ապրիորի լիազորություններ չեն և կարող են գնահատվել օրինականության չափանիշներով, ընդ որում օրինական կհամարվի այն որոշումը, որը հիմնավորված կլինի կոնկրետ օրենսդրությամբ սահմանված նորմերով:

Ներկայացված դիրքորոշումների ամփոփ վերլուծությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ հայեցողության հասկացության բնորոշումն ու կիրարկումը անմիջականորեն և առավելապես դրսևորվում են հասարակական հարաբերությունների իրավական կանոնակարգման փուլում. իրավաստեղծության մեջ, իրավունքի նորմերի իրականացումն ու պետական հարկադրանքի մեջ ձևավորվում են իրավակիրառական հայեցողության իրավական սահմաններ, իսկ հարաբերությունների սուբյեկտների վրա իրավական կանխադրույթի տեղեկատվական ու արժեքային ներգործության փուլում ձևավորվում են իրավակիրառական հայեցողության բարոյաիրավական սահմանները: Իրավակիրառական հայեցողության իրավական սահմանները իրենց հերթին բաժանվում են իրավակիրառական հայեցողության

<sup>1</sup> Տե՛ս **Барак Аарон**. Судейское усмотрение. Перевод с английского М.: Издательство НОРМА, 1999 թ., էջեր 22, 45, 96:

<sup>2</sup> Տե՛ս **А. М. Арушанян**, Административное усмотрение в уголовно-исполнительном праве, Диссертация на соискание уч. ст. кандидат юр. наук.: РУДН: М., 2013, էջ 26:



ընդհանուր սահմանների և նյութաիրավական ու ընթացակարգային-դատավարական հատուկ սահմանների: Բարոյաիրավական սահմանները բաժանվում են իրավակիրառման իրավական գիտակցության և իրավակիրառման սուբյեկտի իրավական մշակույթի:

Բացահայտելով վարչական հայեցողություն եզրույթի բովանդակությունը՝ հաջորդ խնդիրը հայեցողություն և կամայականության տարբերությունն ընդգծելն է: Հայեցողության գործընթացում ձևավորվում են վերջնական սուբյեկտիվ կարծիք (դատողություն, որն արտահայտվում է զնահատականի, հայացքի ձևով), եզրակացություն (եզրահանգում ինչ-որ նյութից, դատողություն, որը կատարվել է որևէ հիմքով), որոշում (եզրակացություն, եզրահանգում ինչ-որ աղբյուրների հիման վրա): Եզրակացությունը, որոշումը և կարծիքը, փաստորեն, հոմանիշներ են, բայց ունեն իմաստային տարբեր երանգներ. կարծիքը՝ սուբյեկտիվ է (օրինակ՝ դատավորի առանձնահատուկ կարծիքը կարող է հիմնված լինել միայն զգացողությունների վրա), եզրակացությունը համեմատաբար ձևավորվում է տրամաբանության հիման վրա, իսկ որոշումը կամային բնույթ ունի:

Երբ խոսքը հայեցողության մասին է, այն պետք է լինի տրամաբանված, որոշակի փաստերի ուսումնասիրման և դրանց համադրման վրա խարսխված, այլ ոչ թե կամայականորեն որևէ տարբերակի ընտրություն՝ առանց վերը նշված հանգամանքները հաշվի առնելու<sup>1</sup>: Որպես հայեցողության հիմնական բնութագրիչներ կարելի է առանձնացնել այնպիսիք, որոնք սահմանված են օրենսդրությամբ, իրականացվում են հանրային իշխանության մարմնի կամ պաշտոնատար անձանց կողմից, օգտագործվում են իրավակիրառման ընթացքում, պարտադիր են ընթացակարգի պահպանումը, ընտրության ազատությունը, օրենսդրությամբ սահմանված շրջանակի առկայությունը, կիրառողի մտավոր ու կամային գործունեությունը, իրավական խնդիրը դիտարկելիս նպատակահարմարությունը կայացրած որոշմամբ օպտիմալ արդյունքի հասնելու համար<sup>2</sup>:

Որպես եզրահանգում հարկ է նշել, վարչական հայեցողության բացառումն անհնար է, եթե առկա է սուբյեկտի իշխանական բնույթի լիազորությունը: Հետևաբար խնդիրը ոչ թե հայեցողական լիազորությունները բացառելը կամ առավելագույնս նվազեցնելն է, այլ հայեցողությունն օրինականության սահմաններում պահելը և դրա կիրարկման ապահովումը բացառապես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև պետական շահերն ապահովելուն ուղղվել է: Ի հարկե միշտ էլ բարդ է ողջամտորեն համադրել անհատի և պետության շահերը, սակայն հենց այս խնդրի լուծմանը պետք է ուղղված լինեն ցանկացած վարչաիրավական բարեփոխումներ, որոնք կբացառեն այն սխալները, որոնք դեռևս թույլ են տրվում:

<sup>1</sup> Գիտական շրջանակներում մասնավորապես Պ. Ի. Լյուբլյանսկին արտահայտել է հետևյալ կարծիքը. հայեցողության մեջ առաջին հերթին առկա է կամայականության տարր, երկրորդ հերթին՝ դատավարական հայեցողությունը տարբերվում է կամայականությունից միայն մոտիվացիայի առկայությամբ, այսինքն՝ դատավորի կայացրած որոշման հիմնավորմամբ արդարության և նպատակահարմարության դիրքորոշման սահմաններից դուրս: Հետևաբար, հայեցողությունը կարելի է անվանել մոտիվացված կամայականություն (Люблянский П. Мера государственного принуждения в уголовном процессе// Российского права. № 2, 2004, էջ 95):

<sup>2</sup> Տե՛ս Բախրախ Դ. Ն., Россинский Б. В., Стариков Ю. Н., Административное право. М., 2008, էջ 157:

## АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ХАРАКТЕРИСТИКИ АДМИНИСТРАТИВНОГО УСМОТРЕНИЯ

**Вагаршак Саргсян**

*Аспирант Академии государственного управления РА*

---

Статья посвящена одной из ключевых проблем административного права – институту административного усмотрения. В частности, автором были исследованы имеющиеся подходы к понятию административного усмотрения, его месту и роли в научных кругах и в результате их сопоставления автором, выявлены основные критерии административного усмотрения. Исходя из необходимости более подробного теоретического и практического анализа правового регулирования вышеуказанных проблем, были применены такие исследовательские методы, как диалектический, логический, сравнительно-правовой, описательный и аналитический метод. Их комплексное применение было направлено на обеспечение объективности и достоверности исследования и отдельно взятых научных результатов.

## CURRENT ISSUES OF ADMINISTRATIVE DISCRETION

**Vagharshak Sargsyan**

*PHD Student of the Public Administration Academy of the RA*

---

The article is devoted to one of the main problems of administrative law – to the institute of administrative discretion. In particular, the approaches of the concept of administrative discretion, of its role and the approaches about it, existing in scientific circles have been studied by the author and the main criteria of administrative discretion have been indicated in the result of their combination by the author. Based on the necessity of more detailed theoretical and practical analysis of the legal regulation of above mentioned problems, such researching methods have been used as dialectical, logical, legal-comparative, descriptive and analytical methods. Their complex application aimed at providing objectivity and reliability of the research and of scientific results of that research separately.

**Բանալի բառեր** - հայեցողություն, վարչական հայեցողություն, վարչական հայեցողության սահմաններ, կանխականություն, վարչական հայեցողության հիմնական չափանիշներ:

**Ключевые слова** - усмотрения, административное усмотрение, границы административного усмотрения, произвол, основные критерии административного усмотрения.

**Keywords** - discretion, administrative discretion, limits administrative discretion, arbitrariness, main criteria of administrative discretion.

## ԿՏԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

### Սոնա Թևանյան

*ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական  
վարչության խորհրդատու  
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Սեփականության իրավունքի դերը և դրա բացարձակ բնույթը ենթադրում են, որ սեփականության հետ կապված գործարքների իրականացման համար օրենսդրությամբ պետք է նախատեսված լինեն այնպիսի կառուցակարգեր ու ինստիտուտներ, որոնք կբացառեն ոչ հավաստի, ոչ իրական կամ օրենքի պահանջները շրջանցող գործարքներ կնքելու հնարավորությունը: Սեփականության իրավունքի փոխանցմանն ուղղված գործարքների համար գործող օրենսդրությամբ նախատեսված են դրանց նոտարական վավերացման իմպերատիվ պահանջ, ինչպես նաև հետագայում դրանցից բխող իրավունքները պետական իրավասու մարմնում գրանցելու անհրաժեշտություն՝ համապատասխան գործարքն ավարտին հասցնելու համար: Այս ընթացակարգերին հետևելու պարագայում կատարվող գործարքը բազմիցս ենթարկվում է ստուգման՝ օրենքի պահանջներին համապատասխանելու և այլ անձանց իրավունքների խախտումը բացառելու տեսանկյունից, ինչը բարձրացնում է դրա հիման վրա ծագած իրավունքի իրավաչափության ու արժանահավատության աստիճանը:

Քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության օտարման հիմնական կառուցակարգեր են պայմանագիրը և կտակը: Իրավական տեսանկյունից այս երկու ինստիտուտներն ունեն հավասարազոր իրավական կշիռ, սակայն գործնական կիրառման պարագայում նշվածներից յուրաքանչյուրը կարող է հարուցել տարբեր իրավական խնդիրներ՝ պայմանավորված համապատասխան գործարքների իրավական կարգավորման լիարժեքությամբ: Ընդ որում՝ պայմանագրի հիման վրա սեփականության օտարման ընթացքում ծագող անձշտությունների ու սխալների շտկման հնարավորությունն ավելի մեծ է, քան ապագայում գույքի տնօրինմանն ուղղված գործարքի՝ կտակի պարագայում, քանի որ հաճախ շատ դժվար է լինում վեր հանել կտակարարի կամքի և կամահայտնության համապատասխանության փաստը: Այս պարագայում փաստաթղթային հիմքը պետք է լինի առավել անթերի ու միանշանակ՝ որպես կանոն չպարզաբանվող կասկածներն ու տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու նպատակով: Սույն հոդվածի շրջանակներում նպատակ ունենք վեր հանել որոշ հիմնախնդիրներ, որոնք կարող են առաջանալ կտակի հետ կապված գործարքների իրականացման ընթացքում, ինչպես նաև մատնանշել այդ խնդիրների լուծման կամ դրանք հետագայում բացառելու հնարավոր ուղիները:

Նոտարական գործողությունները քաղաքացիական շրջանառության հավաստիության ապահովման գործում ունեն վճռորոշ նշանակություն: Նոտարական վա-

վերացմամբ փաստաթղթերն ավանդաբար առավել արժանահավատ ու իրավական տեսանկյունից անխոցելի են համարվել: Միաժամանակ նոտարական գործողությունները կարող են միտված լինել ապահովելու ինչպես գործարքի բովանդակային կողմի, այնպես էլ պարզապես կոնկրետ փաստի իրավական հավաստիությունը: Բոլոր այն դեպքերում, երբ նոտարը հաստատում է գործարքի բնույթ կրող փաստաթղթեր, նա կրում է պարտականություն ստուգելու և ապահովելու դրանում շարադրված նյութի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, այսինքն՝ առնչվում է վավերացվող գործարքի բովանդակության հետ: Գործարքների վերաբերյալ նոտարական վավերացման առկայությունը վկայում է, որ դրանք՝ որպես իրավաբանական փաստ, ճշգրիտ են և համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ նոտարին ներկայացվող փաստաթուղթը գործարքի բնույթ չունի, նոտարը դրա բովանդակային կողմին չի անդրադարձնում, այլ պարզապես հաստատելով՝ հավաստում է, որ այն վկայում է որոշակի փաստերի կամ երևույթների մասին կամ տրված ու ստորագրված է կոնկրետ անձի կողմից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների՝ կտակը միակողմանի գործարք է, որը ենթակա է նոտարական վավերացման: Եթե ուսումնասիրենք կտակի ինստիտուտի վերաբերյալ այլ երկրների իրավական կարգավորումները, ապա կտեսնենք, որ ինչպես ՌԴ-ում, այնպես էլ մայրցամաքային իրավական համակարգին պատկանող այլ երկրների օրենսդրություններում կտակը դիտվում է որպես միակողմանի գործարք, սակայն դրան ներկայացվող պայմաններն ու պահանջները տարբեր են: Այսպես՝ ի տարբերություն ՌԴ-ի, որտեղ կտակը դիտվում է որպես ոչ միայն միակողմանի, այլև խիստ անձնական բնույթի գործարք<sup>1</sup>, եվրոպական որոշ երկրներում թույլատրելի են համատեղ կտակները, մասնավորապես ԳՂՀ-ում<sup>2</sup> ամուսինները կարող են կազմել համատեղ կտակ: Համատեղ կտակները թույլատրված են նաև Անգլիայում և ԱՄՆ-ում<sup>3</sup>, իսկ ֆրանսիական օրենսդրությամբ, ընդհակառակը, նման կտակներն արգելվում են: Շվեյցարական օրենսդրության մեջ այս հարցն ուղղակիորեն կարգավորված չէ, սակայն դատական պրակտիկան վկայում է, որ այդպիսի կտակներն անվավեր են ճանաչվում<sup>4</sup>:

Թեև պետք է նշել, որ ներկայումս ՌԴ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվում են փոփոխություններ, որոնք ոչ միայն հնարավորություն կտան ամուսիններին համատեղ կտակներ կազմելու, այլև կնքելու այսպես կոչված ժառանգման պայմանագիր, որտեղ մանրամասն կկարգավորվեն ժառանգատուի մահից հետո ժառանգված գույքի նկատմամբ պայմանագրի կողմ-ժառանգի նյութական և ոչ նյութական բնույթի իրավունքները և հատկապես պարտականությունները<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **М. Ю. Барщевский**, Наследственное право, исд 2-е, М., 1996, էջ 56:

<sup>2</sup> Տե՛ս **Ханс-Антон Брухельт**, Наследственное право в ФРГ, 2013:

<sup>3</sup> Տե՛ս **М. Ю. Барщевский**, նշված աշխատությունը, էջ 56:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս **Евгений Калюков, Анастасия Михайлова**, Россиянам разрешат заранее договориться по своим наследникам, <http://top.rbc.ru/business/26/05/2015/55645d239a7947531c801f5f>, 26.05.2015:

«Օրենսդրությամբ ևս համատեղ կտակ կազմել չի թույլատրվում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1192): Գործնականում ևս քաղաքացիները նոտարներին նման կամահայտնությամբ չեն դիմում:

Ինչ վերաբերում է կտակի ձևին, ապա այս հարցում ևս միասնական մոտեցում չկա. ՌԴ-ում կտակի նոտարական վավերացման պահանջն ամրագրված է ՌԴ քաղ. օր. 1124-րդ հոդվածով<sup>1</sup>, իսկ Լեհաստանի քաղաքացիական օրենսգրքի 949-րդ հոդվածի համաձայն՝ կտակը կարող է գրվել բացառապես կտակարարի կողմից՝ ձեռագիր, կամ նրա իսկ կողմից թվագրված և ստորագրված լինի: Այս պայմանների պահպանման դեպքում կտակն իրավաբանական ուժ է ձեռք բերում, և դրա համար որևէ այլ վավերացում կամ հաստատում չի պահանջվում: Որոշ երկրներում հնարավոր է կտակը կազմել հանրային ակտի հիման վրա. Ֆրանսիայում, օրինակ, օրենքով նախատեսված ընթացակարգի համաձայն ձևակերպվում է մեկ պաշտոնատար անձի, հիմնականում նոտարի ներկայությամբ, իսկ Շվեյցարիայում՝ մեկ պաշտոնատար անձի և երկու վկաների ներկայությամբ<sup>2</sup>: Այս ընթացակարգի առավելությունն այն է, որ այդպիսով կտակն օժտվում է առավել մեծ հավաստիությամբ և վստահաբար արտահայտում է ժառանգատուի իրական կամքը<sup>3</sup>: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքը վերոնշյալ կանոնից նախատեսում է բացառություն այն դեպքերում, երբ կտակը կազմվում է կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի պայմաններում, անձամբ գրված և ստորագրված է վերջինիս կողմից՝ ձեռագրով, և եթե այն հետագայում շահագրգռված անձանց դիմումի հիման վրա հաստատվում է դատական կարգով՝ որպես արտակարգ իրավիճակի պայմաններում կազմված (հոդված 1129): Այսպիսով՝ ակնհայտ է, որ կտակի՝ որպես սեփականության տնօրինմանն ուղղված գործարքի վերաբերյալ իրավական կարգավորումների հստակությունը ժառանգատուի իրական կամքի արտահայտման և իրականացման հիմնական երաշխիք է: Ուստի սույն հոդվածի շրջանակներում «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում<sup>4</sup> (այսուհետ՝ Օրենք) թվարկված բոլոր նոտարական գործողություններից կառանձնացնենք երկուսը՝ կտակի նոտարական վավերացումը և որևէ փաստաթղթի՝ ներառյալ կտակը վերացնելու մասին դիմումի վրա առկա ստորագրության իսկության վավերացումը: Կտակի նոտարական վավերացումը կարևորագույն տեղ է զբաղեցնում նոտարական գործողությունների ցանկում և իր բովանդակությամբ ավելին է, քան պարզապես կտակարարի ստորագրության իսկության վավերացումը<sup>5</sup>: Ինչպես գիտենք, ժառանգական իրավունքում նախապատվությունը տրվում է ըստ կտակի ժառանգմանը, քանի որ այն առավելագույն հնարավորություն է ապահովում ժառանգատուի համար արտահայտելու իր կամքն իր գույքի հետագա տնօրինման կապակցությամբ: Ըստ օրենքի՝ ժառանգում կատարվում է այն դեպքում, երբ բացակայում է կտակը, կամ այն չի վերաբերում ժա-

<sup>1</sup> Ст'я Гражданский кодекс РФ, часть 3, от 26.11.2001 N 146-ФЗ (принят ГД ФС РФ 01.11.2001), действующая редакция от 05.05.2014:

<sup>2</sup> Ст'я М. Ю. Барцевский, նշվ. աշխ., էջ 58:

<sup>3</sup> Ст'я В. В. Гуцин Ю. А. Дмитриев, Наследственное право и процесс в Российской Федерации, учебник, М., 2004:

<sup>4</sup> Ст'я «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2002.01.10/2(177):

<sup>5</sup> Ст'я Ю.Н. Власов, В.В. Калинин, Наследственное право РФ, учебно-методическое пособие, М., 2002, էջ 75:

ռանգական զանգվածին ամբողջությամբ<sup>1</sup>: Այդ հանգամանքն ի նկատի ունենալով է, որ կտակի, ինչպես նաև դրա նկատմամբ հետագա գործողությունների (փոփոխում, վերացում) ճշգրիտ իրավական կարգավորումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Այս առումով հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Օրենքը ինչպես գործարքների, այնպես էլ այլ փաստերի հաստատմանն ուղղված նոտարական գործողությունները սահմանելիս կիրառում է «վավերացնում է» եզրույթը: Մինչդեռ, մեր կարծիքով, նոտարական գործողություններից միայն և միայն գործարքների, այդ թվում կտակների և դրանց հետ կապված հետագա փոփոխությունների համար է նպատակահարմար օգտագործել «վավերացնում է» եզրույթը, իսկ մնացած բոլոր դեպքերում առավել ճիշտ է օգտագործել «հաստատում է» եզրույթը, հետևյալ պատճառաբանությամբ. վավերացնել եզրույթն ինքնին նշանակում է, որ համապատասխան փաստաթուղթը «վավեր է» կամ «իրական է» և «համապատասխանում է օրենսդրության պահանջներին», իսկ «հաստատել» եզրույթով արտահայտվում է այն իրողությունը, որ նոտարը հավաստիության ուժով է օժտում որևէ փաստ, հանգամանք կամ երևույթ: Նման տարանջատումը հնարավորություն կտա նաև հետագայում խուսափել այնպիսի տարընթերցումներից և օրենքի հակասական մեկնաբանություններից, որոնք կարող են գործնականում հանգեցնել լուրջ իրավական խնդիրների: Մեր կարծիքով՝ վերոնշյալ եզրութաբանական հստակությունը պետք է պատշաճ կերպով կարևորվի և իր արտացոլումը գտնի Օրենքի դրույթներում:

Մասնավորապես խնդիր կարող է ծագել այն պարագայում, երբ անձը նախ կազմել է կտակ, և այն ենթարկվել է նոտարական վավերացման, այնուհետև դիմում է ներկայացնում նոտարական գրասենյակ նախկինում կազմված կտակը վերացնելու մասին, և նոտարը, փաստաթղթի բովանդակային կողմին անդրադառնալու և այն վավերացնելու փոխարեն, վավերացնում է նշված դիմումի վրա առկա ստորագրության իսկությունը: Այս իրավիճակում հարց է ծագում. արդյո՞ք նախկինում կազմված կտակը համարվում է վերացված, թե՞ ոչ: Եթե հարցի պատասխանը փորձենք ստանալ գործող իրավակարգավորումների տառացի մեկնաբանությամբ, ապա կտեսնենք, որ Օրենքի 67-րդ հոդվածով սահմանվում է հետևյալը.

1. Նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ:

2. Նոտարը, վավերացնելով ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը, չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ:

Ինչպես պարզորոշ երևում է վերոնշյալ հոդվածի դրույթների վերլուծությունից, վերջինիս իրավական կարգավորման շրջանակներում ընդգրկվում են բացառապես այն փաստաթղթերը, որոնք գործարքի բնույթ չունեն:

<sup>1</sup> Թեև պետք է նկատի ունենալ, որ կտակի նկատմամբ նշված վերաբերմունքն առվել տարածված է մայրցամաքային իրավական համակարգի երկրներում, իսկ անգլոսաքսոնական իրավական համակարգում ժառանգատուի գույքը նախ հավատարմագրային սեփականության իրավունքով փոխանցվում է մահացածի անձնական ներկայացուցչին, ով ժառանգներին է փոխանցում ժառանգության այն մասը, որը մնում է պարտապանների նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումից հետո: St`u **Гущин В. В., Дмитриев Ю. А.**, նշվ. աշխ.:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում, եթե ներկայացված իրավիճակում նոտարը վավերացրել է միայն կտակը վերացնելու մասին դիմումի վրա առկա ստորագրության իսկությունը, իսկ այն՝ որպես գործաք, այնդուհանդերձ նոտարական վավերացման չի ենթարկվել: Բնականաբար նման իրավիճակում կարող է քննարկվել կտակը վերացնելու մասին կտակարարի գրության առոչինչության մասին հարցը՝ հիմք ընդունելով տվյալ փաստաթղթի նոտարական վավերացման ընթացքում օրենսդրության պահանջները չպահպանելու փաստը:

Հարցի պատասխանը գտնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կտակի և դրա հետագա փոփոխությունների հետ կապված օրենսդրական գործող կարգավորումները՝ համակարգվածության և միմյանց հետ փոխկապվածության տեսանկյունից: Նախ և առաջ անդրադառնանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև Օրենքի համապատասխան նորմերին և վեր հանենք դրանց կարգավորման ուղղությունները:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ կտակ կազմելը, ինչպես և դրա հետ կապված հետագա ցանկացած այլ գործողություն գործարքի բնույթ են կրում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>1</sup> 289-րդ հոդվածը, սահմանելով գործարքի հասկացությունը, նշում է, որ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն, իսկ 290-րդ հոդվածով սահմանվում են գործարքի տեսակները՝ նշելով, որ օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարար է մեկ կողմի կամքի արտահայտությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 7-րդ մասով հստակ ամրագրված է, որ կտակը միակողմանի գործարք է: Օրենսգրքի հետագա կարգավորումներն առնչվում են կտակի ձևին, ինչպես նաև այն վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու կարգին: Համաձայն 1202-րդ հոդվածի 6-րդ մասի կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին հայտարարությունը պետք է արվի կտակ կազմելու համար՝ սույն օրենսգրքով սահմանված ձևով: Իսկ օրենսգրքով որպես այդպիսի ձև է սահմանված, ի թիվս այլ պահանջների, նաև նոտարական վավերացումը: Սա նշանակում է, որ ինչպես կտակը, այնպես էլ կտակի վերացման մասին գրությունը իրենց բնույթով գործարք են, հետևաբար բովանդակային իմաստով նոտարական վավերացման է ենթակա կտակի վերացման մասին գրությունը, այլ ոչ թե գրության վրա առկա ստորագրության իսկությունը:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերում շարունակելով այս տրամաբանությունը՝ օրենսդիրը վերոնշյալ երկու նոտարական գործողություններն ամրագրել է որպես երկու ինքնուրույն կառուցակարգեր, որոնք առաջացնում են լիովին տարբեր իրավական հետևանքներ: Այսինքն՝ վերոնշյալ իրավական կարգավորումներին հետևելու պարագայում գործնականում խնդիրներ չեն կարող առաջանալ: Սակայն դրանք ծագում են Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը համեմատելիս: Այսպես՝ նշված հոդվածի 4-րդ մասով հստակ սահմանվում է, որ կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից՝ համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով: Կտակի վերացու-

<sup>1</sup>Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

մը կամ դրանում փոփոխություններն ու լրացումները վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը վերաբերում է գործարքի նոտարական վավերացմանը: Միաժամանակ նույն հոդվածի 5-րդ մասով ամրագրված է, որ կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը: Նշված դրույթների տառացի մեկնաբանության պարագայում առաջին հայացքից կարող է թվալ, թե կտակի վերացումը կարող է իրականացվել երկու եղանակով՝ դիմում ներկայացնելով կամ նոր կտակ կազմելով: այնինչ, երբ կազմվում է նոր կտակ նախկին կտակը վերացնելու մասին, ապա այն ենթակա է նոտարական վավերացման, իսկ եթե դիմում է տրվում նախկինում կազմված կտակը վերացնելու մասին, ապա նոտարի կողմից վավերացման է ենթակա միայն դիմումի վրա առկա ստորագրությունը: Բնականաբար միևնույն իրավական հետևանքներ առաջացնելուն ուղղված հավասարազոր իրավաբանական գործողությունները չեն կարող տարբեր իրավական կշիռ և հավաստիության ապահովման տարբեր կառուցակարգեր ունենալ: Գործնականում, անկախ այն բանից, թե նշված եղանակներից որ մեկի ընտրությամբ է կտակարարը վերացնում նախկինում կազմված կտակը, և՛ նոր կտակը, և՛ համապատասխան դիմումը գործարքի բնույթ են կրում, քանի որ ուղղված են իրավունքներ դադարեցնելուն, հետևաբար վավերացման են ենթակա հենց տվյալ փաստաթղթերը՝ բովանդակային իմաստով, այլ ոչ թե դրանց վրա առկա ստորագրությունները՝ իրենց պատկանելիության իմաստով: Այս համեմատության շնորհիվ կարող ենք հանգել միայն այն եզրակացության, որ Օրենքը, կտակի վերացման վավերացումից բացի, որպես միակողմանի գործարք, անհրաժեշտ է համարել նաև ապահովել կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրության վավերացումը՝ որպես միակողմանի գործարքի կատարման հիմք հանդիսացող փաստաթղթի: Այլ կերպ ասած այս երկու վավերացումները կոչված են առավելագույնս ապահովելու կտակարարի իրական կամքի արտահայտման հուսալի իրավական պաշտպանությունը: Այդուհանդերձ, վերոնշյալ կարգավորումները գործնական կիրառության ընթացքում այնուամենայնիվ առաջացնում են խնդրներ. Այդ պատճառով նշված նորմերի սահմանադրականության վերաբերյալ հարցը քննության է առնվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից: Վերջինիս 25.02.2014 թ. ՍԴՈ-1140 որոշման մեջ ևս ասվում է, որ կտակի և դրա վերացման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ միայն անձանց ստորագրության իսկության նոտարական վավերացման կարգ նախատեսված է այն դեպքերում, երբ փաստաթղթում շարադրվածը գործարքի բնույթ չի կրում: Միևնույն ժամանակ, խնդիր է դրվում նոտարի առջև ստուգելու փաստաթղթի բովանդակության համապատասխանությունն օրենսդրության պահանջներին (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Լատվիա, Ղազախստան, Կոսովո, Վրաստան, Գերմանիա և այլն)<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, նման նորմի առկայությունն Օրենքում, այլ հոդվածների հետ դրա համեմատությունը, ինչպես նաև վիճարկվող նորմի՝ պրակտիկայում ստացած մեկնաբանությունը հանգեցնում են տվյալ հոդվածի անորոշությանը. հնարավորությամբ

<sup>1</sup> Տե՛ս «Քաղաքացի Գրիգոր Վահանյանի դիմումի հիման վրա «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին 25.02.2014թ. ՍԴՈ-1140 որոշումը»:



յուն չի տալիս գործնականում հստակ մեկնաբանել վերջինիս պահանջներն ու կարգավորման շրջանակը, թեև իրավական որոշակիության տեսակետից այն որևէ իրավական խնդիր չի հարուցում, քանի որ հստակ և միանշանակ կերպով, առանց հայեցողական լիազորություններ վերապահելու սահմանում է այն փաստաթղթերի որոշակի շրջանակը, որոնց վրա եղած ստորագրությունների իսկությունը ենթակա է նոտարական վավերացման. դրանք են գործարքի բնույթ չկրող բոլոր փաստաթղթերը: Այսպիսով ընդգծվում են նոտարական գործողության իմաստը, դերը և ապացուցողական նշանակության աստիճանը. նոտարը, վավերացնելով փաստաթղթի վրա առկա ստորագրության իսկությունը, չի հաստատում դրանում շարադրված փաստերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման փաստաթղթերը գործարքի բնույթ չունեն, հետևաբար իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն ուղղված չեն, ուստի նոտարը, փաստաթղթի բովանդակային կողմին չանդրադառնալով, պարզապես հավաստում է հանգամանքն առ այն, որ տվյալ փաստաթուղթը ստորագրված է կոնկրետ անձի կողմից: Փաստաթղթի բովանդակության, նրանում շարադրված փաստերի՝ իրականությանը համապատասխանելու և տվյալ փաստաթղթից բխող բոլոր հնարավոր վեճերը ենթակա են դատական քննության և պարզաբանման: Նոտարի կողմից ստորագրության վավերացումը հետագա վեճերի լուծման ժամանակ կարող է անվիճելի վկայություն լինել այն մասին, որ տվյալ փաստաթուղթը ստորագրվել է համապատասխան անձի կողմից, որը և կհամարվի դրանում շարադրված փաստերի հետ կապված խնդիրների պատասխանատուն:

Այսպիսով, ևս մեկ անգամ ընդգծելով կտակի և դրա նկատմամբ կատարվող հետագա գործողությունների բնույթն ու նշանակությունը, կարծում ենք, որ նոտարական վավերացման առկայությունը պարտադիր պայման է ոչ միայն կտակի, այլև այն վերացնելու մասին դիմումի վավերության ապահովման առումով: Օրենսդրական վերոնշյալ հակասությունների նկատմամբ ուշադրությունը հիմնավորվում է նաև այն պատճառով<sup>1</sup>, որ այն գործնական կիրառության ընթացքում թույլ տրված տարաբնույթ մեկնաբանության պատճառով խոչնդոտում է կտակարարի իրական կամքի բացահայտումը<sup>2</sup>: Առկա իրավիճակը շտկելու միակ ճանապարհը, իհարկե, օրենսդրական փոփոխությունների իրականացումն է, որը, մեր կարծիքով, պետք է ընթանա այն ուղղությամբ, որ առավելագույնս ապահովի իրավական որոշակիությունը՝ մի կողմից կիրառվող եզրույթների տարանջատման, մյուս կողմից՝ իրավական կառուցակարգերի հստակեցման միջոցով: Վեր նշված հակասությունների բացառմամբ արդյունքում հնարավոր կլինի ապահովել Օրենքի միատեսակ կիրառություն և խուսափել միևնույն իրավանորմի տարաբնույթ մեկնաբանություններից:

<sup>1</sup> Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ օրենսդրական ակտերի միմյանց նկատմամբ ունեցած ենթակայության վերաբերյալ գործող կարգավորումների պարագայում բոլոր դեպքերում կտակի վերացման մասին դիմումի (հայտարարության) վավերացման համար նոտարները պետք է հիմք ընդունեն նախ և առաջ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի դրույթները, ապա զուտ իրավական տեսանկյունից հակասությունների վերացման ճանապարհը բավականին հստակ է և կանխատեսելի, մինչդեռ գործնականում միշտ չէ, որ հնարավոր է ապահովել հակասական իրավանորմի միատեսակ մեկնաբանություն, առավել ևս կիրառություն:

<sup>2</sup> Առավել մանրամասն՝ տե՛ս ՍԴՈ-1140 25.02.2014թ. որոշումը:

## НЕКОТОРЫЕ ПРОБЕЛЫ НОТАРИАЛЬНОГО ЗАВЕРЕНИЯ ЗАВЕЩАНИЯ И ПОСЛЕДУЮЩИХ ОСУЩЕСТВЛЯЕМЫХ ДЕЙСТВИЙ

**Сона Теванян**

*Советник юридического управления  
Национального Собрания Республики Армения  
Ассистент кафедры гражданского права ЕГУ,  
кандат юридических наук*

Основные механизмы отчуждения собственности в гражданском обороте являются договор и завещание, которые с точки зрения юридической весомости имеют одинаковый статус, так как оба должны быть нотариально заверены.

В данной статье выявлены те практические и теоретические проблемы, которые могут возникнуть в процессе нотариального заверения последующих действий, связанных с изменением и особенно с отменой заранее составленного завещания.

## SEVERAL ISSUES OF NOTARIAL APPROVAL OF THE TESTAMENT AND FOLLOWING ACTIVITIES THEREOF

**Sona Tevanyan**

*Adviser of Legal Department of the National Assembly of the Republic of Armenia  
Lecturer at the YSU Chair of Civil Law  
Candidate of Legal Sciences*

Contract and testament are the core mechanisms of alienation of the property within the civil circulation which have the same status in terms of legal value, since both require notarial approval. Within the present article we scrutinize several practical and theoretical issues which may arise in the process of notarial approval of the following activities associated with the change and especially cancellation of the testament.

**Բանալի բառեր** – կտակ, կտակի նոտարական վավերացում, կտակի վերացման մասին գրություն, նոտար, փաստաթղթի բովանդակային կողմ, կտակարարի կամք

**Ключевые слова:** завещание, нотариальное заверение завещания, сообщение об отмене завещания, нотариус, содержание документа, воля завещателя

**Key words:** testament, notary approval of the testament, statement on annulment of the testament, notary, substantial part of the document, will of the testator

## XX դԱՐՈՒՄ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՍՊՈԶԻՏԻՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

### Վարդուշ Եսայան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության  
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Տնօրինչականությունն այն հիմնական ու ելակետային գաղափարներից է, որոնք դատավարագետների կողմից վաղուց անշեղորեն ներառվում են քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների համակարգում՝ չենթարկվելով ո՛չ ժամանակի և ո՛չ էլ իրավական երևույթների հետազոտման ոլորտում գիտական տեսակետների փոփոխության ազդեցությանը:

«Տնօրինչականություն» («դիսպոզիտիվություն») եզրույթը ծագել է լատիներեն «dispono» («disponere») բառից, որը նշանակում է «դրսևորել, որոշել, տնօրինել»: Լատիներենում այս գոյականը փոխառեցին նաև ժամանակակից եվրոպական լեզուները: Այսպես, ֆրանսերենին հայտնի «disposer» բառը, որը նշանակում է «տնօրինել, որևէ բան տրամադրել»<sup>1</sup>, իսկ անգլերենում՝ «dispose», որը նշանակում է «տնօրինել, կազմակերպել»<sup>2</sup>:

Դատավարագիտության մեջ տնօրինչականության սկզբունքի էության վերաբերյալ առկա են մի քանի մոտեցումներ: Առաջին՝ ամենատարածված մոտեցման համաձայն՝ տնօրինչականության սկզբունքը գործին մասնակցող անձանց՝ օրենքով ընձեռված հնարավորությունն է՝ ազատորեն իրականացնելու (տնօրինելու) իրենց իրավունքները: Երկրորդ մոտեցման կողմնակիցները, քննարկելով տնօրինչականության սկզբունքի ազդեցությունը դատավարության ընթացքի վրա, այն հռչակում են որպես դատավարության շարժիչ ուժ: Մենք կողմնակից ենք երրորդ մոտեցմանը, որն իրենից ներկայացնում է նախորդ երկուսի որոշակի երկմիասնություն (սիմբիոզ):

Մեր դիրքորոշումը հիմնավորելու համար հարկ ենք համարում վերլուծելու տնօրինչականության վերաբերյալ դատավարագիտության մեջ XX դարում ձևավորված այն հիմնական տեսությունները, որոնք, անկասկած, իրենց դերն են ունեցել դիսպոզիտիվության սկզբունքի ժամանակակից ընկալման ձևավորման հարցում:

Տնօրինչականության էության վերաբերյալ առաջին կոնցեպցիայի հիմքում դրված էր մինչհեղափոխական հեղինակների աշխատանքներում ձևավորված «**տնօրինման տեսությունը**», որի հիմնական գաղափարն այն է, որ ցանկացած նյութական սուբյեկտիվ իրավունքի բովանդակության պարտադիր տարր հանդիսացող իրավունքի տնօրինման իրավազրոյությունից անխուսափելիորեն բխում է նաև այդ սուբյեկտիվ մասնավոր իրավունքը դատարանում ևս տնօրինելու հնարավորություն:

<sup>1</sup> Տե՛ս Французско-русский словарь. Сост. В. В. Потоцкая, Н. П. Потоцкая. М.: изд. «Советская энциклопедия», 1970, էջ 182:

<sup>2</sup> Տե՛ս Անգլերեն-հայերեն բառարան, կազմ. Հ. Ա. Ասմազույանի և Մ. Ի. Հովհաննիսյանի, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 265:

նր<sup>1</sup>: Տվյալ տեսության կողմնակիցները կողմերի տնօրինչական դատավարական իրավունքները բխեցնում էին դրանց համապատասխան նյութական իրավունքներից և դիտարկում էին որպես վերջիններիս տրամաբանական շարունակություն: Փաստորեն, նախահեղափոխական Ռուսաստանի դատավարագետները գտնում էին, որ եթե կողմերը կարող են տնօրինել իրենց իրավունքները մինչև դատավարությունը, ապա անգամ դատավարությունը սկսվելուց հետո պետք է պահպանվի վիճելի նյութական իրավունքը տնօրինելու հնարավորությունը, սակայն որոշակի դատավարական ձևով:

Խորհրդային ժամանակաշրջանում հասկանալի գաղափարախոսական պատճառներով տնօրինչականության ուսմունքն այս տեսքով և նման ազատատենչ ոգով, որով ձևավորվել էր մինչհեղափոխական դոկտրինայում, դարձավ միանգամայն անընդունելի: Ի հայտ եկան կոչեր՝ լիովին հրաժարվելու տապալված վարչակարգի ժառանգություն հանդիսացող տնօրինչականության սկզբունքից: Մասնավորապես Լ. Ի. Ֆիշմանի համոզմամբ, խորհրդային իրավունքը լիովին բացառում է տվյալ սկզբունքը: Համոզման հիմքում դրված էր այն դատողությունը, թե, քանի որ բոլոր դատավարական իրավունքների իրականացումը դրված է դատարանի հսկողության ներքո, գործին մասնակցող անձանց կողմից այդ իրավունքների տնօրինման ազատությունը միանշանակ բացառվում է, հետևաբար՝ չի կարելի խոսել այն մասին, որ խորհրդային օրենսդրության հիմքում դրված է տնօրինչականության սկզբունքը<sup>2</sup>:

Տնօրինչականության սկզբունքի վերածնունդը խորհրդային իրավունքում կապվում է Ս. Ն. Աբրամովի, Ն. Բ. Ջեյդերի և մի շարք այլ խորհրդային հեղինակների հետ, որոնք իրենց «սոցիալիստական տեսությունը» կառուցելիս առաջնորդվեցին այն գաղափարով, որ սոցիալիստական պետության մեջ չկան դասակարգային հակասություններ, չկա անձի օտարում իշխանությունից, ուստի մասնավոր և հասարակական շահերն իրենց հիմքերով համընկնում են: Նշված հեղինակները, վերանշակելով նախահեղափոխական «տնօրինման տեսությունը» և չհերքելով վարույթի ընթացքում նյութական և դատավարական իրավունքները տնօրինելու կողմերի ազատությունը, վերջինս սահմանափակում էին սոցիալիզմի շահերով: Տնօրինչականությունը դիտարկելով որպես կողմերի նախածեռնության և հասարակական շահերի երկմիասնություն՝ Ս. Ն. Աբրամովն ու նրա հետևորդներն առաջնությունը վերապահում էին հանրային շահին՝ բացառելով սեփական հայեցողությամբ տնօրինչական ակտեր կատարելու կողմի հնարավորությունը: Ս. Ն. Աբրամովը գրում էր. «ԽՍՀՄ-ում անհատի շահերը չեն հակասում պետության շահերին, դրանք ներդաշնակ են..., հետևաբար տնօրինչականության սկզբունքը խորհրդային քաղաքացիական դատավարության մեջ նշանակում է, որ այդ սկզբունքի շնորհիվ իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքները կարող են իրականացվել միայն սոցիալիզմի շահերին համապատասխան լինելու դեպքում, հակառակ դեպքում՝ սոցիալիստական պետությունը միջամտում է քաղաքացիական իրավահարաբերություններին

<sup>1</sup> Стів Исаченко В. Л. К учению о принципе диспозитивности в гражданском процессе. Казань, 1916, էջ 3:

<sup>2</sup> Стів Фишман Л. И. Движение гражданского процесса. Харьков// Революция права. № 3, 1926, էջ 204-206, <http://www.lawlibrary.ru>

և այդ հարաբերությունները համապատասխանեցնում սոցիալիզմի շահերին»<sup>1</sup>:

Տնօրինչականության ուսմունքի հետագա զարգացումն ընթացավ՝ տնօրինչականության սկզբունքը «հասարակական տարրից» անջատելով և աստիճանաբար դասական «տնօրինման տեսությանը» վերադառնալով:

Առաջին նշանակալից քայլն արվեց է XX դարի 80-ականների սկզբին Վ. Մ. Սեմյոնովի կողմից: Վերջինս դուրս բերեց դատարանի ակտիվ դերը տնօրինչականության շրջանակներից և այն հիմնավորեց որպես ինքնուրույն սկզբունք: Ըստ հեղինակի՝ կողմերի նախաձեռնության և հասարակական շահերի երկմիասնության մեջ հասարակական շահերի գերակայությունը բացառում է նշված երկու տարրերը մեկ սկզբունքի մեջ ներառելը. այն ենթադրում է այդ փոխկապակցված տարրերի հարաբերական ինքնուրույնություն: Ընդ որում, եթե դատարանի դատավարական ակտիվությունը պայմանավորված է դատավարական հարաբերությունների հանրային-իրավական (իշխանական) բնույթով և բխում է «սովետական կարգին բնորոշ հատկանիշներից», կողմերի նախաձեռնողականության հիմքում քաղաքացիական իրավունքներն իրականացնելու ազատությունն է:<sup>2</sup> Ի դեպ, հատկանշական է, որ նշված ժամանակաշրջանում արդեն լայն տարածում էին գտել քաղաքացիագետ Վ. Ն. Կրասավչիկովի գաղափարները սովետական քաղաքացիական իրավունքի դիսպոզիտիվության (տնօրինչականության) կապակցությամբ, և Վ. Մ. Սեմյոնովի տեսակետը, ըստ էության, մասամբ հիմնված էր նաև դրա վրա: Վ. Ն. Կրասավչիկովը գրում էր. «Քաղաքացիական իրավունքում դիսպոզիտիվության տակ պետք է հասկանալ քաղաքացիական իրավաբարաբերությունների սուբյեկտների իրավաբանական ազատությունը (հնարավորությունը)՝ իրենց հայեցողությամբ իրականացնելու (ծեռք բերելու, իրացնելու կամ տնօրինելու) իրենց իրավասուբյեկտությունը և սուբյեկտիվ իրավունքները»<sup>3</sup>: Ըստ հեղինակի՝ նման ազատությամբ էլ պայմանավորված է դատավարական իրավունքում հայեցողություն դրսևորելու և վարույթի վրա ազդելու կողմերի իրավունքը<sup>4</sup>:

Վ. Մ. Սեմյոնովը, հետևելով Վ.Ն. Կրասավչիկովի դատողություններին, գալիս է եզրահանգման, որ «քաղաքացիական դատավարության իրավունքի էությունը մեծապես պայմանավորված է քաղաքացիական իրավունքով..., վերջինիս նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները էապես ազդում են դատավարական ձևի, այդ թվում՝ դատավարության ճյուղային սկզբունքների վրա, որոնց թվին է դասվում նաև տնօրինչականությունը»<sup>5</sup>: Եվ չնայած նրա դատողությունները տնօրինչականության սկզբունքի դերի և էության մասին ուղեկցվում էին դատարանի կարևոր նշանակության, դատավարության ընթացքի վերահսկողական գործառնությունների մասին մշտական վերապահումներով, հնարավոր չէր նրա մոտեցումների մեջ չնկատել «տնօրինման տեսության» ակնհայտ

<sup>1</sup> Гражданский процесс. Под. ред. С. Н. Абрамова. М., 1948, էջ 32-39:

<sup>2</sup> См. Семенов В. М., Специфические отраслевые принципы советского гражданского процессуального права. Сборник ученых трудов. Выпуск 4. Свердловск, 1964, էջ 325, Семенов В. М. Конституционные принципы гражданского судопроизводства. М., 1982, էջ 118:

<sup>3</sup> Красавчиков О. А., Диспозитивность в гражданско-правовом регулировании // Советское государство и право, №1, 1970, էջ 45:

<sup>4</sup> Սույն տեղում, էջ 43:

<sup>5</sup> Семенов В. М., Специфические отраслевые принципы советского гражданского процессуального права. Сборник ученых трудов. Выпуск 4. Свердловск, 1964, էջ 323-324:

նշանները: Հեղինակն առանձին դեպքերում դա ցույց է տալիս ուղղակիորեն՝ նշելով, որ «...ցանկացած դատական գործում մի շարք կարևոր դատավարական ակտեր դատարանն իրականացնում է գործին մասնակցող անձանց տնօրինչական գործողությունների հիման վրա», «...դատարանը, չլինելով քաղաքացիական իրավահարաբերության մասնակից, չի մտնում տնօրինչականության ոլորտ, այլ հակադրվում է տնօրինչականությանը՝ օրենքով նախատեսված դեպքերում իրականացնելով իր վերահսկողական գործառույթները»<sup>1</sup>:

Վ. Մ. Սեմյոնովի դիրքորոշումը դատավարական գիտության մեջ ընդունվեց, բայց ոչ միանշանակ: Դատարանի ակտիվ դերից տնօրինչականության սկզբունքի տարանջատմանը կտրականապես դեմ արտահայտվեց Վ. Ֆ. Տարանենկոն. «Թվում է, որ այսօր սխալ կլինի հրաժարվել տնօրինչականության սկզբունքի այն քննարկումից, որը մինչ օրս համարվում է համընդհանուր: Ինչու՞ այսօր մենք պետք է վերադառնանք տվյալ սկզբունքի էության վերաբերյալ բուրժուական պրակտիկայում ձևավորված պատկերացումներին, որոնց հիմքում դրված են անձի ազատության բուրժուական մոտեցումը, մասնավոր սեփականությունը և անձի հակադրումը պետությանը: ...Պետության միջամտությունը քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների դատավարական գործողությունների ոլորտ, նշված գործողությունների նկատմամբ նրա վերահսկողությունը գործնականորեն մտնում են հենց խորհրդային տնօրինչականության հասկացության մեջ՝ որպես տվյալ սկզբունքի անօտարելի կարևոր մի մաս»<sup>2</sup>: Նույն ոգով էր նաև Ի.Մ. Պյատիլետովի քննադատությունը, որի կարծիքով, տնօրինչականության սկզբունքի բովանդակությունից դատարանի ակտիվության, այսինքն՝ կողմերի տնօրինչական գործողությունների նկատմամբ դատարանի վերահսկողությունը բացառելը չի համապատասխանում օրենսդրության իմաստին և ձևավորված պրակտիկային<sup>3</sup>:

Մյուս հեղինակները չնայած պաշտպանում էին Վ.Մ. Սեմյոնովի՝ տնօրինչականությունից դատարանի ակտիվ դերը բացառելու մասին գաղափարը, սակայն որոշակի վերապահումով: Այսպես, Մ. Գ. Ավդյուկովը դատարանի նախաձեռնողականությունը և ակտիվությունը համարում էր ոչ թե որպես ինքնուրույն սկզբունք, այլ օրինականության և օբյեկտիվ ճշմարտության սկզբունքների կարևորագույն դրսևորում<sup>4</sup>:

Դատավարական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վ. Մ. Սեմյոնովի եզրահանգումներն ընդհանուր առմամբ ընդունվեցին դատավարագետների կողմից, իսկ «տնօրինման տեսությունը», որի հիմքում անձի քաղաքացիական ինքնավարությունն էր, դարձավ տնօրինչականության սկզբունքի մասին ուսմունքի հենքը, որն առ այսօր իր արդիականությունը չի կորցրել:

Մի կողմ դնելով կողմերի նախաձեռնողականության և դատարանի ակտիվության հակադրությունը՝ ռուս դատավարագետ Մ. Ա. Գուրվիչը մշակեց տնօրինչականության վերաբերյալ իր սեփական տեսությունը, որը գրականության մեջ հաճախ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 327:

<sup>2</sup> Тараненко В. Ф., Принципы арбитражного процесса. М., 1988, էջ 32:

<sup>3</sup> Се́н Пятилетов И. М., К вопросу о сущности принципа диспозитивности в советском гражданском процессе // Вопросы науки советского гражданского процессуального права. Труды ВЮЗИ, Том. 51, М.: 1977, էջ 83:

<sup>4</sup> Се́н Авдюков М. Г., Принцип законности в гражданском судопроизводстве. М.: 1970, էջ 119:

անվանվում է «**դինամիկ տեսություն**» («շարժիչ ուժի տեսություն»):

Տվյալ տեսության հիմքում Մ. Ա. Գուրվիչը դրեց Վ. Մ. Սեմյոնովի այն դիրքորոշումը, որ «կողմերի դատավարական իրավունքները հարկավոր է դասակարգել ըստ վարույթի շարժի վրա դրանց ազդեցության», և «դատավարության տնօրինչականության առումով պետք է կարևորել այն իրավունքները, որոնց իրականացումն ազդում է դատավարության զարգացման (շարժի) վրա»<sup>1</sup>:

Համակողմանի և մանրամասն մշակելով այդ գաղափարը՝ Մ. Ա. Գուրվիչն առաջարկեց դիսպոզիտիվության բավականին ամբողջական մի մոդել, որի շրջանակներում տնօրինչականությունը դիտարկվում է որպես քաղաքացիական դատավարության գլխավոր շարժիչ ուժ: Նրա տեսության հիմքում դրված առանցքային կատեգորիան կողմերի «պոտենտատիվ», այսինքն՝ միակողմանի կամահայտնություն արտահայտելու իրավունքներն են, որոնք ամբողջ քաղաքացիական դատավարության ընթացքի վրա ունեն «միջանցիկ» կոնստիտուտիվ (կանխորոշիչ) ներգործություն՝ ընդհուպ մինչև դատարանի կողմից համապատասխան հարցի վերջնական լուծումը<sup>2</sup>: Ըստ հեղինակի՝ այդ իրավունքների հիմնական հատկանիշներ են դրանց իրավաստեղծ բնույթը և շարժիչ ուժը: Ընդ որում, առաջին հատկանիշի ուժով պոտենտատիվ իրավունքները տարբերվում են այն իրավունքներից, որոնց իրականացմամբ կողմը դատարանին «հիշեցնում» է օրենքով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտության մասին: Քանի որ դատարանը պարտավոր է ex officio կատարել այդ գործողությունները, կողմի կամահայտնությունը դատարանի համար լրացուցիչ պարտականություններ չի առաջացնում, հետևաբար զրկված է իրավաստեղծ նշանակությունից: Երկրորդ հատկանիշի ուժով կողմերի պոտենտատիվ իրավունքները տարբերվում են այն դատավարական իրավունքներից, որոնց համապատասխանում է դատարանի հանդիպակաց պարտավորությունը (օրինակ՝ վերադարձնելու գրավոր ապացույցների բնօրինակները կամ իրեղեն ապացույցները):

Պոտենտատիվ իրավունքներին, ըստ Մ.Ա. Գուրվիչի, հատուկ է կոնստիտուտիվ (կանխորոշիչ) ազդեցություն: Դրանց իրականացման դեպքում կողմի կամահայտնությունը հանդես է գալիս որպես որոշակի խթան, որը գործադրում է դատական մեխանիզմը: Ընդ որում, որպես կամահայտնության իրավական հետևանք հանդես է գալիս դատարանի կողմից ոչ թե սոսկ մեկ կոնկրետ գործողություն, այլ մի շարք դատավարական գործողություններ կատարելու պարտականությունը<sup>3</sup>:

Նշված գաղափարների հիման վրա Մ. Ա. Գուրվիչը քաղաքացիական դատավարության տնօրինչականության սկզբունքը բնորոշում էր որպես ղեկավար դրույթ, որի ուժով դատավարության շարժը, այսինքն՝ դրա ծագումը, զարգացումը (մի փուլից մյուսին անցումը) և դադարումը, կապված է գործին մասնակցող անձանց նախաձեռնությունից, իրենց պոտենտատիվ իրավունքներն իրականացնելուն ուղղված

<sup>1</sup> Տե՛ս **Семенов В. М.**, Специфические отраслевые принципы советского гражданского процессуального права. Сборник ученых трудов. Выпуск 4. Свердловск, 1964, էջ 335:

<sup>2</sup> Տե՛ս **Гурвич М. А.**, Структура и движение гражданско-процессуального правоотношения // Вопросы науки советского гражданского-процессуального права. Труды ВЮЗИ. Т.38. М., 1975, էջ 9:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

նրանց կամահայտնությունից<sup>1</sup>:

Նկատի ունենալով, որ նախաձեռնողականություն և միակողմանի կամահայտնություն կարող են դրսևորել գործին մասնակցող բոլոր անձինք, ինչպես նաև դատարանը, և նպատակ ունենալով ցույց տալ, թե որ սուբյեկտների վրա է տարածվում տնօրինչականության գործողությունը՝ Մ. Ա. Գուրվիչը գրում էր. «Դատարանի, դատախազության, այլ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունը ևս կարող է հանդես գալ որպես խթան, սակայն ժամանակակից քաղաքացիական դատավարությունում այն ավելի շուտ լրացնում է տնօրինչականության սկզբունքը, հանդես է գալիս որպես օրինականության և օբյեկտիվ ճշմարտության սկզբունքների ապահովման երաշխիք»<sup>2</sup>:

Մ. Ա. Գուրվիչի «դինամիկ տեսությունը» լուրջ ազդեցություն ունեցավ տնօրինչականության սկզբունքի մասին ուսմունքի հետագա զարգացման վրա: Այն հիմք ընդունելով՝ շատ հեղինակներ մշակեցին քննարկվող սկզբունքի իրենց բնորոշումները: Այսպես, Ա. Տ. Բոնները տնօրինչականության սկզբունքը բնորոշում է որպես «քաղաքացիական դատավարության նորմատիվ-դեկլար դրույթ, որը կանխորոշում է դատավարության շարժիչ ուժը և վարույթի զարգացման մեխանիզմները»<sup>3</sup>: Ըստ հեղինակի՝ տնօրինչականության սկզբունքի ուժով քաղաքացիական դատավարությունը ծագում է գործի ելքում իրավաբանական շահ ունեցող անձանց նախաձեռնությամբ: Նշված սուբյեկտներն ինքնուրույն (իրենց հայեցողությամբ) են որոշում դատարանին ներկայացվող պահանջի առարկան, չափը, հիմքը, ինչպես նաև խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության եղանակները: Գործի ելքով շահագրգիռ անձինք, դատական գործի հարուցում նախաձեռնելով, կարող են ազդել նաև նրա հետագա զարգացման, փոփոխման, մի փուլից մյուսին անցնելու և դադարելու վրա: Մասնավորապես, հայցվորն իրավունք ունի փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցապահանջի չափը կամ հրաժարվել հայցից: Պատասխանողն իրավունք ունի ընդունել հայցը և այլն: Եվ, վերջապես, կողմերը կարող են գործն ավարտել՝ հաշտության համաձայնություն կնքելով<sup>4</sup>:

Ըստ Ա. Տ. Բոնների, «... տնօրինչականության սկզբունքի հիմնական բովանդակությունը շահագրգռված անձանց նախաձեռնությունն է, իսկ դատարանի, դատախազության և պետական կառավարման մարմինների նախաձեռնությունը հարկ է դիտարկել որպես դիսպոզիտիվության սկզբունքի լրացում»<sup>5</sup>:

Մ. Ա. Գուրվիչի տեսությունը պաշտպանվում է նաև հայ հեղինակների կողմից, որոնք միանշանակ ընդունում են, որ տնօրինչականության սկզբունքը՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի ճյուղին յուրահատուկ «քաղաքացիական դատավարությունը քրեական դատավարությունից տարբերակող սկզբունք» կողմերին վերապահում է հնարավորություն՝ ազդելու վարույթի ծագման «զարգաց-

<sup>1</sup> Стѹ Гурвич М. А. Принципы советского гражданского процессуального права / Труды ВЮЗИ. М.: 1965, էջ 30-31:

<sup>2</sup> Советский гражданский процесс. Под ред. М. А. Гурвича. М.: 1975, էջ 27:

<sup>3</sup> Боннер А. Т. Принцип диспозитивности советского гражданского процессуального права. Учебное пособие. М.: 1987, էջ 44:

<sup>4</sup> Стѹ նույն տեղում:

<sup>5</sup> Стѹ նույն տեղում:



ման ու դադարման վրա»<sup>1</sup>: Ինչ վերաբերում է տնօրինչական գործողությունների նկատմամբ դատական վերահսկողությանը, ապա, Ռ.Գ.Պետրոսյանի և այլ հեղինակների կարծիքով, այն դուրս է տնօրինչականության սկզբունքի սահմաններից: Կողմերի տնօրինչական գործողությունների սահմանափակումները սահմանված են օրինականության ապահովման սկզբունքից ելնելով»<sup>2</sup>:

Տնօրինչականության սկզբունքի վերաբերյալ սեփական մոտեցումն առաջարկեց Ռ. Ե. Ղուկասյանը<sup>3</sup>: Նրա կողմից մշակված «**շահի տեսությանը**» հիմքում ևս դրված էր դատավարության շարժն ապահովող խթանի գաղափարը, բայց միաժամանակ ուշադրությունը կենտրոնացվում էր ոչ թե քաղաքացիական գործի շարժման մեխանիզմի, այլ անմիջականորեն հենց նրա զարգացմանը նպաստող ուժերի՝ անձի շահի և կամքի վրա: Ըստ Ռ. Ե. Ղուկասյանի՝ տնօրինչականության սկզբունքի հիմքն անձի կամքը նրա շահով պայմանավորելն է: «Շահը», հեղինակի կարծիքով, տնօրինչականության էության բացահայտման համար կարևոր հասկացություն է: Միաժամանակ շահը հանդես է գալիս որպես որոշակի բարիքների նկատմամբ անձի պահանջմունք: Սուբյեկտը պետք է գիտակցի շահը, սակայն այն գոյություն ունի օբյեկտիվորեն՝ անկախ իր գիտակցվածության աստիճանից, և իր բնույթով հանդիսանում է սոցիալապես դետերմինավորված: Քանի որ իրավական շահի մեջ ցանկացած սուբյեկտիվիզմ բացառվում է, «գործում է շահի գերակայությունը կամքի վրա..., ուստի բացառիկ դեպքերում անձի շահերը պետք է պաշտպանվեն հակառակ իր կամքի»<sup>4</sup>: Տվյալ թեզը հեղինակը պաշտպանում և զարգացնում էր բավականին հետևողականորեն՝ միաժամանակ ընդգծելով, որ անհրաժեշտ է տարբերել իրենց իրավունքները պաշտպանել չկարողացող և այդ իրավունքները պաշտպանել չցանկացող անձանց: Ընդ որում, Ռ. Ե. Ղուկասյանը պնդում է, որ քննարկվող սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ քաղաքացիական դատավարության ընթացքը կախված է ոչ թե շահագրգիռ, այլ անձնական նյութաիրավական շահ ունեցող անձանց կամքից, այսինքն՝ նյութական իրավունքի ենթադրյալ սուբյեկտներից:

Չնայած տնօրինչականության հասկացության մեջ ակնհայտ «սոցիալիստական ուղղվածությանը»՝ Ռ. Ե. Ղուկասյանի անվիճելի վաստակը այն է, որ առաջին անգամ դատավարագիտության մեջ դատավարության համար այդքան կարևոր և միաժամանակ որոշակի նշանակություն տրվեց կոնկրետ մարդու իրավական պաշտպանության կարիք ունեցող անհատական շահին: «Շահի տեսությունը» տնօրինչականության ուսմունքի հետագա զարգացման մեջ ներդրեց հզոր հումանիստական, մարդասիրական լիցք և մինչ օրս էլ պահպանում է իր արդիականությունը:

Հետևելով Ռ. Ե. Ղուկասյանի գաղափարներին՝ Ս. Ա. Սապոժնիկովը ևս դատավարության տնօրինչականությունը տեսնում է նրանում, որ դատավարության ծագումը և զարգացումը մեծապես պայմանավորված են անձի կամքով և շահերով: Իր ծագման պահից մինչև ավարտը վարույթը մեծապես կախված է դրանցից: Ընդ որում, գործի ելքում իրավական շահի բացակայության դեպքում վարույթը դառնում է

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 81:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 83:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Գукасян Р. Е. Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, 1970, էջ 67-99:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 95:

առարկայագուրկ, քանի որ քաղաքացիական դատավարության նպատակը խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն է: Նույն կերպ՝ կամքի բացակայությունը կամ դրա արատը ևս վարույթի հետագա զարգացման արգելքներ են:<sup>1</sup>

Ի տարբերություն Ռ. Ե. Ղուկասյանի, Ս. Ա. Սապոժնիկովը շահ-կամք երկմիասնության մեջ նախապատվությունը տալիս է կամքին, որը, ըստ հեղինակի, շահին տալիս է իրավաստեղծ նշանակություն: Կամքի շնորհիվ է շահը դրսևորվում դատավարության ընթացքում և դառնում դատական քննության առարկա: Առանց կամահայտնության շահն ի վիճակի չէ ազդել վարույթի ծագման ու զարգացման վրա: Հետևաբար կողմի կամահայտնությունն է հարկավոր դիտարկել որպես տնօրինչականության գործառութային նշանակությունը բնութագրող շարժիչ ուժ:

Իրավունքի զարգացման ժամանակակից պայմաններում, կարծում ենք, պետք է համաձայնվել Ս. Ա. Սապոժնիկովի դիրքորոշմանը: Հակառակ պարագայում ստիպված պետք է լինենք ընդունելու խորհրդային իրավունքին հատուկ այն մոտեցումը, համաձայն որի եթե կողմը ինչ-ինչ պատճառներով իր շահերից բխող որոշում չի կայացնում, դատարանը պետք է հարցը լուծի նրա կամքին հակառակ, սակայն նրա շահերից ու օրինականության ապահովման գաղափարներից ելնելով:

Կարծում ենք, որ դատական պաշտպանության առարկա պետք է հանդիսանա անձի գիտակցված և նրա կամքով արտահայտված սուբյեկտիվ շահը: Շահի առկայությունը կամ բացակայությունը և դրա կոնկրետ բովանդակությունը կարող են որոշվել բացառապես այն կրողի կողմից, որն էլ պետք է հայտնի այն պաշտպանելուն ուղղված կամք: Իսկ այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով կամք արտահայտվել չի կարող (անգործունակություն, անչափահասություն և այլն), անձի շահերի պաշտպանության վերաբերյալ կամք կարող են արտահայտել այլ անձինք, այն էլ օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նման լիազորություն ունենալու պարագայում:

Տնօրինչականության էության վերաբերյալ այլ տեսություն առաջարկեց Ա. Գ. Պլեշանովը, որի տեսակետը կարելի է բնութագրել որպես «**ընտրության տեսություն**»: Նրա կարծիքով տնօրինչականության սկզբունքի էությունը երկու անբաժանելի տարրերի միասնությունն է: Դրանք են՝ 1. խախտված իրավունքի պաշտպանության ձևի ընտրության ազատությունը, և 2. կողմերի հայեցողությամբ իրավունքի պաշտպանության ընթացքում վարքագծի ընտրության ազատությունը<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ համաձայնվելով այն գաղափարին, որ տնօրինչականությունը վարույթի զարգացման հիմնական սկզբունքն է, Ա. Գ. Պլեշանովը միաժամանակ ընդգծում է, որ դատավարության ծագման, զարգացման և դադարման վրա ազդելու հնարավորությունը դիսպոզիտիվության բազմաթիվ դրսևորումներից մեկն է:

«Ընտրության տեսությունը» որոշակիորեն զարգացրեց Ե. Ռ. Ռուսինովան, որի բնորոշմամբ՝ տնօրինչականությունն իրավական կատեգորիա է, որը ենթադրում է իրավահարաբերության մասնակիցների կողմից օրենքով ամրագրված սահմաններում իրենց հայեցողությամբ և ի շահ իրենց վարքագծի տարբերակներ ընտրելու և

<sup>1</sup> Стів Сапожников С. А. Принцип диспозитивности в гражданском процессе. Дисс... к.ю.н. М., 2006, էջ 85:

<sup>2</sup> Стів Плешанов А. Г. Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. М.: «Норма», 2002, էջ 37:

այն ազատորեն դրսևորելու հնարավորություն<sup>1</sup>: Քաղաքացիական դատավարության իրավունքում տնօրինչականությունը, ըստ հեղինակի, ենթադրում է իրենց իրավունքները և օրինական շահերը պաշտպանող անձանց կողմից օրենքով սահմանված շրջանակներում վարքագծի այնպիսի տարբերակներ ընտրելու ազատություն, որոնք կապված են դատավարական իրավունքների ձեռքբերման, իրականացման և տնօրինման հետ:

Ակնհայտ է, որ «ընտրության տեսության» կողմնակիցների եզրահանգումները հիմքում ունեն դիսպոզիտիվության՝ որպես իրավական կարգավորման մեթոդի մասին իրավունքի տեսության մեջ ձևավորված ընդհանուր-իրավական պատկերացումներ:

Ուշագրավ է, որ որպես ընդհանուր իրավական կատեգորիա տնօրինչականությունն իրավունքի տեսության մեջ ուղղակիորեն կապվում է իրավական կարգավորման թույլատվական եղանակի հետ<sup>2</sup>: Վերջինս նախ և առաջ ենթադրում է որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու, համապատասխան վարքագիծն ընտրելիս սեփական հայեցողությամբ գործելու՝ օրենքով երաշխավորված հնարավորություն: Լուսավորության դարաշրջանում ծագած «թույլատվական իրավունքի» գաղափարները ժամանակակից աշխարհում, կարծես թե, նոր թափով են զարգանում: Ներկայումս, առավել քան երբեք զգալի է դարձել անցումն արգելող, սահմանափակող իրավունքից թույլատվականի, ինչի մասին են վկայում իրավական կարգավորման թույլատվական մեթոդի անընդհատ ընդլայնումը, մասնավոր իրավունքի և մասնավոր կյանքի ժամանակակից արժևորումը, պայմանագրային իրավունքի նշանակության էական բարձրացումը և այլն:

Իրավունքի տեսության մեջ իրավական կարգավորման թույլատվական տիպի էության վերաբերյալ ձևավորված պատկերացումների ուսումնասիրության և նյութական ու դատավարական իրավունքի գիտություններում արտահայտված տեսակետների համադրման միջոցով «ընտրության տեսության» կողմնակիցներն իրավացիորեն առանձնացնում են տնօրինչականության հետևյալ հատկանիշները.

1. Տնօրինչականությունը ենթադրում է օրենքի շրջանակներում վարքագծի որոշակի տարբերակներ ընտրելու հնարավորություն: Անձը, որի իրավունքները խախտվել են, նախ ընտրություն է կատարում դիմել՝ իր իրավունքի դատական պաշտպանության, թե՞ ոչ: Իրավունքի դատական պաշտպանության դիմելու պարագայում հայցվորը որոշում է հայցվող պաշտպանության ծավալը (ձևակերպում է հայցի առարկան, հիմքը, հայցապահանջի չափը)՝ ընտրելով իր համար առավել ընդունելի տարբերակը: Վարույթի հետագա զարգացումը ևս կախված է նրանից, թե ինչպիսի վարքագիծ են դրսևորում կողմերը իրենց դատավարական իրավունքների իրականացման հնարավոր տարբերակների ընտրության հարցում:

2. Տնօրինչականությունը ենթադրում է ինքնավար կամք դրսևորելու հնարավորություն: Այս կամ այն գործողությունը կատարելիս կամ այդ գործողությունը կատարելուց հրաժարվելիս անձը գործում է իր հայեցողությամբ: Որոշում կայացնելիս սուբյեկտը կաշկանդված չէ օրենքի ուղղակի ցուցումներով այն մասին, թե վարքագծի որ տարբերակն է հարկավոր ընտրել: Բացի այդ, նա միշտ ունի հնարավորություն դրսևորելու վարքագծի պասիվ տարբերակը: Տնօրինչականության պայմաններ

<sup>1</sup> Տե՛ս **Русинова Е. Р.** Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права. М., 1981, т. 1, էջ 296-297:

րում իրավահարաբերության ծագումը և հետագա զարգացումը կախված են դրա սուբյեկտների կամքից: Վերջինիս վրա ազդեցության այլ՝ արտաքին աղբյուրներ չպետք է լինեն: Եթե արտաքին աղբյուրը (իրավական նորմը), այդուհանդերձ, պարունակում է վարքագծի որոշակի մոդել, ապա այն պետք է ունենա ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական նշանակություն:

Քաղաքացիական դատավարությունում վարույթի ծագման, ինչպես նաև քաղաքացիական գործի բոլոր առանցքային «շրջադարձերի» աղբյուրն այն անձանց կամ հայտնությունն է, որոնք պաշտպանում են իրենց կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Քաղաքացիադատավարական օրենքը, տնօրինչական կարգավորման մասով, կողմերի համար միայն սահմանում է այս կամ այն դատավարական իրավիճակին արձագանքելու որոշակի տարբերակներ, ընդ որում՝ ոչ թե պարտավորեցնելով դրսևորելու համապատասխան վարքագիծ, այլ ցույց տալով հնարավոր այն վարքագիծը, որը շահագրգռված անձը կարող է դրսևորել կամ չդրսևորել:

3. Տնօրինչականությունը ենթադրում է ընտրություն կատարելու հնարավորություն՝ ելնելով սեփական շահերից: Վարքագծի ընտրության հիմքն անձի գիտակցված շահն է: Անձը որոշում է իր նյութաիրավական և դատավարական նպատակը և դրան համապատասխան կատարում է որոշակի ընտրություն՝ նպատակ ունենալով բավարարել իր շահերը:

4. Տնօրինչականությունը ենթադրում է որոշակի սահմաններ: Այդպիսիք են համարվում որոշակի ակտիվ գործողություններ կատարելու արգելքները, որոնք, սահմանված լինելով օրենքով, հանդես են գալիս որպես սուբյեկտի կամքը և վարքագիծը սահմանափակող արտաքին ներգործիչներ: Օժտված լինելով իր հայեցողությամբ ընտրություն կատարելու հնարավորությամբ՝ սուբյեկտը կարող է ընտրել վարքագծի տարբերակ բացառապես օրենքի շրջանակներում (նա չպետք է խախտի օրենսդրության իմպերատիվ պահանջները և այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը):

Տնօրինչականության թվարկված հատկանիշների վերաբերյալ վերը ներկայացված ընդհանուր իրավական պատկերացումները դատավարագետների մեծամասնության կողմից չեն հերքվում: Սակայն ընդգծվում է այն իրողությունը, որ «ընտրության տեսությունը» տնօրինչականությունը դիտարկում է չափազանց լայն առումով, որպես իրավական ֆենոմեն, որն իրականում արտահայտվում է ոչ միայն իրավունքի սկզբունքի, այլ նաև՝ իրավական կարգավորման մեթոդի<sup>1</sup> կամ սուբյեկտիվ իրավունքի հատկության<sup>2</sup>, կամ յուրիսդիկցիոն մարմինների գործունեության իրավական ռեժիմի առանձնահատկության<sup>3</sup> ձևով:

Հիմնական առարկությունը, որը կարելի է բերել «ընտրության տեսության» դեմ, այն է, որ տնօրինչականության նման լայն ընկալման արդյունքում դրա գործողության ոլորտ են ներթափանցում մրցակցության սկզբունքի բովանդակությունը կազմող գրեթե բոլոր իրավունքները, որի պատճառով տնօրինչականության և մրցակցության սահմանները միախառնվում են:

Բանն այն է, որ իրավունքի տեսության և քաղաքացիական իրավունքի գիտութ-

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права. М., 1981, т. 1, էջ 295:

<sup>2</sup> Տե՛ս **Орлова Л. М.** Права сторон в гражданском процессе. Минск, 1973, էջ 28:

<sup>3</sup> Տե՛ս **Плешанов А. Г.** Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. Автореф. дисс... к.ю.н. Екатеринбург, 2001:

յան մեջ ընդունված է սուբյեկտիվ իրավունքի եռանդամ կառուցվածքի մասին պատկերացումը: Յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունք ներառում է իրավագոր անձի կողմից որոշակի գործողություն կատարելու կամ այն չկատարելու իրավագոր ությունը, պարտավոր անձից որոշակի գործողության կատարում կամ որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն ուղղված վարքագծի դրսևորում պահանջելու իրավագորությունը և խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանության իրավագորությունը: Ըստ էության, ցանկացած սուբյեկտիվ իրավունքի տարր է հանդիսանում այդ իրավունքն ազատորեն տնօրինելու (իրականացնելու կամ չիրականացնելու) իրավագորությունը: Այդ առումով «ընտրության տեսությունը» միանշանակ ընդունվել չի կարող, քանի որ այդ դեպքում ստիպված կլինենք տնօրինչական համարել քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված մրցակցային բոլոր իրավունքները՝ ապացույցներ ներկայացնելը, դրանք պահանջելու միջնորդությամբ դատարանին դիմելը, հայցադիմումի պատասխան ներկայացնելը, լրացուցիչ նյութեր ներկայացնելու համար դատական նիստի հետաձգում միջնորդելը, հայցի ապահովման միջոցների կիրառումը, դատական նիստին ներկա գտնվելը, ապացույցների հետազոտմանը մասնակցելը, դատավարության ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը և այլն: Չէ՞ որ գործին մասնակցող անձինք նշված իրավունքներն իրականացնելիս ևս կատարում են որոշակի ընտրություն՝ դրանք կատարելու կամ չկատարելու միջև:

Բացի այդ, «վարքագծի տարբերակներ» ընտրելու հնարավորությունը՝ որպես տնօրինչական իրավունքների իրականացման պայման, հնարավոր է բացառապես իրավունքների պաշտպանության այլընտրանքային ձևերի կամ եղանակների առկայության, վեճի առարկայի բաժանելիության պայմաններում: Մինչդեռ ընտրության ազատություն գործող օրենսդրությունը մի շարք դեպքերում չի վերապահում: Այսպես, ամուսնությունն անվավեր ճանաչելու գործով, հայցվորի կողմից դատական պաշտպանության դիմելու կամ չդիմելու հարցում ընտրություն կատարելուց բացի, կողմերն այլ հնարավորություններով օժտված չեն. նրանք չեն կարող փոխել գործի ենթակայությունը (սահմանված է բացառիկ դատական ընդդատություն), ընդդատությունը (գործն ընդդատյա է պատասխանողի բնակության վայրի դատարանին), հայցապահանջը որևէ կերպ փոփոխվել չի կարող, վեճը կողմերի հաշտությամբ ավարտվել չի կարող: Ստացվում է, որ տնօրինչականությունը՝ որպես սկզբունք, որոշակի կատեգորիայի գործերով կարող է չդրսևորվել: Մինչդեռ դատավարական իրավունքի սկզբունքները, թեկուզև որոշակի սահմանափակումներով, պետք է դրսևորվեն քաղաքացիական ցանկացած գործի քննության և լուծման ընթացքում: Հենց դրանով է պայմանավորված նրանց՝ քաղաքացիական դատավարության իրավունքի բոլոր ինստիտուտների մեջ թափանցող հիմնարար, ելակետային և ղեկավար դրույթներ լինելը:

Ուշագրավ է, որ իրավական կարգավորման թույլատվական մեթոդը բնորոշ է ոչ միայն քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային (այսինքն՝ լայն առումով «քաղաքացիական») հարաբերությունների իրավական կարգավորմանը: Վարքագծի հնարավոր տարբերակների միջև ընտրություն կատարելու հնարավորություն նախատեսված է նաև հանրային իրավունքի ճյուղերում: Այսպես, ընտրությունների ժամանակ ընտրողն ինքն է որոշում՝ մասնակցել՞ վճարկությանը, թե՞ ոչ, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, ըստ հարկային օրենսդրության, իրավասու են որոշելու՝ հարկման մեխանիզմը (վճարելու են շրջանառությո-

յա՞ն հարկ, թե՞ շահութահարկ ու ԱԱՀ) և այլն: Նշված դեպքերում ևս խոսքն իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու մասին է: Եվ եթե ղեկավարվենք «ընտրության տեսության» գաղափարներով, ստիպված կլինենք տնօրինչականության սկզբունքի գործողությունը տարածելու նաև սահմանադրական, վարչական, ֆինանսական և հանրային իրավունքի այլ ճյուղերի վրա:

Կարծում ենք, որ տնօրինչականության դատավարական սկզբունքի ուսումնասիրության ընթացքում հարկ է բացառել «իրավունքի սկզբունք» և իրավական կարգավորման մեթոդ» հասկացությունների դիտարկումը նույն տեսանկյունից, և այս առումով Մ. Ա. Գուրվիչի «դինամիկ տեսությունը», անկասկած, աչքի է ընկնում որոշակի հստակությամբ և կառուցողականությամբ:

Ժամանակակից գիտության մեջ գործնականում ոչ ոք չի վիճարկում վարույթի հարուցման, զարգացման (փուլից փուլ անցնելու) և դադարման վրա շահագրգիռ անձանց ազդեցությունը, որը թույլ է տալիս հստակ սահման անցկացնել տնօրինչականության և մրցակցության սկզբունքների գործողության ոլորտների միջև և հստակորեն ընդգծում է քաղաքացիական դատավարության համար տնօրինչականության սկզբունքի դերը:

Ներկայացված տեսությունների վերլուծության և դատավարական գրականության մեջ տնօրինչականության էության վերաբերյալ արտահայտված տեսակետների ուսումնասիրության հիման վրա կարելի է փաստել, որ ժամանակակից դատավարագիտության մեջ առավել լայն տարածում է ստացել «տնօրինման տեսությունը», որը զուգորդվում է Մ. Ա. Գուրվիչի «դինամիկ տեսության» գաղափարներով: Վերջիններիս շնորհիվ տնօրինչականության հասկացության մեջ առավել հաճախ ներառվում է ոչ միայն կողմերի հայեցողությամբ իրենց իրավունքները տնօրինելու ազատությունը, այլ նաև իրենց կամահայտությամբ վարույթի զարգացման ու դադարման վրա ազդելու հնարավորությունը:

Համամիտ ենք Ա. Տ. Բոնեռի վերջին աշխատություններից մեկում արտահայտված այն կարծիքին, որ նշված տեսությունները չեն հակասում մեկը մյուսին, ուստի և դրանց միջև հակադրություն լինել չի կարող: Ըստ հեղինակի՝ այդ մոտեցումները տարբեր առումներով ամբողջությամբ ու համակողմանիորեն բնութագրում են տնօրինչականությունը<sup>1</sup>:

*Մեր կողմից հավելենք, որ տնօրինչականության դիտարկումը «տնօրինման» և «դինամիկ» տեսությունների որոշակի երկմիասնության տեսանկյունից մի կողմից թույլ է տալիս վեր հանել տնօրինչականության էությունը՝ այն բնութագրելով որպես օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում դատարանի գործողությունների պայմանավորվածություն գործին մասնակցող անձանց կամահայտությամբ և նախաձեռնությամբ, մյուս կողմից՝ բացահայտել քննարկվող սկզբունքի բովանդակությունը, այսինքն՝ այն իրավունքների շրջանակը, որոնց իրականացումը կարող է ազդել վարույթի շարժի, դրա զարգացման և դադարման վրա:*

<sup>1</sup> Տե՛ս **Боненр А. Т.** Принцип законности в советском гражданском процессе. Учебное пособие. М.: ВЮЗИ, 1989, էջ 18:

## THE MAIN THEORIES ON DISPOSITIVENESS PRINCIPLE FORMED IN XX CENTURY IN THE CONTEXT OF DEVELOPMENT OF ITS MODERN UNDERSTANDING

**Vardush Yesayan**

*Candidate of Legal Sciences, Assistant Professor,  
YSU Chair of Civil Procedure*

---

This article is devoted to the theories established in XX century in civil procedural science, which, undoubtedly, have had important role in formation of the dispositiveness principle. There are several approaches to the dispositiveness principle in civil procedure: according to the 1st theory, it is considered as the right to the parties established by law to freely realize their rights. Pursuant to the 2nd theory, the mentioned principle is recognized as the engine of the civil proceedings. We support the 3rd approach which amounts to the union of the both theories. In order to scrutinize our opinion we have chosen the comparative analysis as a main method.

## ОСНОВНЫЕ ТЕОРИИ В ВОПРОСЕ ФОРМИРОВАНИЯ СОВРЕМЕННОГО ВОСПРИЯТИЯ ПРИНЦИПА ДИСПОЗИТИВНОСТИ, СФОРМИРОВАВШИЕСЯ В XX ВЕКЕ

**Вардуш Есяян**

*Кандидат юридических наук,  
Ассистент кафедры гражданского процессуального права ЕГУ*

---

Статья относится к теориям диспозитивности в гражданском процессуальном праве, сформировавшимся в XX веке, которые, несомненно, сыграли свою роль в формировании современного восприятия теории диспозитивности.

В судопроизводстве отмечаются некоторые подходы к принципам диспозитивности

Согласно первому подходу, принцип диспозитивности дает лицам, участвующим в деле, возможность свободно распоряжаться своим правом, а сторонники второго подхода провозглашают это как движущую силу.

Автор является сторонником третьего подхода, который представляет собой определенный симбиоз двух предыдущих.

Поэтому для обоснования нашей позиции необходимо проанализировать основные теории, относящиеся к принципу диспозитивности в судопроизводстве.

**Բանալի բառեր** - տնօրհնչական, ուսմունք, քաղաքացիական, դատավարություն, տեսություն, հիմք, դիրքորոշում:

**Key words** – *dispositive, doctrine, civil procedure, theory, basis, position.*

**Ключевые слова** – *диспозитивность, учение, гражданский, процесс, теория, основа, позиция.*

## ԱՆՁՆԱԿԱՆ ՋՆՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՁԵՎ

### Տիգրան Խաչիկյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ*

Մաքսային հսկողության իրականացման ձևերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում անձի անձնական զննման ինստիտուտը, որը մաքսային հսկողության բացառիկ, առանձնահատուկ ձև է: Դրա առանձնահատուկ բնույթը պայմանավորված է այն իրողությամբ, որ հիմնականում հենց այս ոլորտում կարող են դրսևորվել մաքսային իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտումները: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, նշված հսկողական կառուցակարգը կիրառելիս անհրաժեշտ է խստորեն ապահովել ընթացակարգային կարգապահություն, որպեսզի չխախտվեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները<sup>1</sup>:

Ակներև է, որ անձնական զննման իրականացումը ենթադրում է անձանց իրավական կարգավիճակի էական սահմանափակումներ, որպիսի իրավիճակը ողջատորեն պահանջում է առավել հստակ և որոշարկված իրավակարգավորում: Ինչպես արդարացիորեն մատնանշում է Դ. Ա. Գազիզովը, քննարկվող կառուցակարգն էապես շոշափում է քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը, ենթադրում է ուժեղ հոգեբանական ներգործություն, ինչը պայմանավորում է դրա իրականացման հստակ իրավակարգավորման անհրաժեշտությունը<sup>2</sup>: Իհարկե ասվածն ամենևին չի նվազեցնում մաքսային հսկողության մյուս ձևերի շրջանակներում ծագող հարաբերությունների կարգավորման գործնական նշանակությունը: Պետության կողմից վարվող մաքսային քաղաքականության արդյունավետ իրականացումը պայմանավորված է մաքսային հսկողության բոլոր բաղադրիչների համակարգված և ներդաշնակ կենսագործմամբ: Պարզապես հաշվի առնելով մաքսային օրենսդրության խախտումների բացահայտման ու կանխարգելման գործում նշված միջացառման բացառիկ կարևորությունը՝ գտնում ենք, որ դրա կարգավորումն ուղղակիորեն պահանջում է ընթացակարգային կարգավորման հստակ ուղենիշներ, մասնավորապես՝ որ Մաքսային միության մաքսային օրենսգրքի (*այսուհետև՝ Միության օրենսգրքը*) 117-րդ հոդվածը, փաստորեն, թույլատրելի է համարում անձնական զննման իրականացում ոչ միայն մաքսային մարմնի ղեկավարի (տեղակալի), այլ նաև նրանց փոխարինող անձանց գրավոր որոշմամբ: Այս տեսակետից արդիականությունը չի կորցրել Բ. Ն. Գաբրիչիձեի այն պնդումը, որ անձնական զննության կիրառումը պայմանավորված է կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների, զենքի և պատմամշակութային արժեքների մաքսանենգության դեմ պայքարի անհրաժեշտությամբ, որոնք

<sup>1</sup> Տե՛ս Գатаулина О. А. Дуалистическая природа личного таможенного досмотра //Вестник Бурятского государственного университета. 2014, № 2, էջ 184. www.elibrary.ru

<sup>2</sup> Տե՛ս Գазизов Д. А. Досмотр, как мера административного принуждения применяемая полицией для противодействия правонарушениям в сфере оборота наркотических средств// Административное право и процесс. 2012, № 2, էջ 50-54:



մեծ մասամբ ձեռք են բերում անդրազգային բնույթ<sup>1</sup>: Անձնական մաքսային զննման բացառիկ բնույթը դրսևորվում է նաև նրանում, որ դրան պետք է դիմել բացառապես այն պարագայում, երբ մաքսային հսկողական այլ ձևերի կիրառմամբ հնարավոր չէ կանխել մաքսային կանոնների խախտումը: Այս իմաստով գտնում ենք, որ որպես ընթացակարգային ուղենիշ համարվող նորմ պետք է օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրվեր նշված դրույթը, ինչը մաքսային մարմնի պաշտոնատար անձի մոտ զգալիորեն կբարձրացներ անձնական զննում իրականացնելու պատասխանատվությունը:

Առհասարակ, անձնական զննման՝ որպես մաքսային հսկողության բաղադրիչի խնդիրների շուրջ արտահայտված մոտեցումները միասնական չեն: Հեղինակների մի խումբ գտնում է, որ անձնական զննումը նպատակ է հետապնդում սուկ հայտնաբերելու իրավախախտման գործիքները կամ առարկաները<sup>2</sup>: Տեսաբանների մեկ այլ խմբի համոզմամբ՝ անձնական զննումն իրականացվում է ոչ միայն հայտնաբերելու, այլ նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի համար նշանակություն ունեցող առարկաներն ու փաստաթղթերն առգրավելու նպատակով<sup>3</sup>:

Մեր համոզմամբ, մաքսային հսկողության բաղադրիչների շրջանակում խնդրո առարկա ինտիտուտի էությունը պարզելու համար անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ՝ ինչ տեղ է այն գրավում վարչաիրավական ներգործության միջոցների շարքում: Ասվածը հիմնավորվում է այն հայտնի իրողության հաշվառմամբ, որ իրավունքի տարբեր ճյուղերում գործող և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացմանը լուրջ սպառնալիք ենթադրող միջոցառումներն իրենց բնույթով և իրավական էությամբ ողջամտորեն պետք է տարբերվեն: Հակառակ դեպքում կստացվի, որ էությամբ նույն կամ գրեթե նույն իրավակարգավորումն ունեցող ինտիտուտը, որը քաղաքացու սուբյեկտիվ ընկալման տիրույթում առաջացնում է նույն փաստական և հոգեբանական դրությունը, գործառում է իրավունքի տարբեր ճյուղերում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածով մասնավորապես նախատեսված են անձնական խուզարկությունը և քննումը՝ որպես քննչական գործողություններ<sup>4</sup>, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով գործում է անձնական զննումը՝ որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոց<sup>5</sup>, իսկ Միության օրենսգրքով՝ նաև որպես մաքսային հսկողության ձև է<sup>6</sup>: Նման պայմաններում գիտագործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում նշված ինտիտուտների հարաբերակցության հարցը:

Այս առումով պետք է համաձայնել Գ. Վ. Մատվիենկոյի այն կարծիքին, որ անձնական զննությունը՝ որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վա-

<sup>1</sup> Տե՛ս Российское таможенное право: учебник для вузов./ Отв. ред.- Б. Н. Габричидзе. М., 1997, էջ 259:

<sup>2</sup> Տե՛ս **Карагодих А. В.** Применение органами внутренних дел мер обеспечения производства по делам об административных правонарушениях. ... канд. юр. наук. М., 2006, էջ 158:

<sup>3</sup> Տե՛ս **Пивоваров Д. В.** Меры обеспечения производства по делам об административных правонарушениях, применяемые сотрудниками полиции //Вестник Кыргызско-Российского славянского университета. 2013, т. 13, № 9, էջեր 54-57:

<sup>4</sup> Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ. ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

<sup>5</sup> Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986թ. ՀՍՍՀԳՍ 1985/23:

<sup>6</sup> Таможенный кодекс Таможенного союза (приложение к Договору о Таможенном кодексе Таможенного союза, принятому Решением Межгосударственного Совета ЕврАзЭС на уровне глав государств от 27.11.2009 N 17):

րույթի ապահովման միջոց, պետք է տարբերել մաքսային հսկողության ձևից այնքանով, որքանով առաջինը պայմանավորված է ոչ իրավաչափ վարքագծի հետ, իսկ երկրորդը հանդես է գալիս որպես վերահսկողական-նախազգուշական միջոց<sup>1</sup>:

Մեր համոզմամբ, անձի մարմնի (հագուստի) հետազոտումն անհրաժեշտ գործիքակազմ է ինչպես քրեական դատավարության ոլորտում, այնպես էլ վարչաիրավական հարաբերություններում: Այն համարժեք գործիք է՝ կանխելու անձի հակաիրավական վարքագիծը և ապահովելու իրավունքի տվյալ ճյուղի խնդիրների կենսագործումը: Բայցևայնպես կարծում ենք, որ վարչաիրավական զննության և անձնական խուզարկության սահմանները պետք է զատորոշվեն կոնկրետ ելակետային կողմնորոշիչներով: Ակներև է, որ անձնական մաքսային զննությունը ոչ անձնական խուզարկություն է, ոչ էլ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի ապահովման միջոց: Այլ կերպ ասած՝ պետք է ուղղակիորեն հստակեցվի, թե ինչ չափորոշիչներով է տարբերվում անձնական զննությունը քրեադատավարական խուզարկությունից:

Փաստորեն, խնդրո առարկա իրավակարգավորումների տարբերակման հիմքում, մեր համոզմամբ, պետք է դրված լիներ քաղաքացու անձնական անձեռնմխելիությանը առավել նվազ չափով միջամտելու գաղափարը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ անձնական մաքսային զննության ընթացակարգը բովանդակային առումով որևէ կերպ չի տարբերվում անձնական խուզարկությունից: Ավելին, դրա համար սահմանված ընթացակարգը ենթադրում է նաև անձի մերկացում և նրա մարմնի մանրագնին հետազոտում: Նման պայմաններում ստացվում է այնպես, որ վարչաիրավական հարաբերություններում անձի անձնական կյանքը ենթարկվում է քրեադատավարական հարաբերություններում նման միջամտությանը համարժեք ներգործության:

Հետևապես գտնում ենք, որ կամ պետք է նախատեսել այլ իրավակարգավորում, որի պարագայում անձի անձնական անձեռնմխելիությանը միջամտելու ծավալն անհամեմատ ավելի փոքր կլինի, կամ պետք է նախատեսել այդպիսի միջամտություն իրականացնելու լրացուցիչ իրավական երաշխիքներ: Օրինակ, Բելառուսի Հանրապետությունում անձնական զննումը բաժանվում է փուլերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացվում է կոնկրետ որոշակի նպատակով և բացառապես նախորդի անարդյունավետ լինելու պարագայում: Այսպես, օրինակ, անձի մարմնի անմիջական հետազոտմանը՝ որպես անձնական զննության հատուկ փուլի, կարելի է դիմել այն պարագայում, երբ անձի մարմնի (հագուստի) ընդհանրական տեսողական դիտարկմամբ հնարավոր չէ հասնել հետապնդվող խնդիրների լուծմանը<sup>2</sup>:

Որպես այդպիսի չափանիշ առաջարկում ենք անձնական մաքսային զննությունը սահմանափակել սոսկ անձի մարմնի տեսողական ընդհանրական հետազոտմամբ, իսկ նշված միջոցն անբավարար համարվելու դեպքում միայն սահմանել անձնական զննության իրականացման առանձին ընթացակարգ՝ լրացուցիչ իրավական երաշխիքներով:

Անձնական զննության մասին որոշում կայացնելու իրավաչափության վավե-

<sup>1</sup> Տե՛ս **Матвиенко Г. В.** Административные процедуры в таможенном праве /под ред. С. В. Запольского. М., 2008, Доступ из справ.-правовой системы «КонсультантПлюс», [www.consultant.ru](http://www.consultant.ru).

<sup>2</sup> Տե՛ս «Անձնական մաքսային զննության մեթոդիկան սահմանելու մասին» հրաման, ընդունվել է Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի նախագահի կողմից 12.07.1997թ, № 227-ОД [www.pravo.levonevsky.org](http://www.pravo.levonevsky.org).

րապայմանները շարադրված են Միության օրենսգրքի 117-րդ հոդվածում: Մասնավորապես, Միության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի զննումը մաքսային հսկողության բացառիկ ձև է, որը իրականացվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի), տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց գրավոր որոշմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մաքսային սահմանով ուղևորվող և մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող ֆիզիկական անձն իր մոտ թաքցնում է մաքսային միության մաքսային օրենսդրության խախտմամբ տեղափոխվող ապրանքներ և դրանք կամավոր չի հանձնում:

Անձնական զննման իրականացումը կարգավորող օրինադրույթների վերլուծությունից բխում է, որ, փաստորեն, որպես մաքսային հսկողության ձև՝ այն իրականացվում է չորս փուլերով.

- անձնական զննության իրականացման մասին որոշման կայացում,
- անձնական զննության իրականացման մասին որոշման իրազեկում,
- անձնական զննության ենթակա օբյեկտի անմիջական հետազոտում,
- անձնական զննության իրականացման մասին ակտի կազմում:

Ընդ որում, անձի մարմնի անմիջական հետազոտման փուլն ինքնին կարող է չիրականացվել, եթե անձնական զննության մասին որոշման մասին իրազեկվելուց հետո զննման ենթարկվող անձը կամավոր տրամադրում է օրենսդրության խախտմամբ տեղափոխվող և իր մոտ թաքցված առարկաները: Հետևապես, նշված փուլն անձնական զննության իրականացման համար ունի ֆակուլտատիվ նշանակություն:

Վկայակոչված իրավադրույթով, որպես անձնական զննության իրականացման իրավաչափության վավերապայման է դիտարկվում «բավարար հիմքերի» առկայությունը, որը, այսուհանդերձ, գործող մաքսային օրենսդրության շրջանակներում չի բացահայտվում: Ստեղծված իրավիճակում ստացվում է այնպես, որ անձնական զննության իրականացումն ամբողջապես վերապահված է մաքսային մարմինների հայեցողական իրավասությանը, որը որևէ որոշակի ուղենիշով սահմանափակված չէ<sup>1</sup>:

Այս տեսակետից պետք է միանշանակորեն համաձայնել ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012թ. ՍԴՈ-1038 որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրված այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ օրենքով այս կամ այն իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ և բավարար հիմքերի սահմանումը (...) հետապնդում է իրավական կարգավորման ոլորտում որոշակիություն և կանխատեսելիություն ապահովելու իրավաչափ նպատակ<sup>2</sup>:

Նման պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում հանգամանորեն հետազոտելու ոչ միայն անձնական զննության իրականացման կարգը, այլ նաև այն կոնկրետ հարցերը, որոնք վերաբերում են անձնական զննման իրականացման հիմքերին և ժամկետներին, որոնք ներպետական օրենսդրությամբ բավարար չափով կանոնակարգված չեն:

Մեր հանգամանք, «բավարար հիմքեր» արտահայտությունն ինքնին չի կարող

<sup>1</sup> Հատկանշական է, որ «բավարար հիմքեր» արտահայտության առարկայացումը խորթ չէ ներպետական օրենսդրությանը: Մասնավորապես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ կոնկրետացվել են «բավարար հիմքեր» բառակապակցության շրջանակները:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012 ՍԴՈ-1038 որոշումը. [www.concourt.am](http://www.concourt.am)

գնահատողական բնույթ կրել և բացարձակ հայեցողական ազատության հիմք լինել: Իրավական կատեգորիան չի կարող իրավակիրառողին վերապահել որևէ կերպ չհիմնավորված հիմունքներով լիազորություն իրականացնելու իրավասություն: Նման մոտեցումն ամբողջապես կխաթարի վարչարարության ելակետային սկզբունքները: Իհարկե հնարավոր չէ սպառիչ թվարկել բոլոր այն հիմքերը, որոնց առկայության պարագայում մաքսային մարմինը կարող է ձեռնամուխ լինել իրականացնելու անձնական զննություն: Բայցևայնպես, դրա չափանիշների առարկայացումը, կարծում ենք, կարող է նպաստել մաքսային հսկողության նշված բաղադրիչի կենսագործման և քաղաքացու իրավունքների ու ազատությունների համակողմանի ապահովման միջև անհրաժեշտ ողջամիտ հարաբերակցության ապահովմանը: Հենց այդ մտահոգությունը հաշվի առնելով՝ առաջարկում ենք օրենսդրորեն առարկայացնել «բավարար հիմքեր» արտահայտությունը՝ դրան շնորհելով առավել կոնկրետ հասկացության բովանդակություն: Մասնավորապես գտնում ենք, որ անձնական զննում իրականացնելու հիմքերի համակցությունը կարող է գնահատվել բավարար հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- *դրա իրականացումը հիմնվում է ռիսկերի կառավարման համակարգի գնահատման վրա,*
- *առկա է ֆիզիկական անձի կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրության խախտմամբ ապրանքներ տեղափոխելու մասին փաստարկված ենթադրություն:*

Ինչ վերաբերում է անձնական զննում իրականացնելու փաստարկված ենթադրության ծագման իրավական հիմքերին, ապա այս պարագայում նույնպես գտնում ենք, որ դրանց շրջանակը նույնպես պետք է կոնկրետացվի: Մաքսային հսկողության նշված կառուցակարգն ակնհայտորեն չի կարող կենսագործվել կամայականորեն, օբյեկտիվ իրողություններից անջատ: Այս առումով գտնում ենք, որ փաստարկված ենթադրությունը կարող է ծագել հետևյալ փաստական հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

*ֆիզիկական անձի կողմից իրավախախտման կամ դրա հիմնավոր կասկածի հատկանիշներ բովանդակող արարքի ենթադրյալ կատարումը,*

*սահմանված կարգով ստացված տեղեկությունը, որը թույլ է տալիս ենթադրելու, որ ֆիզիկական անձը թաքցնում է մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ տեղափոխվող ապրանքներ:*

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև թաքցված ապրանքների կամավոր հանձման իրավական հետևանքների հարցը, որը ներպետական օրենսդրությամբ բավարար պարզորոշությամբ կանոնակարգված չէ: Մասնավորապես կարգավորված չէ այն հարցը, թե ապրանքների կամավոր հանձման մասին պետք է նշվի անձնական զննության ակտի<sup>1</sup> մեջ, թե՞ պետք է կազմվի անձնական զննում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում:

Ընդ որում, խնդիրը կանոնակարգված չէ նաև «Անձի քննման մեթոդիկան» հաստատելու մասին ՀՀ մաքսային վարչության պետի 03.03.1997 թ. թիվ 21 որոշմամբ<sup>1</sup>: Նախ նշված որոշումն ընդունվել է ի կատարումն 27.08.1993 թ. ՀՀ մաքսային օրենսգրքի 34-րդ հոդվածի և չի համապատասխանում անձնական զննության իրականացման գործող պահանջներին<sup>2</sup>: Բացի այդ, նշված որոշման 1-ին հավելվա-

<sup>1</sup> Ընդունվել է 03.03.1997 ուժի մեջ է մտել 29.11.1997 ՀՀԳՏ 1997.11.19/4:

<sup>2</sup> Ընդունվել է 27.08.1993 ուժը կորցրել է 01.01.2001 ՀՀԳԽՏ 1993/15-16:

ծում նշված քննման իրականացման մասին ակտով նախատեսված չէ կամավոր հանձնման փաստի հաստատման մասին որևէ պահանջ<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 147.1-րդ հոդվածն այս իմաստով առավել համակողմանի իրավակարգավորում էր սահմանում: Մասնավորապես, դրա 147.1-րդ հոդվածի 8-րդ մասն ուղղակիորեն ամրագրում էր, որ անձին քննման ենթարկելու ընթացքում հայտնաբերված կամ կամավոր հանձնված ապրանքների, առարկաների կամ իրերի նկարագրության, փաթեթավորման և կնքման համար կազմվում է առանձին արձանագրություն, որը կցվում է անձին քննման ենթարկելու մասին արձանագրությանը<sup>2</sup>:

Իրավաբանական գրականության մեջ նշված հարցի շուրջ արտահայտված կարծիքներից մեկի համաձայն՝ թաքցված ապրանքների կամավոր հանձնման դեպքում պետք է կայացվի անձնական մաքսային զննում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում, եթե իհարկե ապրանքների ոչ ամբողջական հանձնման մասին ենթադրություն ծագելու բավարար հիմքեր չկան<sup>3</sup>:

Մեր համոզմամբ, անձի մարմնի անմիջական հետազոտման փուլը կարող է չիրականացվել այն պարագայում, երբ անձնական զննման ենթարկվող անձը կամավոր հանձնում է իր մոտ թաքցրած առարկաները: Հատկանշական է, որ ընթացակարգային առումով ապրանքների կամավոր հանձնման փաստն ամբողջովին ներառվում է անձնական զննության կառուցակարգի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ թաքցված ապրանքների կամովին հանձնումն ամենևին չի նշանակում, որ անձնական զննում չի իրականացվում: Պարզապես այս պարագայում անձնական մաքսային զննումն ավարտվում է ապրանքները կամովին հանձնելով, որպիսի փաստը, բնականաբար, ենթակա է առանձին իրավական ձևակերպման: Հետևապես, նշված փաստն ինքնին պետք է արձանագրվի անձնական մաքսային զննության մասին ակտով: Ընդ որում, ասվածն ունի ոչ միայն արձանագրողական արժեք, այլ նաև գործնական նշանակություն: Խնդիրն այն է, որ մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունների իրավաչափությունը վիճարկելիս նշված ակտն ունի ծանրակշիռ ապացուցողական նշանակություն: Դրանում ամրագրված են անձնական զննության իրականացման համար իրավական նշանակություն ունեցող ցանկացած հանգամանքի մասին տեղեկություններ, որոնք, բնականաբար, ունեն առաջնային նշանակություն խնդրո առարկա միջոցառման իրականացման օրինականությունը գնահատելիս:

Հատկանշական է, որ խնդրի՝ մեր կողմից առաջարկվող լուծումը համահունչ է նաև Մաքսային միության շրջանակներում գործող «Մաքսային փաստաթղթերի ձևերի մասին» որոշման պահանջներին<sup>4</sup>, որով ուղղակիորեն նախանշվել է, որ անձնական մաքսային զննության ակտի մեջ անպայմանորեն ներառվում են ապրանքների

<sup>1</sup> Հարկ է նկատի ունենալ, որ նշված հարաբերությունները կարգավորող «Անձի քննման մեթոդիկան» հաստատելու մասին ՀՀ Կառավարության 05.02.2001 N 81 որոշումն ուժը կորցրել է 28.06.2007, ՀՀՊՏ 2001.02.23/5(137):

<sup>2</sup> ՀՀ մաքսային օրենսգրքում նշված փոփոխությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով (ընդունվել է 26.02.2007, ուժի մեջ է մտել 21.04.2007, ՀՀՊՏ 2007.04.11/19(543):

<sup>3</sup> Տե՛ս Григорян Т. В. Реализация принципа гуманизма в исключительной форме таможенного контроля// Вестник Забайкальского государственного университета. 2014, № 7, էջեր 137-147.

<sup>4</sup> Տե՛ս Решение Комиссии Таможенного союза от 20.05.2010 № 260 (ред. от 18.10.2014). О формах таможенных документов/ Таможенный вестник от августа 2010, № 15.

կամավոր հանձման փաստը և ապրանքների ցանկը<sup>1</sup>: Հետևապես գտնում ենք, որ ապրանքների կամավոր հանձնման դեպքում բացակայում է անձնական զննում իրականացնելուց հրաժարվելու անհրաժեշտությունը:

Միության օրենսգրքով կանոնակարգված չէ նաև անձի կողմից անձնական մաքսային զննության ակտը չստորագրելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողությունների հաջորդականությունը: Գտնում ենք, որ այս պարագայում նույնպես պետք է նախատեսված լիներ առավել որոշակի իրավական ընթացակարգ: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ ամրագրել մաքսային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից անձնական զննության ակտը չստորագրելու մասին համապատասխան գրառում կատարելը, որը կարող է փաստվել ընթերակաների ստորագրությամբ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև անձնական մաքսային զննության օբյեկտների հարցը: Օրենսդրական ձևակերպումից ուղղակիորեն բխում է, որ անձնական մաքսային զննության օբյեկտ է համարվում բացառապես ապրանքը: Մինչդեռ, մեր համոզմամբ, անհրաժեշտ է ընդլայնել մաքսային զննության օբյեկտների շրջանակը: Այսպես, խնդիրն այն է, որ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց հակաիրավական գործունեությունը կարող է դրսևորվել նաև փաստաթղթերի ապօրինի տեղափոխման ձևով: Մինչդեռ, Միության մաքսային օրենսդրությամբ փաստաթղթերը ներառված չեն «ապրանք» եզրույթի հասկացության բովանդակության մեջ: Թեպետ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup> «ապրանք» են համարվում Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այսուհանդերձ, կարծում ենք, օրենսգրքով նպատակահարմար կլիներ ուղղակիորեն մատնանշել փաստաթուղթը որպես անձնական մաքսային զննության առարկա: Առավել ևս, ասվածը հիմնավորվում է նրանով, որ Միության օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով տարբերակված մոտեցում է դրսևորվել մաքսային հսկողության օբյեկտների սահմանման հարցում՝ առանձին մատնանշելով նաև ապրանքը, տրանսպորտային միջոցը, ինչպես նաև փաստաթուղթը: Հետևապես գտնում ենք, որ անհրաժեշտ է անձնական մաքսային զննության իրականացումը թույլատրելի համարել նաև օրենքով արգելված փաստաթղթերի ապօրինի տեղափոխման պարագայում:

Այսպիսով գտնում ենք, որ պետք է օրենսդրորեն կատարելագործել անձնական զննության կառուցակարգի կիրառումը՝ համապատասխանեցնելով այն խնդրի իրավակարգավորման սահմանադրաիրավական հիմունքներին: Ասվածը հիմնավորվում է հատկապես նշված հսկողական միջոցառման առանձնահատուկ բնույթով և իրականացման բարդությամբ, ինչը, բնականաբար, պահանջում է առավել հստակ և որոշակի իրավակարգավորում:

<sup>1</sup> Ուշագրավ է, որ նշված որոշմամբ նախատեսված անձնական մաքսային զննության արձանագրության մեջ չի ամրագրվել զննության սկզբի և ավարտի մասին տեղեկություններ ներառելու մասին պահանջ, ինչը, գտնում ենք, նպատակահարմար չէ:

<sup>2</sup> Ընդունվել է 17.12.2014թ., ուժի մեջ է մտել 02.02.2015թ. ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

## ЛИЧНЫЙ ТАМОЖЕННЫЙ ДОСМОТР КАК ОСОБАЯ ФОРМА ТАМОЖЕННОГО НАДЗОРА

Тигран Хачикян

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

---

Статья относится к сущности и правовой природе личного таможенного досмотра и его принципам. В статье проанализировано содержание вышеуказанного института, выявлены типичные качества, присущие ему. Статья отмечается тем, что предложения и выводы сделаны в разрезе «Таможенного законодательства Таможенного Союза» и Закона РА «О таможенном регулировании». Учитывая необходимость соотношения связи субъект–функция–институт, в статье вносятся предложения по совершенствованию правового регулирования вышеуказанного института.

## PERSONAL CUSTOMS INSPECTION AS A SPECIAL FORM OF CUSTOMS CONTROL

Tigran Khachikyan

*Post-graduate student of the YSU Chair of Civil Procedure*

---

The article refers to the nature of personal customs inspection, as well as the principles of implementation.

The content of the abovementioned institute has been analysed in the article, and also some distinctive features have been discovered concerning to it. The article is also noteworthy as the recommendations and conclusions are made in the context of the legal regulations of the Customs Code of the Customs Union and the RA Law on customs regulations. Taking into account the necessity of ensuring harmony of subject-function-institute interconnection, some suggestions have been made in the article concerning to the mentioned institute.

**Բանալի բառեր** – մաքսային հսկողություն, անձնական մաքսային զննություն, վարչական հարկադրանք, մաքսային զննության կիրառման հիմք, մաքսային կարգավորում, ռիսկ:

**Ключевые слова** – таможенный надзор, личный таможенный досмотр, административное принуждение, основания применения таможенного досмотра, таможенное регулирование, риск.

**Key words** – customs control, personal customs inspection, administrative coercion, ground for applying customs inspection, customs regulation, risk.

## ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

### Վերոգ Իսրայելյան

*իրավաբանական գիտությունների թեկնածու,*

*Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական  
դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ*

Ջանգվածային լրատվության միջոցները կարող են անգնահատելի դերակատարություն ունենալ հանցագործությունների կանխարգելման կազմակերպման գործընթացում: Խնդիրն այն է, որ ջանգվածային լրատվության միջոցները հասարակական գործընթացների կառավարման կարևոր գործիքներից են: Մեծ է դրանց նշանակությունը բնակչության իրավական դաստիարակության գործում: Մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը ներգործում են մարդու գիտակցության հուզական, ռացիոնալ, կամային կողմերի վրա և դրանով հանդերձ կողմնորոշում մարդուն սոցիալական գործունեության մեջ, ներագդում նրա վարքագծի վրա<sup>1</sup>: Ջանգվածային լրատվության միջոցների բուռն զարգացման ժամանակակից պայմաններում իրապես մեծացել են տեղեկատվական-հոգեբանական ներգործության հնարավորություններն ու մեթոդները: Ջանգվածային լրատվության միջոցների ազդեցության հիմքում ընկած են կարևոր հոգեբանական մեխանիզմներ՝ սոցիալական նույնացում, սոցիալական առասպելականացում և հաղորդվող տեղեկությունների հատուկ հուզական-զգայական համատեքստի ձևավորման ճանապարհով՝ ներշնչում: Իրավունքի և բարոյականության տեսանկյունից դրական տեղեկատվության պարբերական հաղորդումը, անշուշտ, խթանում է իրավահպատակ վարքի ձևավորմանը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից ջանգվածային լրատվության միջոցներով մատուցվող տեղեկատվությունը հասարակության մեջ քրեածին իրավիճակի և դրա անդամների պատշաճ իրավական վարքագծի մասին հաճախ ոչ միայն չի ձևավորում բնակչության իրավագիտակցություն, այլև ձևախեղում է այն, իսկ առանձին դեպքերում նպաստում հանցագործությունների կատարման դրդապատճառների ձևավորմանը<sup>2</sup>:

Ակնհայտ է, որ վերջին ժամանակաշրջանում լայն տարածում են ստացել այն ֆիլմերն ու հաղորդումները, որոնք լի են բռնության տեսարաններով: Հոգեբանական հետազոտությունների արդյունքները հավաստում են, որ ուրիշների ագրեսիվ վարքին հետևող մարդու սեփական ագրեսիվությունն ավելանում է: Դա հատկապես

<sup>1</sup> Տե՛ս **Кержнер М. Ю.** Профилактика правонарушений средствами массовой информации. ТВШ МВД СССР, Ташкент, 1975, էջ»н 8-12:

<sup>2</sup> Տե՛ս Энциклопедия юридической психологии. Под общ. ред. А. М. Столяренко. М.: юнити-дана, 2003, էջ 52:



բնորոշ է աճող սերնդին, քանի որ այն, մեծահասակների համեմատ, ավելի ներշնչվող է և ենթակա տարաբնույթ ազդեցությունների: Չանգվածային լրատվության միջոցներով բռնություն դիտելն ըստ էության թույլ է տալիս ազդեսիվ երեխաներին դրսևորել իրենց ազդեսիան: Սակայն նույնիսկ ի սկզբանե ազդեսիայի չհակված երեխաները տևական ժամանակ դաժանություն և բռնություն պարունակող ֆիլմեր դիտելիս կարող են դառնալ դաժան և ազդեսիվ: Չանգվածային լրատվության միջոցների ազդեցությունն ավելի կործանարար է, երբ բռնությունն ու սեքսը ներկայացվում են միասնության մեջ: Անթաքույց սեռական բնույթի նյութ դիտելը ինքնին անվնաս է, սակայն սեքսի ու բռնության համադրությունը հանգեցնում է բազում անցանկալի հետևանքների<sup>1</sup>:

Հատկապես անհրաժեշտ է ընդգծել համացանցի բացասական ազդեցությունը, որի բազմաքանակ պոռնոկայքերից հաճախ կարող է օգտվել ցանկացած անձ՝ առանց տարիքային սահմանափակման: Պոռնկագրական նյութերի օգտագործումը կոնկրետ անհատի կողմից, սեռական գրգռվածությունից բացի, կարող է նպաստել նաև դիրքորոշումների, արժեքների ու վարքագծի փոփոխությունների: Պոռնոգրաֆիա դիտելու ազդեցությամբ արժեքների ու դիրքորոշումների փոփոխությունները բացատրվում է դեսենսիբիլիզացիայի մեխանիզմով՝ արժեքային համակարգի աստիճանական փոփոխությամբ, երբ նախկինում անընդունելի սեռական վարքի ձևերը դառնում են սովորական՝ սեռական բնույթի տեղեկատվության պարբերական ներգործության հետևանքով<sup>2</sup>:

Վերը նշված բացասական ներգործությունների կանխարգելման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

1. ուժեղացնել վերահսկողությունը գրականության, հեռուստա-տեսաֆիլմերի, հեռուստահաղորդումների բովանդակության նկատմամբ, որպեսզի թույլ չտրվի բռնության, դաժանության նկատմամբ համակրանքի, սեռական բարձիթողիության տարածումը,

2. մշտապես տեսադաշտում պահել պարբերական մամուլի և տեսասկավառակների վաճառքի կետերի գործունեությունը, գործուն միջոցներ ձեռնարկել անչափահասներին էրոտիկ բնույթի գրականության, ամսագրերի, տեսասկավառակների վաճառքը բացառելու ուղղությամբ,

3. բացառել ուսումնական, դաստիարակչական, մշակութային հաստատություններում, գրադարաններում, ինտերնետ ակումբներում և համակարգչային ծառայություններ մատուցող այլ հաստատություններում պոռնկագրական բնույթի նյութեր պարունակող ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը՝ վարչական պատասխանատվություն սահմանելով նման ռեսուրսներից օգտվելը թույլատրելու համար: Այդ նպատակով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի<sup>3</sup> (ընդունված 1985 թվականի դեկտեմբերի 6-ին) 14-րդ գլխում («Կառավարման սահմանված կարգի դեմ ունեցող վարչական իրավա-

<sup>1</sup> Տե՛ս Արոնսոն Յ., Միլսոն Թ., Յեյկերտ Բ. Социальная психология. Психологические законы поведения человека в социуме. СПб.: Прайм-Еврознак, 2002, էջեր 403-408:

<sup>2</sup> Տե՛ս Իսաև Կ. Ա. Сексуальные преступления как объект криминологии. СПб.: изд. П. Асланава «Юридический центр Пресс», 2007, էջեր 343-344:

<sup>3</sup> Տե՛ս ՀՍՀԳՍ 1985/23:

խախտումներ») առաջարկվում է նախատեսել հողված հետևյալ բովանդակությամբ՝

«Հողված 189<sup>17</sup> Պոռնկագրական բնույթի նյութեր պարունակող ռեսուրսներից օգտվելը թույլատրելի

Ուսումնական, դաստիարակչական, մշակութային հաստատություններում, ինտերնետ ակումբներում և համակարգչային ծառայություններ մատուցող այլ հաստատություններում պոռնկագրական բնույթի նյութեր պարունակող ռեսուրսներից օգտվելը թույլատրելի՝

առաջացնում է ...:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժ մշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է ... »:

Ձանգվածային լրատվության միջոցների տեղեկատվական հնարավորությունների օգտագործումն անկասկած արդյունավետ կլինի հանցավորության կանխարգելման աշխատանքները կառուցելիս, քանզի բնակչության վրա ներգործության միջոցներից ոչ մեկը չի կարող համեմատվել զանգվածային լրատվության միջոցների հետ՝ բնակչության միաժամանակյա ներգրավվման ծավալներով: Ուստի անհրաժեշտ է ակտիվացնել զանգվածային լրատվության միջոցներով հայրենասիրական, բարոյագիտական և այլ դրական կողմնորոշման թեմատիկայով դաստիարակչական բնույթի նյութերի տարածումը: Դա կնպաստի հասարակության մեջ բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը, բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, համապատասխան հասարակական կարծիքի ձևավորմանը: Հասարակական կարծիքը մարդկանց համատեղ դատողությունն է հասարակական կյանքի որևէ հարցի վերաբերյալ: Այն կարող է դրսևորվել և՛ հավանության կամ դատապարտման, և՛ ցանկության կամ պահանջի ձևով<sup>1</sup>: Ձանգվածային լրատվության միջոցներով հնարավոր է հանցավորության կանխարգելման և դրա սուբյեկտների նկատմամբ դրական հասարակական կարծիքի ձևավորումը: Ուղղորդելով հասարակական կարծիքը, դաստիարակելով իրավագիտակցությունը՝ զանգվածային լրատվության միջոցները միաժամանակ հանդես են գալիս որպես հասարակական կարծիքի և իրավագիտակցության արտացոլում: Հասարակական կարծիքի նպատակաուղղված ձևավորումը նպաստում է հանցագործությունների կանխարգելմանը: Հայտնի է, որ հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման, հանցավորներին քրեական պատասխանատվության ենթարկելով ապահովվում է պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Հանցանքների բացահայտումը դրանց պատճառների և պայմանների հայտնաբերման ու վերացման անհրաժեշտ պայմանն է<sup>2</sup>:

Անկասկած արդյունավետ կլինի զանգվածային լրատվության միջոցների հնարավորությունների օգտագործումը հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման գործընթացում, քանի որ որոշ դեպքերում հանցագործությունների կատարումը հնարավոր է լինում տուժողների իրավական լուսավորության բացակայության կամ թերությունների հետևանքով: Վիկտիմոլոգիական կանխարգելման

<sup>1</sup> Տե՛ս **Саркисова Э. А.** Общественное мнение в борьбе с преступностью. Минск, изд. «Белорусь», 1975, էջ 75:

<sup>2</sup> Տե՛ս **Кержнер М. Ю.**, նշված աշխ., էջեր 26-27:

ընթացքում դրական արդյունքի կարելի է հասնել բնակչության և հատկապես դրա այն խմբերի հետ բացատրական աշխատանքով, որոնք առանձնանում են բարձր վիկտիմայնությամբ: Այս առումով պետք է ակտիվորեն օգտագործել ռադիո- և հեռուստահաղորդումները, պարբերական մամուլը, համացանցը, տարածել գիտելիքներ այն հանցագործությունների կատարման եղանակների մասին, որոնք հաշվարկված են տուժողների անշրջահայացության և չարդարացված վստահության դրսևորման վրա: Հանդես գալով դասախոսություններով, զրույցներով՝ իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է ուշադրություն դարձնեն վիկտիմային բնույթի գործոնների վրա, առաջարկեն լինել ավելի զգոն, պահպանել անվտանգության կանոնները, ավելի քննադատաբար վերաբերվել սեփական և այլ անձանց արարքներին<sup>1</sup>: Բացի այդ, զանգվածային լրատվության միջոցներով կարելի է քաղաքացիներին տեղեկացնել կոնկրետ տարածքում հանցագործությունների կատարման փաստերի, հանցագործների տիպիկ գործողությունների մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես պետք է վարվել հանցագործի հետ հանդիպելու կամ քրեածին իրավիճակում հայտնվելու պարագայում<sup>2</sup>:

## ИСПОЛЬЗОВАНИЕ ВОЗМОЖНОСТЕЙ СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ В ПРОЦЕССЕ ПРЕДОТВРАЩЕНИЯ ПРЕСТУПНОСТИ

**Геворг Израелян**

*Кандидат юридических наук,*

*Начальник кафедры гражданского права и гражданского  
процесса факультета правоведения академии Образовательного  
комплекса полиции Республики Армения, подполковник полиции*

Статья посвящена роли средств массовой информации в процессе организации предотвращения преступности. В частности, автор отмечает, что передача средствами массовой информации позитивной с точки зрения морали и права информации может способствовать образованию правомерного поведения. Однако СМИ могут иметь и отрицательное воздействие. Так, информация часто передаваемая современными СМИ не только не образует необходимого правосознания, но и искажает его, а иногда способствует формированию мотива преступлений. Исходя из вышеупомянутого, автор предлагает средства по предотвращению отрицательного влияния СМИ и пути использования возможностей СМИ в организации предотвращения преступлений.

<sup>1</sup> Տե՛ս Կրիմինոլոգիա. Սուբ ըրեդ. Մալկո՜ւա Յ. Ը. Մ.: Յուստիցիոֆորմ, 2006, էջ 189:

<sup>2</sup> Տե՛ս Կրիմինոլոգիա. Սուբ ըրեդ. Ըոլգո՜ւոյ Ա.Ի. Մ., իձդ.գրոյքա ինֆրա.մ-նորմա, 1997, էջ 381:

## USE OF MASS MEDIA IN THE COURSE OF CRIME PREVENTION

**Gevorg Israyelyan**

*Candidate of Legal Sciences*

*Head of the Department of Civil Law and Civil Procedure*

*Law Faculty of the Academy of the Police Educational Complex  
of the Republic of Armenia, Police Lieutenant Colonel*

The article is devoted to the role of mass media in organization of crime prevention.

In particular, the author notes that transfer of mass media from a positive glance of morality and law information may boost formation of lawful behavior.

However, mass media may have negative impact as well.

So, information which is often transmitted via modern mass media not only fails to form necessary sense of justice, but also distorts it and sometimes contributes to the formation of a motive for crime.

On the assumption of the above mentioned, the author offers means on prevention of mass media negative influence and ways of using mass media opportunities in organization of crime prevention.

**Բանալի բառեր** – զանգվածային լրատվության միջոցներ, համացանց, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, իրավական դաստիարակություն, իրավագիտակցություն, հասարակական կարծիք, հանցավորության կանխարգելում:

**Ключевые слова** – средства массовой информации, интернет, пресса, радио, телевидение, правовое воспитание, правосознание, общественное мнение, предотвращение преступности.

**Key words** – mass media, Internet, press, radio, television, legal education, sense of justice, public opinion, crime prevention.

## ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

### Գոռ Միրզոյան

*Երևանի պետական համալսարանի  
քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Պետությունների խաղաղ գոյակցության պայմաններում առանձնահատուկ դերակատարություն ունի տարբեր հարցերի կապակցությամբ նրանց համագործակցությունը: Ավելին, ներկայումս բավարար հիմքեր կան այնպիսի, որ առանց այդ համագործակցության հնարավոր չէ ժամանակակից պետությունների թե՛ նորմալ կենսագործունեությունը և թե՛ առաջընթաց զարգացումը:

Հանցավորության դեմ պայքարը, որն ընդհանուր առմամբ ներպետական խնդիր է, երբեմն նույնպես պահանջում է տարբեր պետությունների համագործակցություն: Վերջինիս անհրաժեշտությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հաճախ կարիք է լինում համատեղ ջանքերով հակազդելու հանցավոր այնպիսի դրսևորումների, որոնք վտանգում են ոչ միայն ազգային, այլև միջազգային իրավակարգը: Դրանց շարքին է դասվում նաև մաքսանենգությունը, որը զգալի վնաս է պատճառում միջազգային տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացմանը, ինչն էլ էապես խախտում է կոնկրետ երկրների պետական ու տնտեսական ինքնիշխանությունը:

Մաքսանենգությունը՝ որպես հանրորեն վտանգավոր երևույթ, մարդկությանը հայտնի է շատ վաղուց՝ դեռևս Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակներից: Այդ երևույթի առաջացումը պայմանավորված է մաքսային տուրքերի ի հայտ գալով, որոնք սահմանվում էին նշված պետությունների կողմից՝ իրենց տնտեսական շահերը պաշտպանելու նպատակով: Դեռևս այդ ժամանակաշրջանում վերոհիշյալ տուրքերի բարձրացումը հանգեցնում էր ներմուծվող ապրանքների գների աճի, ինչով պայմանավորված՝ մաքսանենգ ճանապարհով անհամեմատ ավելի ցածր գներով շուկա մուտք էին գործում բազմաթիվ ապրանքներ: Այդ առումով ընդունված է համարել, որ մաքսանենգությունն ի հայտ է եկել հենց նշված ժամանակաշրջանում: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ այն՝ որպես համապատասխան իրավանորմերով արգելված իրավախախտում, սկսել են նախատեսել շատ ավելի ուշ՝ միայն XIV-XVI դարերում, երբ միջազգային առևտրի զարգացման արդյունքում ապրանքների անխոչընդոտ ներմուծումը գնահատվեց որպես համապատասխան պետությունների տնտեսության զարգացման լուրջ սպառնալիք: Հենց այդ ժամանակաշրջանում պետական սահմանով ապրանքների տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվեցին առաջին մաքսատները<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Василенко Е. В.** Нормативно-правовые основы сотрудничества государств по борьбе с контрабандой // Ученые записки Санкт-Петербургского филиала Российской таможенной академии, 2013, № 1, էջեր 108-109:

Պետությունների միջև առևտրի հետագա բուռն զարգացումը, դրանով պայմանավորված՝ մաքսանենգության աշխարհագրության ու մաքսանենգ եղանակով տեղափոխվող ապրանքատեսականու ընդլայնումը, ինչպես նաև իրավախախտների միջազգային կապերի ձևավորումն ու խորացումը հանգեցրին նրան, որ 19-20-րդ դարերում արդեն բազմաթիվ երկրներ ստիպված եղան ներպետական առավել հստակ օրենսդրական կարգավորման ենթարկել մաքսային հարցերը՝ այդ թվում բավականին խիստ վարչական և քրեական սանկցիաներ սահմանելով մաքսանենգության համար: Միաժամանակ մի շարք պետություններ անհրաժեշտ համարեցին դրա դեմ նաև միջազգային մակարդակում պայքարելը՝ երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցով: Ներկայումս կարելի է առանձնացնել նման համագործակցության հետևյալ մակարդակները՝ 1) բազմակողմ (ընդհանուր առմամբ միջազգային), 2) տարածաշրջանային (աշխարհագրական մեկ տարածաշրջանում տեղակայված պետությունների միջև) և 3) երկկողմ (կոնկրետ պետությունների միջև)<sup>1</sup>:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում միջազգային քրեական իրավունքի տեսության մեջ առկա այն դրույթների պարզաբանումը, որոնց համաձայն՝ առանձնացվում են հետևյալ երկու բնույթի հանցավոր դրսևորումները՝ 1) միջազգային հանցագործությունները և 2) միջազգային բնույթի հանցագործությունները: Մասնավորապես, միջազգային հանցագործություններ են համարվում միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի՝ մարդկային քաղաքակրթության համար առանձնապես վտանգավոր այն խախտումները, որոնք հիմնարար նշանակություն ունեն խաղաղության ապահովման, անձի և միջազգային հանրության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանության համար: Սրանց թվին են դասվում ագրեսիվ պատերազմ պլանավորելը, նախապատրաստելը, սանձազերծելը կամ վարելը, ցեղասպանությունը և այլն: Մինչդեռ միջազգային բնույթի հանցագործությունները տարբերվում են վերը նշվածներից ոտնձգության օբյեկտով և հանրային վտանգավորության աստիճանով: Այդպիսիք են համարվում միջազգային պայմանագրով նախատեսված հանցավոր այն արարքները, որոնք չեն դասվում խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների թվին, բայց ոտնձգում են պետությունների միջև նորմալ կայուն հարաբերությունների դեմ և վնաս են պատճառում տարբեր ոլորտներում (տնտեսական, սոցիալ-մշակութային, գույքային և այլն) նրանց միջև խաղաղ համագործակցությանը, ինչպես նաև անձանց ու կազմակերպություններին, և որոնք պատժելի են կամ միջազգային պայմանագրի, կամ դրա հիման վրա ընդունված ներպետական քրեական օրենսդրության նորմերին համապատասխան<sup>2</sup>:

Այլ կերպ ասած՝ միջազգային բնույթի հանցագործությունները ոտնձգում են ներպետական, ազգային իրավակարգի դեմ՝ միևնույն ժամանակ վտանգելով այլ պետությունների կամ միջազգային հանրության շահերը: Մասնագիտական գրականության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ դրանք կարելի է դասել, այսպես կոչված, ընդհանուր քրեական այն հանցագործությունների շարքին, որոնք «բարդացված են օտարերկրյա տարրով»: Այդպիսի հանցագործություններ են համարվում ահաբեկչությունը, պատանդ վերցնելը, օդանավ, նավ կամ երկաթուղային շարժա-

<sup>1</sup> Տե՛ս **Кравцов Р. В., Лисаускайте В. В.** Контрабанда в международном праве // Сибирский юридический вестник / Вопросы уголовного права, 2006, № 3, էջեր 45-46:

<sup>2</sup> Международное уголовное право. М., 1995, էջ 116:

կազմ փախցնելը, թմրանյութերի, զենքի ապօրինի շրջանառությունը, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը), մարդկանց թրաֆիքինգը և այլն<sup>1</sup>:

Մաքսանենգությունը ևս ընդունված է դասել միջազգային բնույթի հանցագործությունների թվին: Այն լուրջ սպառնալիք է ոչ միայն առանձին կամ միաժամանակ մի քանի պետությունների, այլև միջազգային ողջ հանրության տնտեսական ու հասարակական անվտանգության համար: Ավելին, մաքսանենգության տարածումը նպաստավոր պայմաններ է ստեղծում միջազգային ահաբեկչության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության, կեղծ փողերի և վճարային այլ միջոցների տարածման և այլ ծանր հանցագործությունների համար<sup>2</sup>:

Այդ առումով պատահական չէ, որ թմրամիջոցներն ու հոգեմետ նյութերն ամբողջ աշխարհով ապօրինի տեղափոխվում են հենց մաքսանենգ ճանապարհով: Դրանց նման շարժը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1) թմրանյութերի որոշ տեսակներ արտադրվում են բույսերից, որոնք աճում են աշխարհի միայն առանձին տարածաշրջաններում,

2) թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող վերազգային կազմակերպված հանցավոր խմբերն իրականացրել են աշխատանքի բաժանում և իրար միջև բաշխել են դրանց որոշակի տեսակների արտադրությունը: Մասնավորապես, ափիոնի և հերոինի հիմնական արտադրողներն ու տարածողները, այսպես կոչված, «Ոսկե կիսալուսնի» երկրներն են (Աֆղանստանը, Պակիստանը և Իրանը), կոկաինինը՝ «Դժոխային եռանկյունու» երկրները (Պերուն, Բոլիվիան և Կոլումբիան), սինթետիկ թմրանյութերի հիմնական արտադրողներն ու տարածողները եվրոպական երկրներն են (Նիդերլանդները, Լեհաստանը և Գերմանիան)<sup>3</sup>:

Այդ իսկ պատճառով մաքսանենգության հիմնախնդիրները վաղուց դուրս են եկել ներպետական շրջանակներից և տեղափոխվել միջազգային մակարդակ: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ ներկայումս գոյություն չունի այդ երևույթի դեմ պայքարին վերաբերող առանձին համընդհանուր միջազգային իրավական փաստաթուղթ: Այդ պայքարին առնչվող իրավակարգավորումներն արտացոլված են միջազգային տարբեր պայմանագրերում, որոնք կապված են թմրանյութերի, զենքի, մշակութային արժեքների, կեղծ դրամական միջոցների, պոռնկագրական բնույթի նյութերի, ալկոհոլային արտադրանքի և մի շարք այլ ապրանքների, առարկաների ու նյութերի ապօրինի ներմուծման կամ արտահանման հիմնախնդիրների հետ: Այսինքն, մաքսանենգությունը դիտարկվում է որպես վերոհիշյալ առարկաների ապօրինի շրջանառության բաղկացուցիչ մաս<sup>4</sup>:

Մասնավորապես, ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ միջազգային փաստաթղթեր (կոնվենցիաներ, պայմանագրեր, համաձայնագրեր, հռչակագրեր), որոնք

<sup>1</sup> Տե՛ս **Սանով Վ. Ս.** Международное уголовное право: Учебное пособие. М., 1997, էջ 68:

<sup>2</sup> Տե՛ս **Տոգոմոնով Դ. Կ.** Международно-правовые основания криминализации контрабанды в национальном законодательстве // Научные проблемы гуманитарных исследований. Выпуск 3, 2012, էջեր 168-169:

<sup>3</sup> Տե՛ս **Մաշկեվիչ Ի. Մ., Յարիպով Զ. Ս.** Наркотики в России и в мире: криминологические очерки. М., 2009, էջեր 113-115, **Սրոխորովա Մ. Լ.** Наркотики: уголовно-правовое и криминологическое исследование. СПб., 2002, էջեր 31-32:

<sup>4</sup> Տե՛ս **Րոմաշև Կ. Ս.** Международное правоохранительное право. М., 2010, էջ 215:

կանոնակարգում են այդ պայքարին առնչվող հարցերը: Ընդ որում, միջազգային-իրավական վերոհիշյալ ակտերի և տարբեր երկրների ներպետական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու մաքսանենգության որոշակի տարատեսակները, ինչպես նաև վեր հանելու տվյալ հանցագործության դեմ պայքարի գործում միջպետական համագործակցության դրական և բացասական կողմերը:

Այսպես, միջազգային իրավունքին հայտնի է ռազմական մաքսանենգության հասկացությունը, որը նախատեսված է պատերազմ վարելու ավանդույթներն ու օրենքները կանոնակարգող միջազգային մի շարք փաստաթղթերում: Դրանց շարքում նախ և առաջ պետք է նշել 1856 թ. ապրիլի 4-ի «Շովային պատերազմի մասին» և 1909 թ. փետրվարի 26-ի «Շովային պատերազմի իրավունքի մասին» հռչակագրերը<sup>1</sup>, որոնց հողվածներում սահմանված են այն առարկաների և նյութերի ցանկերը, որոնք ծովի վրա ընթացող պատերազմի ժամանակահատվածում տեղափոխելը համարվում է մաքսանենգություն: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը թե՛ բացառապես ռազմական (զենք, ռազմամթերք, զրահատեխնիկա և այլն) և թե՛ այնպիսի «երկակի նշանակության» առարկաների ու նյութերի մասին է, որոնք հավասարապես կարող են օգտագործվել ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական նպատակներով (սննդամթերք, վառելանյութ, ոչ ռազմական տրանսպորտային միջոց և այլն)<sup>2</sup>:

Հետագայում 1928 թվականին, ընդունվեց «Շովային չեզոքության մասին» կոնվենցիան, որի համաձայն՝ չեզոք պետություններին արգելվում է հակամարտող կողմերին մատակարարել ռազմական նավեր, զենք, ռազմամթերք և այլն: Բացի այդ, նշված կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ չեզոք պետությունների առևտրային նավերով այն առարկաների և նյութերի տեղափոխումը, որոնք ծառայում են կամ կարող են ծառայել ռազմական նպատակներով, համարվում է մաքսանենգություն, և հակամարտող կողմերը դրանք կարող են առգրավել<sup>3</sup>:

Հետագայում ընդունվեցին նաև զինված հակամարտությունների ոլորտը կարգավորող միջազգային իրավական այլ ակտեր, որոնցով արդեն առավել հստակեցվեց մաքսանենգության հասկացությունը: Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սան Ռեմոյի 1994 թ. հունիսի 12-ի՝ «Ծովի վրա զինված հակամարտությունների կապակցությամբ կիրառվող միջազգային իրավունքի վերաբերյալ» Հանձնարարականները: Տվյալ փաստաթղթի դրույթների համաձայն՝ մաքսանենգություն է համարվում մասնավորապես այն առարկաների տեղափոխումը, որոնք կարող են օգտագործվել զինված հակամարտության ժամանակ, և որոնց տեղափոխման նպատակակետը հակառակորդի կողմից վերահսկվող տարածքն է<sup>4</sup>:

Փաստորեն, ռազմական մաքսանենգության դեմ պայքարի զլխավոր նպատակը ոչ թե որոշակի պետության մաքսային սահմանով ապրանքների ապօրինի տեղափոխման կանխումն է, այլ զինված հակամարտությունների ժամանակ չեզոք պե-

<sup>1</sup> Международное право в избранных документах. Т. 3. М., 1957, էջեր 151-161:

<sup>2</sup> Международное право. Ведение военных действий: Сб. Гаагских конвенций и иных международных документов. М., 2001, էջ 94:

<sup>3</sup> Տե՛ս **Кравцов Р. В., Лисаускайте В. В.** Контрабанда в международном праве, էջ 47:

<sup>4</sup> Руководство Сан-Ремо по международному праву, применимому к вооруженным конфликтам на море, 1994. Ч. V. Разд. VI. п. 148 // Международное право. Ведение военных действий: сб. Гаагских конвенций и иных международных документов, էջ 178:



տությունների վարվելակերպի սահմանված կանոնների խախտման խափանումը: Հետևաբար, մաքսանենգության տվյալ տեսակը ուսնծգում է ոչ թե տնտեսական, սոցիալական և մշակութային նորմալ հարաբերությունների, այլ հակամարտող կողմերի պաշտպանունակության դեմ:

Ձեռքի, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի մաքսանենգությունը, սակայն, իրականացվում է նաև խաղաղ ժամանակաշրջանում: Դրա դեմ պայքարի առումով միջազգային հանրության լուրջ ձեռքբերում պետք է համարել ՄԱԿ-ի 1957 թ. դեկտեմբերի 13-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003 թ. սեպտեմբերի 29-ից<sup>1</sup>: Միջազգային տվյալ ակտի նպատակն անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելմանը և դրա դեմ պայքարի գործում մասնակից պետությունների համագործակցությանն աջակցելն է: Այդ նպատակով պայմանավորված՝ Կոնվենցիայում կանոնակարգվում են կազմակերպված հանցավոր խմբերի կողմից իրականացվող տարբեր առարկաների (այդ թվում՝ զենքի, ռազմամթերքի) ապօրինի շրջանառության դեմ պայքարի մեխանիզմները: Մասնավորապես, քննարկվող փաստաթղթի հոդված 2-ի «թ») կետով սահմանված է «վերահսկելի մատակարարում» հասկացությունը, որը նշանակում է մեթոդ, որի պայմաններում թույլատրվում են մեկ կամ մի քանի պետությունների տարածք արտահանել, անցկացնել կամ ներմուծել անօրինական կամ կասկած հարուցող բեռի խմբաքանակ նրանց իրավասու մարմինների գիտությամբ և հսկողության ներքո՝ որևէ հանցագործության քննության և այդ հանցագործության կատարմանը մասնակցող անձանց հայտնաբերման նպատակով:

2001 թ. մայիսի 31-ին Նյու Յորքում ստորագրվեց «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիան լրացնող՝ «Հրազենի, դրա հիմնամասերի և բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրության և շրջանառության դեմ» Արձանագրությունը, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2012 թ. փետրվարի 25-ից<sup>2</sup>: Տվյալ ակտի նպատակներն են հրազենի, դրա հիմնամասերի և բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրությունը և շրջանառությունը կանխելու, վերացնելու և դրանց դեմ արդյունավետ պայքարելու կապակցությամբ մասնակից պետությունների միջև համագործակցության խթանումը, դյուրացումը և ամրապնդումը: Այդ իմաստով Արձանագրության հոդված 3-ի «ե») կետով սահմանված է «ապօրինի շրջանառություն» հասկացությունը, որը նշանակում է՝ «(...) որևէ Մասնակից պետության տարածքից կամ նրա տարածքով մեկ այլ Մասնակից պետության տարածք հրազենի, դրա մասերի, բաղադրիչների կամ ռազմամթերքի ներկրում, արտահանում, գնում, վաճառք, առաքում, տեղափոխում կամ փոխանցում, եթե սույն Արձանագրության պայմանների համաձայն՝ շահագրգիռ Մասնակից պետություններից մեկը դրա համար թույլտվություն չի տվել, կամ եթե հրազենը չունի դրոշմ (...):»:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում միջպետական համագործակցության առաջին դրսևորումը Հաագայի 1912 թ.

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75872>:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80565>:

կոնվենցիայի ընդունումն է: Վերջինս, ըստ էության, թմրամիջոցների շրջանառության նկատմամբ միջազգային վերահսկողության կազմակերպմանն ու իրականացմանը նվիրված առաջին փաստաթուղթն է, որի դրույթներով ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ եվրոպական մի շարք երկրներ, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները, ընդունեցին օրենքներ, որոնցով վարչական և քրեական պատասխանատվություն էր սահմանվում թմրանյութերի ապօրինի արտադրության և դրանց մաքսանենգության համար<sup>1</sup>:

Թմրանյութերի վերաբերյալ միջազգային հաջորդ կոնվենցիան ընդունվեց 1925 թ. Ժնևում: Դրա դրույթներին համապատասխան՝ ստեղծվեց Մշտական կենտրոնական կոմիտե, որն ընդհանուր վերահսկողություն էր իրականացնում թմրամիջոցների արտադրության և դրանց միջազգային առևտրի ու բաշխման նկատմամբ: Հետագայում՝ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում, ընդունվեցին տվյալ հիմնախնդրին վերաբերող միջազգային իրավական նաև այլ փաստաթղթեր, որոնց շարքում կարելի է առանձնացնել «Թմրամիջոցների արտադրության սահմանափակման և դրանց բաշխման կանոնակարգման մասին» 1931 թ. և «Թմրամիջոցների ապօրինի առևտրի մասին» 1936 թ. կոնվենցիաները<sup>2</sup>:

Հետպատերազմյան տարիներին թմրամիջոցների ապօրինի արտադրության և տարածման ծավալներն ավելի ընդլայնվեցին: Այդ իսկ պատճառով միջազգային հանրությունը ստիպված էր փոփոխություններ կատարել նախկինում ընդունված համաձայնագրերում և ստորագրել նորերը<sup>3</sup>:

Ներկայումս թմրամիջոցների ապօրինի շրջանառության (այդ թվում՝ մաքսանենգության) դեմ պայքարին վերաբերող հիմնական միջազգային փաստաթուղթը 1961 թ. Նյու Յորքում ընդունված «Թմրամիջոցների մասին» միասնական Կոնվենցիան է, որը 1972 թ. Արձանագրությանը համապատասխան կատարված փոփոխություններով և լրացումներով Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. հոկտեմբերի 13-ից<sup>4</sup>: Տվյալ փաստաթղթի հոդված 36-ի համաձայն՝ «Պահպանելով իր սահմանադրական սահմանափակումները, յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ, որոնք կապահովեն, որ Կոնվենցիայի դրույթներին հակառակ թմրամիջոցների մշակումը, արտադրությունը, պատրաստումը, առանձնացումը, պահպանումը, առաջարկը, առևտրային նպատակներով առաջարկը, տարածումը, գնումը, վաճառքը, ցանկացած պայմաններով առաքումը, միջնորդությունը, ուղարկումը, ուղարկումը տարանցիկ երթուղով, ներմուծումն ու արտահանումը և որևէ այլ գործողություն, որը, Կողմերի կարծիքով, կարող է սույն Կոնվենցիայի դրույթների խախտում հանդիսանալ, սահմանվեն որպես պատժելի արարքներ, եթե դրանք կատարվել են կանխամտածված, և ապահովում է, որ լուրջ օրինախախտումները ենթակա լինեն համապատասխան պատիժների կիրառման, մասնավորապես՝ բանտարկության կամ ազատազրկման այլ միջոցի»: Ընդ որում, Կոնվենցիայի հոդված 1-ի դրույթներին համապատասխան, «ապօրինի շրջանառությունը» նշանակում է թմրամիջոցների մշակումը կամ վաճառահանումը՝ ի խախտումն Կոնվենցիայի դրույթների, իսկ

<sup>1</sup> Տե՛ս **Кисловский Ю. Г.** Контрабанда: история и современность. М., 1996, էջ 122:

<sup>2</sup> Տե՛ս **Василенко Е. В.** Нормативно-правовые основы сотрудничества государств по борьбе с контрабандой, էջ 114:

<sup>3</sup> Տե՛ս **Кравцов Р. В., Лисаускайте В. В.** Контрабанда в международном праве, էջ 51:

<sup>4</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76214>:

«ներմուծումն» ու «արտահանումը»՝ թմրամիջոցների ֆիզիկական տեղափոխումը մեկ պետությունից մեկ այլ պետություն կամ նույն պետության մեկ տարածքից մեկ այլ տարածք: Փաստորեն, տվյալ փաստաթղթում «ապօրինի շրջանառություն» և «ներմուծում» ու «արտահանում» եզրույթները հստակ տարանջատված են:

Հետագայում, նոր տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, ի հայտ եկան թմրեցնող նյութերի նոր տեսակներ՝ հոգեմետ և հոգեներգործուն նյութերը, որոնք մարդու օրգանիզմի վրա նույն ազդեցությունը թողնելու հատկություն ունեն, ինչ որ թմրամիջոցները: Այդ հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն առաջացավ կանոնակարգելու նաև դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության առանձնահատկությունները: Այսպես, 1971 թ. փետրվարի 21-ին Վիեննայում ընդունվեց «Հոգեմետ նյութերի մասին»<sup>1</sup> Կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. դեկտեմբերի 12-ից: Նշված փաստաթուղթը ևս դրույթներ է պարունակում համապատասխան նյութերի ապօրինի շրջանառության և ներմուծման ու արտահանման պատժելիության վերաբերյալ, որոնք նույնանում են «Թմրամիջոցների մասին» 1961 թ. միասնական Կոնվենցիայի համանման իրավակարգավորումների հետ:

Ավելի ուշ՝ 1988 թ. դեկտեմբերի 20-ին, նույն Վիեննայում ստորագրվեց ՄԱԿ-ի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» Կոնվենցիան, որը ևս Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. դեկտեմբերի 12-ից<sup>2</sup>: Տվյալ փաստաթղթի ընդունման նպատակն էր ստեղծել համապարփակ, առավել արդյունավետ և գործունակ միջազգային փաստաթուղթ, որը հատուկ ուղղված կլինի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ, և որում հաշվի կառնվեն հիմնահարցի տարբեր հայեցակետերն ընդհանրապես, և մասնավորապես նրանք, որոնք նախատեսված չեն թմրամիջոցներին և հոգեմետ նյութերին առնչվող գործող համաձայնագրերով:

Մաքսանենգության դեմ պայքարում միջպետական համագործակցության առումով կարևորվում են նաև պոռնկագրական բնույթի նյութերի ապօրինի տարածմանը հակազդելուն ուղղված քայլերը: Այս կապակցությամբ միջազգային իրավական առաջին փաստաթուղթը («Պոռնկագրական հրատարակությունների տարածման դեմ պայքարի մասին համաձայնագիր») ընդունվել է 1910 թ. մայիսի 4-ին Փարիզում<sup>3</sup>: Հետագայում՝ 1923 թ. սեպտեմբերի 12-ին, ժնևում ընդունվել է «Պոռնկագրական հրատարակությունների շրջանառության և դրանց առևտրի դեմ պայքարի մասին» Միջազգային կոնվենցիան<sup>4</sup>: Վերջինիս դրույթներին համապատասխան՝ պատժելի էին համարվում հետևյալ արարքները՝

- վաճառելու, տարածելու կամ հրապարակայնորեն ցուցադրելու նպատակով պոռնկագրական հրատարակություններ պատրաստելը կամ պահելը,
- նույն նպատակներով դրանք ներմուծելը, տեղափոխելը կամ արտահանելը, ինչպես նաև դրանք շրջանառության մեջ դնելը,

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80561>:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80574>:

<sup>3</sup> Собрание законов и распоряжений Рабоче-Крестьянского Правительства СССР. 1936. Отдел II. № 21, էջ 179:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

– պոռնկագրական հրատարակություններ վաճառելը, տարածելը, հրապարակայնորեն ցուցադրելը կամ վարձույթով հանձնելը, եթե դա կատարվել է որպես արհեստ,

– նշված հրատարակությունները ձեռք բերելու հնարավոր ուղիները գովազդելը:

Տվյալ փաստաթուղթը վավերացրել են 63 պետություններ: ԽՍՀՄ-ը, որի կազմում էր նաև Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Կոնվենցիան վավերացրել է 1935 թվականին, և դրա դրույթներին համապատասխան ներպետական օրենսդրությամբ (Խորհրդային հանրապետությունների քրեական օրենսգրքերով) քրեական պատասխանատվություն է սահմանել պոռնկագրական բնույթի նյութերի տարածման համար:

Արվեստի ստեղծագործությունների, պատմական և մշակութային այլ արժեքների ապօրինի շրջանառության հիմնական պատճառն այն է, որ հատկապես ֆինանսատնտեսական հարաբերությունների ապակայունացման պայմաններում դրանց արժեքը կտրուկ աճում է, ինչն էլ զրավում է հանցավոր տարբեր տարրերի ուշադրությունը: Միևնույն ժամանակ, դրանց մաքսանենգությունը վնաս է պատճառում ոչ միայն առանձին պետությունների կամ ժողովուրդների, այլև միջազգային ողջ հանրության շահերին: Այդ իսկ պատճառով պետությունների կողմից մշակվել են նաև նշված արժեքների ապօրինի շրջանառությանը հակազդելու և ուղղված միջազգային-իրավական միջոցներ<sup>1</sup>:

Համաշխարհային մշակութային ժառանգությունը, ինչպես հայտնի է, առավել վտանգվում է պատերազմների կամ զինված այլ ընդհարումների ժամանակահատվածներում: Հավանաբար հենց դա է պատճառը, որ այս կապակցությամբ միջպետական համագործակցության առաջին քայլերը կատարվել են պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պահպանության ուղղությամբ: Մասնավորապես, այս ոլորտի կարգավորմանը նվիրված առաջին բազմակողմ միջազգային-իրավական փաստաթղթերը «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» Հաագայի 1899 թ. հուլիսի 29-ի և 1907 թ. հոկտեմբերի 18-ի կոնվենցիաներն են: Վերջիններիս դրույթներին համապատասխան՝ արգելվում է պատմական հուշարձանների, գեղարվեստական և գիտական ստեղծագործությունների բռնազավթումը, վնասումը կամ ոչնչացումը:

Հետագայում՝ 1954 թ. մայիսի 17-ին, ՅՈՒՆԵՍԿՈ-ի նախաձեռնությամբ նույն Հաագայում ստորագրվեց «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. դեկտեմբերի 5-ից<sup>2</sup>: Տվյալ փաստաթղթի հիմնական նպատակը զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պահպանության և հարգման միջազգային իրավական մեխանիզմների կանոնակարգումն է:

Ավելի ուշ՝ 1970 թ. նոյեմբերի 14-ին, Հռոմում ընդունվեց «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին» Կոնվենցիան, որը նույնպես Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. դեկ-

<sup>1</sup> Տե՛ս **Боруславский М. М.** Международная охрана культурных ценностей. М., 1979, էջ 62:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75856>:

տեմբերի 5-ից<sup>1</sup>: Վերջինս, ի տարբերություն նախորդների, կարգավորում է ոչ թե զինված ընդհարումների ժամանակ, այլ խաղաղ պայմաններում մշակութային արժեքների պահպանության հետ կապված հարցերը: Մասնավորապես, տվյալ Կոնվենցիայի հոդված 3-ի համաձայն՝ «Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիային համապատասխան ընդունված դրույթներին հակառակ կատարվող մշակութային արժեքների ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն ապօրինի է»:

Պետությունները միջազգային մակարդակում նաև տնտեսական մաքսանենգության տարածմանը հակազդելու որոշակի փորձեր են կատարել: Այսպես, 1925 թ. օգոստոսի 19-ին Հելսինգֆորսում մի շարք պետություններ (Գերմանիա, Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Էստոնիա, Լատվիա, Լիտվա և ԽՍՀՄ) ստորագրել են «Ալկոհոլային ապրանքների մաքսանենգության կանխարգելման մասին» Կոնվենցիան: Ընդ որում, տվյալ փաստաթղթի հեղինակները չեն բացահայտել դրանում օգտագործվող «մաքսանենգություն» եզրույթի բովանդակությունը, ինչը դժվար է արդարացված համարել: Մինչև ժամանակ Կոնվենցիայի մասնակիցները փաստում են, որ ալկոհոլային ապրանքների մաքսանենգությունը վտանգում է հասարակական բարեկեցությունը, և որ դրա դեմ անհրաժեշտ է պայքարել հնարավոր բոլոր միջոցներով, հատկապես՝ միջազգային համագործակցության շրջանակներում: Բացի դրանից, փաստաթղթում ամրագրված է Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությամբ Կոնվենցիայի նպատակների իրականացմանը նպաստող դրույթների, այդ թվում՝ պատժամիջոցների նախատեսման պարտավորությունը<sup>2</sup>:

Դրամական միջոցների և վճարային այլ գործիքների կեղծումը կանխելու և դրա դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով 1929 թ. ապրիլի 20-ին ժնևում ստորագրվեց «Դրամական միջոցների կեղծման դեմ պայքարի մասին» Միջազգային կոնվենցիան: Տվյալ փաստաթղթի հոդված 3-ի համաձայն՝ նշված միջոցների կանխամտածված ներմուծմանն ուղղված գործողությունները՝ որպես քրեական հանցագործություն, պետք է պատժելի համարվեն և նախատեսվեն ներպետական օրենսդրությամբ<sup>3</sup>:

Այս առումով, սակայն, հարկ է նշել, որ տվյալ Կոնվենցիայի շատ դրույթներ հնացել են և չեն համապատասխանում ներկայիս պայմաններին: Մասնավորապես, դրանում նախատեսված են միայն թղթադրամ և մետաղադրամ հանդիսացող վճարային միջոցները: Մինչդեռ վերջին ժամանակներս բավականին լայն տարածում են ստացել նաև արժեթղթերի, չեկերի, ակրեդիտիվների և վճարային այլ գործիքների կեղծման դեպքերը: Բացի այդ, Կոնվենցիայով պատժելի է համարվում նշված միջոցների միայն ներմուծումը, իսկ նման մոտեցումը չի համապատասխանում ո՛չ քննարկվող հանցագործության բնույթին, ո՛չ էլ դրա վտանգավորության աստիճանին: Այնուամենայնիվ, միջազգային իրավական տվյալ փաստաթուղթը մինչ օրս կարևոր դերակատարություն ունի կեղծ փողերի շրջանառության դեմ պայքարի գոր-

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75863>:

<sup>2</sup> Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных с иностранными государствами. Вып. V. М., 1930, էջ 46:

<sup>3</sup> St`u **Карпец И. И.** Преступления международного характера. М., 1979, էջ 140:

ծում, իսկ դրանում առկա բացթողումները լրացվում են միջպետական երկկողմ ու բազմակողմ այլ համաձայնագրերով և ներպետական օրենսդրությամբ<sup>1</sup>:

Այսպիսով, չնայած մաքսանենգությունը՝ որպես միջազգային բնույթի հանցագործություն, հայտնի է շատ վաղուց, դրա միջազգայնորեն ընդունված միասնական հասկացության սահմանում, այնուամենայնիվ, գոյություն չունի: Նման սահմանումներ հիմնականում տրված են ներպետական օրենսդրական ակտերում, որոնք, սակայն, աչքի են ընկնում բազմազանությամբ: Ուստի քննարկվող երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորում ենք մաքսանենգության միասնական և համապարփակ հասկացության սահմանումը միջազգային իրավական համապատասխան փաստաթղթում:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ մաքսանենգության և դրա առանձին դրսևորումների դեմ պայքարի ուղղությամբ միջպետական համագործակցությունն իրականացվում է նաև տարածաշրջանային մակարդակով: Տվյալ դեպքում հիմնականում գործում են ընդհանուր բովանդակությամբ պայմանագրեր, որոնք ուղղված են միջազգային բնույթի բազմաթիվ հանցագործությունների (այդ թվում՝ մաքսանենգության) դեմ պայքարին և կարգավորում են դրանց բացահայտմանն ու քննությանը վերաբերող միջպետական համագործակցության հարցերը (հանցանք կատարած անձանց արտահանձնումը, ապացուցողական բազայի ձևավորմանն աջակցելը և այլն): Նման փաստաթղթերի թվին են դասվում, օրինակ՝ «Հանձնման մասին» 1957 թ.<sup>2</sup>, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թ.<sup>3</sup> և «Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին» 1972 թ.<sup>4</sup> եվրոպական ու «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության ու իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի ԱՊՀ մասնակից պետությունների 2002 թ.<sup>5</sup> կոնվենցիաները, ինչպես նաև «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 1998 թ.<sup>6</sup>, «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» 1998 թ.<sup>7</sup>, «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2001 թ.<sup>1</sup> «Հրազե-

<sup>1</sup> Ст' у Ромашев Ю. С. Международное правоохранительное право. М., 2010, էջ 202:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81171>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 25-ից:

<sup>3</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81172>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 25-ից:

<sup>4</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24483>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2005թ. մարտի 18-ից:

<sup>5</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24598>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2005թ. փետրվարի 19-ից:

<sup>6</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83645>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2001թ. ապրիլի 19-ից:

<sup>7</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81232>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2000թ. դեկտեմբերի 2-ից:

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83899>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2001թ. նոյեմբերի 8-ից:

նի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման և շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2008 թ.<sup>1</sup> համաձայնագրերն ու «Մաքսային Միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու մասին» 2011 թ.<sup>2</sup> պայմանագիրը և այլն:

Այսպես, օրինակ՝ «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 1998 թ. նոյեմբերի 25-ի համաձայնագրի հոդված 2-ի համաձայն՝ «Կողմերը համագործակցում են հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման և քննության գործում, հատկապես հետևյալ արարքների. 1) անձի կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության դեմ հանցագործությունների, 2) զենքի, զինամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի ու պայթուցիկ սարքերի, ինչպես նաև միջուկային ու ռադիոակտիվ նյութերի անօրինական շրջանառության, միջազգային ահաբեկչության, բանդիտիզմի, պատանդների վերցման, 3) թմրամիջոցների, պրեկուրսորների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության, 4) տնտեսական գործունեության ոլորտում հանցագործությունների, այդ թվում՝ հարկման, հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների օրինականացման (լվացման), մաքսանենգության, դրամի և արժեթղթերի կեղծման, 5) սեփականության դեմ հանցագործությունների, այդ թվում՝ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակման և դրա հետ կապված անօրինական գործողությունների, 6) մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման, 7) մշակութային և պատմական արժեքների անօրինական շրջանառության, 8) էկոլոգիական հանցագործությունների, 9) անօրինական միգրացիայի»: Ընդ որում, վերը թվարկված հանցավոր արարքների շարքում մաքսանենգության հատուկ մատնանշումը, կարծում ենք, վկայում է այդ հանցագործության դեմ միջպետական համագործակցության շրջանակներում պայքարելու անհրաժեշտությունն ընդգծելու մասին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մքսասանեցության դեմ պայքարում տարածաշրջանային համագործակցության առումով Հայաստանի Հանրապետության համար հատկապես կարևորվում է Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) անդամակցությունը: Վերջինս միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որը հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թ. մայիսի 29-ին Ռուսաստանի Ղաշնության, Ղազախստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության նախագահների կողմից ստորագրված Պայմանագրով:<sup>1</sup> ԵՏՄ-ին

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90351>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2013թ. նոյեմբերի 11-ից:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95242>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից:

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95272>:

2014 թ. հոկտեմբերի 10-ին կնքված պայմանագրով<sup>1</sup> միացավ Հայաստանի Հանրապետությունը, իսկ նույն թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրով<sup>2</sup>՝ Ղրղզստանի Հանրապետությունը<sup>3</sup>:

Հանցավորության (մասնավորապես՝ մաքսանենգության) դեմ պայքարի առումով հատկապես կարևորվում են ԵՏՄ շրջանակներում ընդունված հետևյալ միջազգային իրավական փաստաթղթերը՝ «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թ. նոյեմբերի 27-ին Մինսկում ընդունված Պայմանագիրը<sup>4</sup>, «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնության և փոխգործակցության մասին» 2010 թ. հուլիսի 5-ին Աստանայում ստորագրված Համաձայնագիրը<sup>5</sup>, «Մաքսային միության և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թ. հուլիսի 5-ին Աստանայում ընդունված Պայմանագիրը<sup>6</sup>, ինչպես նաև «Մաքսային միության մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեմեդրոն (հոգեմետ) նյութերի և դրանց արեկուրտրների տեղափոխման կարգի մասին» 2013 թ. հոկտեմբերի 24-ին Մինսկում ստորագրված Համաձայնագիրը<sup>7</sup>:

Մինևս նույն ժամանակ հարկ է նշել, որ մաքսանենգության դեմ պայքարը միջպետական համագործակցության շրջանակներում իրականացվում է նաև երկկողմ համաձայնագրերի հիման վրա: Նշված համագործակցությունը կանոնակարգող միջազգային իրավական փաստաթղթերի շարքում կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին» 1996 թ. մարտի 25-ի Պայմանագիրը<sup>8</sup>, «Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին» 2000 թ. նոյեմբերի 21-ի Համաձայնագիրը<sup>9</sup>, «Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2003 թ. սեպտեմբերի 15-ի Պայմանագիրը<sup>10</sup>, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության մասին» 2004 թ. սեպտեմբերի 6-ի Համաձայ-

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95214>:

<sup>2</sup> <https://docs.eaeunion.org/sites/storage1/Lists/Documents/>:

<sup>3</sup> Եվրասիական տնտեսական միության զարգացման ժամանակագրությունն առավել մանրամասն տես՝ ԵՏՄ համացանցային պաշտոնական կայք-էջում՝ <http://www.eaeunion.org/>:

<sup>4</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95273>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից:

<sup>5</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95289>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից:

<sup>6</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95290>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից:

<sup>7</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95244>, ՀՀ համար ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ից:

<sup>8</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18511>:

<sup>9</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24083>:

<sup>10</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24822>:



նագիրը<sup>1</sup>, «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին» 2006 թ. հուլիսի 5-ի Համաձայնագիրը<sup>2</sup>, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարության միջև՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին» 2007 թ. ապրիլի 15-ի Համաձայնագիրը<sup>3</sup>, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լատվիայի Հանրապետության Կառավարության միջև ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների ու դրանց բաղադրատարրերի ապօրինի շրջանառության և այլ հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» 2009թ. դեկտեմբերի 10-ի Համաձայնագիրը<sup>4</sup> և այլն:

Ընդ որում, վերը նշված բոլոր դեպքերում խոսքը հանցավորության և դրա առանձին տեսակների (այդ թվում՝ մաքսանենգության) դեմ պայքարի ոլորտում համագործակցությանն ուղղված՝ համապատասխան պետությունների մտադրությունների հռչակման մասին է: Այսպես, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարության միջև՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին» 2007 թ. Համաձայնագրի հոդված 2-ի համաձայն՝ «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարում Կողմերը պետք է իրենց ազգային օրենսդրությանը և սույն Համաձայնագրին համապատասխան. (...) 3. Փոխանակեն տեղեկատվություն և տվյալներ, ինչպես նաև իրականացնեն համատեղ միջոցառումներ կազմակերպված հանցավորության դեմ պայքարն ապահովելու նպատակով. հիշյալ աշխատանքները կիրականացվեն, մասնավորապես, հետևյալ ոլորտներում՝ ա) զենքերի, զինամթերքի, ինչպես նաև բոլոր տեսակի պայթուցիկների մաքսանենգ փոխադրում և ապօրինի վաճառք, բ) կորած կամ գողացված ճանապարհատրանսպորտային միջոցներ (բոլոր տեսակի), գ) մշակութային և պատմական արժեք ներկայացնող առարկաների, թանկարժեք քարերի և մետաղների մաքսանենգ փոխադրում, դ) ինքնությունը հաստատող փաստաթղթերի ցանկացած տեսակի կեղծում, ե) արժեթղթերի, թղթադրամների, վարկային քարտերի և այլ արժեքավոր իրերի կեղծում և դրամանենգություն, զ) անօրինական միգրացիա, մարդկանց առևտուր, մարդկային օրգանների անօրինական վաճառք, է) ահաբեկչություն»:

Ամփոփելով քննարկվող հիմնախնդիրները՝ կարելի է եզրակացնել, որ մաքսանենգության համար պատասխանատվության միջազգային իրավական կարգավորումը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

– Ներկայումս գոյություն չունի դրա դեմ պայքարը կարգավորող առանձին միջազգային իրավական համակողմանի փաստաթուղթ: Դրան առնչվող իրավակարգավորումներն արտացոլված են միջազգային տարբեր պայմանագրերում, որոնք վերաբերում են թմրանյութերի, զենքի, մշակութային արժեքների, կեղծ դրամական միջոցների, պոռնկագրական բնույթի նյութերի, ակոհոլային արտադրանքի և մի

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24791>:

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55929>:

<sup>3</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77793>:

<sup>4</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64705>:

շարք այլ ապրանքների, առարկաների ու նյութերի ապօրինի ներմուծման կամ արտահանման դեմ պայքարին:

– Չնայած մաքսանենգությունը՝ որպես միջազգային բնույթի հանցագործություն, հայտնի է շատ վաղուց, դրա միջազգայնորեն ընդունված միասնական հասկացության սահմանում ևս գոյություն չունի: Համապատասխան սահմանումներ հիմնականում տրված են ներպետական օրենսդրական ակտերում, որոնք, սակայն, աչքի են ընկնում բազմազանությամբ և առաջացնում տարամեկնաբանություններ: Ուստի քննարկվող երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է մաքսանենգության հասկացության միասնական և համապարփակ սահմանումը միջազգային իրավական համապատասխան փաստաթղթում:

– Ռազմական մաքսանենգության դեմ պայքարի գլխավոր նպատակը ոչ թե որոշակի պետության մաքսային սահմանով ապրանքների ապօրինի տեղափոխման կանխումն է, այլ զինված ընդհարումների ժամանակ չեզոք պետությունների վարվելակերպի սահմանված կանոնների խախտման խափանումը: Հետևաբար, մաքսանենգության տվյալ տեսակը ոտնձգում է ոչ թե տնտեսական, սոցիալական և մշակութային նորմալ հարաբերությունների, այլ հակամարտող կողմերի պաշտպանունակության դեմ:

– Մաքսանենգության դեմ պայքարում միջպետական համագործակցությունն իրականացվում է նաև երկկողմ համաձայնագրերի հիման վրա: Ընդ որում, դրանց պարագայում խոսքն ընդամենը հանցավորության և դրա առանձին տեսակների (այդ թվում՝ մաքսանենգության) դեմ պայքարի ոլորտում համագործակցությանն ուղղված՝ համապատասխան պետությունների մտադրությունների հռչակման մասին է:

## МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА КОНТРАБАНДУ

**Гор Мирзоян**

*Аспирант кафедры уголовного права ЕГУ*

В статье рассматриваются основы международно-правового сотрудничества государств, направленного на борьбу с контрабандой. В данном контексте в историческом аспекте представлены этапы принятия международных договоров по отдельным видам контрабанды.

На основе результатов собственного исследования, автор анализирует трактовку в международном праве понятия таможенного правонарушения, в том числе контрабанды. Кроме того, обращено внимание особенностям регионального и двустороннего сотрудничества в деле борьбы с контрабандой.

## INTERNATIONAL LEGAL REGULATION OF RESPONSIBILITY FOR SMUGGLING

**Gor Mirzoyan**

*Post-graduate Student of the YSU Chair of Criminal Law*

---

The frameworks of states cooperation under international law for prevention of smuggling are discussed in this paper. In this context, historically the stages of acceptance of international agreements on certain types of smuggling are represented.

After analyzing the materials of research the special attention of author is given to the interpretation of the concept of a customs offence in international law, including contraband. In addition, the attention is paid to the regional and by-lateral cooperation for prevention of smuggling.

**Բանալի բառեր** – մաքսանենգություն, ռազմական մաքսանենգություն, զենքի մաքսանենգություն, պոռնկագրական հրատարակությունների մաքսանենգություն, թմրամիջոցների մաքսանենգություն, մշակութային արժեքների մաքսանենգություն, կեղծ դրամական միջոցների մաքսանենգություն, ալկոհոլի մաքսանենգություն:

**Ключевые слова** – международно-правовой договор, контрабанда, военная контрабанда, контрабанда оружия, контрабанда порнографических изданий, контрабанда наркотиков, контрабанда культурных ценностей, контрабанда поддельных денежных знаков, контрабанда алкогольных товаров.

**Key words** – international legal treaty, smuggling, military smuggling, smuggling of arms, smuggling of porn, drug smuggling, smuggling of cultural values, smuggling of false currency notes, smuggling of alcoholic goods.

## ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԿԵՂԾԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ

### Էմմա Ավագյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կիրմինալիստիկայի ամբիոնի  
կիրմինալիստիկայի կաբինետի ավագ լաբորանտ,  
<< հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների  
կազմակերպման կատարելագործման բաժնի գլխավոր մասնագետ*

Յուրաքանչյուր պետության իրավական համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում արդարադատության պատշաճ իրականացումը: Արդարադատության իրականացման ճանապարհով ապահովվում են երկրում առկա հասարակական հարաբերությունները, վերականգնվում են անձանց խախտված իրավունքները, ինչպես նաև մեղավորները ենթարկվում են պատասխանատվության: Քաղաքացիական, վարչական կամ քրեական գործերով արդարադատություն իրականացնելու նպատակով օրինական, հիմնավորված և արդարացի որոշումներ կայացնելու համար դատարանը հիմնվում է գործում առկա հավաստի և բավարար ապացույցների համակցության վրա: Հետևաբար, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շարքում առավել մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործություններից պետք է առանձնացնել հատկապես ապացույցներ կեղծելը: Վերջինիս վտանգավորությունը այն է, որ կեղծ ապացույցները ընդունվում են որպես իրական, և դրանց հիման վրա դատարանի կայացրած վճիռը, դատավճիռը կամ որոշումը արտաքննապես կարող են հիմնավոր թվալ: Սակայն արդյունքում քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել անմեղ ածը, մեղավորը՝ ազատվել քրեական պատասխանատվությունից, կարող են տեղի ունենալ ապօրինի կալանավորում, կայացվել անարդար վճիռ, դատավճիռ, դատական այլ ակտ կամ առաջանալ հանրորեն վտանգավոր այլ հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) հոդված 349-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից ապացույցներ կեղծելու համար, իսկ երկրորդ մասը՝ հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից քրեական գործով ապացույցներ կեղծելու համար:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի վերլուծությունից հասկանալի է դառնում, որ այն դրսևորվում է իրական ապացույցները կեղծ, իրականությանը չհամապատասխանող ապացույցներով փոխարինելով կամ եղած ապացույցներում կեղծում կատարելով: Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է գործողությանը, այսինքն՝ հանցավորն ակտիվ գործողությունների միջոցով փորձում է հասնել իր հանցավոր նպատակին: Սակայն, մեր կարծիքով, հոդվածի դիսպոզիցիայում նշված արարքը հնարավոր է իրականացնել նաև անգործության միջոցով: Օրինակ՝ երբ վարույթ իրականացնող մարմինը ձեռք է բերում իրեղեն ապացույցներ և դրանք ժամանակին չի ուղարկում փորձաքննության, որի պատճառով եղած հետքերը փո-

փոխվում են:

Քննարկվող հանցակազմի իմաստով կարևոր է անդրադառնալ «կեղծել» բառին, որը բացատրական բառարանում պարզաբանվում է որպես՝ կեղծ կերպով ներկայացնել, իրականությունը խեղաթյուրել՝ աղավաղել, մի բանի նմանեցնել (խաբելու համար)<sup>1</sup>: Ապացույցները հնարավոր է կեղծել տարբեր եղանակներով՝ եղած ապացույցներում կեղծ տեղեկություններ մտցնելով, կեղծ գրառումներ կատարելով (ջնջում, քերվածք), որի հետևանքով աղավաղվում է ապացույցի իրական բովանդակությունը, մի առարկան մեկ ուրիշով փոխարինելով կամ իրեղեն ապացույցները ձևափոխելու և բազմազան այլ ձևերով: Ապացույցների կեղծման բոլոր հնարքները կարելի է բաժանել երկու խմբի՝

1) ինտելեկտուալ կեղծիք, երբ ամբողջովին նոր ապացույց է ստեղծվում (այդ թվում՝ եղած իրական ապացույցը փոխարինելու համար),

2) նյութական կեղծիք, երբ եղած իրական ապացույցը փոփոխությունների է ենթարկվում:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի վերլուծության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ այն հանգամանքին, թե արդյոք ապացույցներ կեղծելու հանցակազմը ներառում է նաև ապացույցների ոչնչացումը: Քրեագետների մի մասի կարծիքով՝ հանցակազմն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ ապացույցները ոչնչացվում են, այսինքն՝ դրանց մասնակի կամ ամբողջական ոչնչացում է տեղի ունենում<sup>2</sup>: Այդպիսի դիրքորոշում է հայտնել նաև ՌԴ Գերագույն դատարանը, ըստ որի՝ «(...) ապացույցների կեղծիք ասելով հասկանում ենք ապացույցների արհեստական ստեղծում կամ դրանց ոչնչացում անկախ այն հանգամանքից՝ դրանք մեղարանքի, թե պաշտպանության կողմի ապացույցներ են (...)»<sup>3</sup>: Հարկ է նշել, սակայն, որ տվյալ մոտեցման կողմնակիցները ճիշտ են մասամբ: Եթե մենք կարող ենք համաձայնվել ապացույցների մասնակի ոչնչացումը որպես ապացույցների կեղծում դիտելուն, ապա նույն մոտեցումը չենք կարող հայտնել ապացույցների ամբողջական ոչնչացման դեպքում, քանի որ այն չի կարող դիտվել որպես ապացույցների կեղծում: Այսպես՝ ապացույցների ոչնչացման արդյունքում արհեստական ապացույցներ չեն ստեղծվում կամ փոփոխություններ չեն կատարվում դրանցում, այլ ընդհակառակը՝ այդ ապացույցներն ընդհանրապես հանվում են գործի նյութերից, ուստի անհնար է խոսել ապացույցների կեղծման հանցակազմի առկայության մասին: Սակայն դա չի նշանակում, որ հիշյալ արարքում բացակայում են այլ հանցակազմի տարրեր: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում քրեաիրավական համապատասխան գնահատական տալ տվյալ արարքին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե հանցավորն ինչպիսի մտադրություն է ունեցել: Եթե ապացույցները ոչնչացվում են քաղաքացիական կամ վարչական գործերով, ապա նշված արարքը կարելի է որակել որպես արդարադատության իրականացմանը կամ քննությանը

<sup>1</sup> Տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան», Երևան, 1976 թ., էջ 718:

<sup>2</sup> Տե՛ս **В. Н. Борков**. Практика применения нормы о фальсификации доказательств (ст. 303 УК РФ): проблемы и пути их решения.// Законодательство и практика. 2011թ., № 1, էջ 20: **Л. В. Лобанова**. Преступления против правосудия: проблемы квалификации посягательств, регламентации дифференциации ответственности. Дис. докт. юрид. наук, Казань, 2000 թ., էջ 162 և այլն:

<sup>3</sup> <http://www.vsrif.ru/indexA.php>

խոչընդոտել: Այս հողվածով է որակվում նաև պաշտպանության կողմի կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, նրանց օրինական ներկայացուցիչների կամ ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողի կամ նրա ներկայացուցչի կողմից քրեական գործերով ապացույցներ ոչնչացնելը: Իսկ այն դեպքում, երբ արարքը կատարվել է վարույթ իրականացնող մարմնի կողմից, ապա այն կարելի է որակել որպես քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատել, եթե վերջինիս գործողություններն ուղղված են հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելուն:

Իրավաբանական գրականության մեջ առկա է այն մտտեցումը, որ քրեական գործերով ապացույցներ կեղծելը հնարավոր է միայն հարուցված քրեական գործի պայմաններում, որովհետև միայն այդ ժամանակ կարելի է հավաքել ապացույցներ և հնարավորություն ունենալ նաև դրանք կեղծելու<sup>1</sup>: ՀՀ Քր. դատ. օր.-ի հողված 125-ի համաձայն՝ ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով: Այս դրույթի առկայությունն ինքնին ենթադրում է, որ միայն հարուցված քրեական գործի առկայության պարագայում է հնարավոր հավաքել ապացույցներ, սակայն օրենսդիրը թույլատրում է մինչև քրեական գործի հարուցումը կատարել սահմանափակ թվով քննչական գործողություններ (այդպիսի գործողություններից են համարվում դեպքի վայրի զննությունը, անձնական խուզարկությունը, հետազոտման համար նմուշներ վերցնելը, ինչպես նաև փորձաքննություն նշանակելը), որոնց կատարման շնորհիվ վարույթ իրականացնող մարմինը ձեռք է բերում տվյալներ, որոնք հետագայում օգտագործվում են որպես ապացույց և գնահատվում են այլ ապացույցների հետ համակցության մեջ: Վերը հիշատակված քննչական գործողությունների կատարման ժամանակ վարույթ իրականացնող մարմինը հնարավորություն է ունենում կեղծելու ձեռք բերված տվյալները, որոնք հետագայում կարող են համարվել ապացույց: Հետևաբար դժվար է համաձայնվել այն կարծիքի հետ, որ միայն քրեական գործ հարուցելուց հետո է հնարավոր կեղծել ապացույցները: Իհարկե, տվյալ իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում, որ այդ տվյալները հետագայում համարվեն ապացույց, այլպես նման հանցակազմի մասին խոսելն ավելորդ է:

Ի. Վ. Դվարյանսկովի կարծիքով, քննարկվող հանցակազմի սահմաններում հարցաքննվող անձանց ցուցմունքների կեղծում «մաքուր տեսքով» հնարավոր չէ, քանի որ դա կարող է իրականացվել բացառապես տվյալ անձանց վրա ներգործելու միջոցով, որի արդյունքում առաջանում է ոչ թե քննարկվող հանցակազմը, այլ ցուցմունք տալուն հարկադրելու հանցակազմը<sup>2</sup>: Հեղինակի նման կարծիքի հետ կարելի է համաձայնվել մասնակիորեն, որովհետև վարույթ իրականացնող մարմնի կողմից ցուցմունքներ կեղծելը հնարավոր է ոչ միայն ցուցմունք տվող անձին հարկադրելով, այլև մի շարք այլ եղանակներով: Այսպես, օրինակ՝ երբ վարույթ իրականացնող մարմինը դատարկ թղթերի վրա վերցնի ցուցմունք տվող անձի ստորագրությունը և բովանդակությունն անձամբ շարադրի կամ ցուցմունք տվող անձին տա արդեն իսկ

<sup>1</sup> St`u Ю. ЩигOLEB. Ответственность за фальсификацию доказательств// Законность, 1999թ., № 10, էջ 13:

<sup>2</sup> St`u И. ДворянскOв. Фальсификация доказательств // Уголовное право. 2001թ., № 2, էջեր 46-47:

լրացված թղթերը, որոնք նա պետք է ստորագրի: Քննարկվող իրավիճակներում վարույթ իրականացնող մարմինը ցուցմունք տվող անձին չի հարկադրում ցուցմունք տալ, և նույնիսկ հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ վերջինս անձամբ է խնդրում վարույթ իրականացնող մարմնին, որ նա լրացնի իր փոխարեն: Հետևաբար, նման իրավիճակները հարկավոր է նույնպես հաշվի առնել: Բայց և այնպես բոլոր այն դեպքերում, երբ վարույթ իրականացնող մարմինը հարկադրում է ցուցմունք տալ, ապա նման իրավիճակն անհրաժեշտ է գնահատել որպես ցուցմունք տալուն հարկադրել:

Ինչպես արդեն նշել ենք, Օրենսգրքի հոդված 349-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից ապացույցներ կեղծելու համար: Քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին և այդ ընթացքում հնարավորություն է ստանում կեղծել ապացույցները: Նման դեպքում ապացույցներ կեղծելը հնարավոր է ինչպես եղած ապացույցները փոփոխելով, այնպես էլ նոր, կեղծ ապացույցներ ներկայացնելով:

Հատկապես կարևոր է տվյալ հանցակազմի տեսանկյունից պարզել հանցագործության ավարտման պահը, որը տարբերվում է՝ ըստ քաղաքացիական, վարչական կամ քրեական գործերի առանձնահատկությունների: Իրավաբանական գրականության մեջ վիճելի է համարվում քաղաքացիական գործերով ապացույցները կեղծելու ավարտման պահը: Այսպես, Յու. Շչիգալևը գտնում է, որ քաղաքացիական գործերով ապացույցների կեղծումը ավարտված է համարվում ապացույցները կեղծելու և դրանք դատարան ներկայացնելու պահից<sup>1</sup>: Սակայն, մեր կարծիքով, հեղինակը տվյալ հանցագործության ավարտման պահը որոշելիս հաշվի է առել բացառապես գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից ապացույցը դատարան ներկայացնելու հնարավորությունը՝ բացառելով այն իրավիճակը, որ վերոհիշյալ անձինք գործի նյութերին ծանոթանալու ժամանակ իրական հնարավորություն են ստանում կեղծելու գործում արդեն իսկ առկա ապացույցները: Հետևաբար գործում եղած ապացույցները փոփոխելու դեպքում հանցագործությունն ավարտված է համարվում ապացույցը կեղծելու պահից, իսկ նոր կեղծ ապացույցներ ներկայացնելու դեպքում՝ գործի նյութերը դատարանի կողմից ընդունվելու պահից, քանի որ նոր ներկայացվող ապացույցները ապացուցողական նշանակություն են ստանում բացառապես դատարանի կողմից ընդունվելու պահից:

Վերոհիշյալ հեղինակը նշում է նաև, որ հանցագործությունն ավարտված է համարվում նույնիսկ այն դեպքում, երբ կեղծված ապացույցները դատարանի կողմից չեն ընդունվել և չեն դիտվել որպես ապացույց: Մասնագիտական գրականության մեջ, սակայն, այս հարցի կապակցությամբ արտահայտվել է այլ մոտեցում ևս: Մասնավորապես, Պ. Ս. Մետելսկին նշում է, որ այն դեպքում, երբ կեղծված ապացույցները դատարանի կողմից չեն ընդունվել, ապա դա գնահատվում է ոչ թե որպես ավարտված հանցագործություն, այլ դրա նախապատրաստություն<sup>2</sup>: ՂԺվար է համա-

<sup>1</sup> Տե՛ս Ю. Щиголёв, նշված աշխ., էջ 12:

<sup>2</sup> Տե՛ս П. С. Метельский. Организация уголовная ответственность за фальсификацию доказательств (статья 303 УК РФ) // Вестник НГУ. ISSN 1818-7986. Серия: Право. 2006թ., Т. 2. Вып. 1., էջ 136:

ծայնվել քրեագետների՝ վերը ներկայացված դիրքորոշումներին այն դեպքում, երբ դատարանի կողմից չեն ընդունվել ներկայացված նոր կեղծ ապացույցները: Կարծում ենք՝ տվյալ իրավիճակը պետք է գնահատել որպես հանցափորձ: Պատճառը այն է, որ տվյալ արարքի օբյեկտիվ կողմն արդեն իսկ սկսվել է, և հանցավորը գիտակցում է, որ իրենից կախված ամեն ինչ արել է հանցագործությունն ավարտին հասցնելու համար (այսինքն՝ հանցավորը կեղծել է նյութերը և դրանք փորձում է ներկայացնել դատարան՝ որպես ապացույց), սակայն այն չի ավարտվել իր կամքից անկախ հանգամանքներով (այսինքն՝ դատարանը չի բավարարել միջնորդությունը կամ դրանք չի ընդունել որպես ապացույց): Հետևաբար, վերոհիշյալ արարքը չպետք է որակել որպես նախապատրաստություն, առավել ևս՝ ավարտված հանցագործություն: Այս կերպ է անհրաժեշտ նաև որակել վարչական գործերով ապացույցներ կեղծելը:

Ինչ վերաբերում է քրեական գործերով ապացույցներ կեղծելուն, ապա հատկապես հետաքրքրություն է ներկայացնում պաշտպանի կողմից քննարկվող հանցանքը կատարելու հարցը: Հարկ ենք համարում նշել, որ գործին կցելու համար պաշտպանը կարող է ներկայացնել նյութեր, այլ ոչ թե ապացույցներ, որոնք կարող են վարույթ իրականացնող մարմնի կողմից հետագայում՝ համապատասխան դատավարական ձևակերպում ստանալուց հետո, ստուգվել և գնահատվել որպես ապացույց: Տվյալ պարագայում օբյեկտիվորեն կարող ենք վկայել, որ պաշտպանի կողմից նյութեր ներկայացնելու դեպքում արարքը կհամարվի ավարտված միայն վարույթ իրականացնող մարմնի կողմից դրանք որպես ապացույց գնահատելու դեպքում, իսկ հակառակ պարագայում արարքն անհրաժեշտ է որակել որպես հանցափորձ: Մինչդեռ պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու ժամանակ գործում առկա ապացույցներում կեղծում կատարելը կամ դրանք փոփոխելն ավարտված է համարվում կատարման պահից:

Քրեական գործով ապացույցներ կեղծելու ավարտման պահն այլ լուծում է ստանում, եթե դա կատարվում է հետաքննություն կատարող անձի, քննիչի կամ դատախազի կողմից, քանի որ նշված պաշտոնատար անձինք իրավունք ունեն ինքնուրույն ապացույցներ կցելու գործին, ուստի ապացույցների կեղծումը նրանց կողմից կարող է կատարվել բոլոր հնարավոր եղանակներով: Այդ պատճառով էլ այս դեպքում հանցագործությունն ավարտված է համարվում ապացույցը գործի մեջ ընդգրկելու պահից:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ դրա առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ հանցավորը գիտակցել է, որ ապացույցներ է կեղծել քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով: Հանցագործության շարժառիթներն ու նպատակները արարքի որակման համար նշանակություն չունեն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև հանցագործության սուբյեկտին: Քննարկվող հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է լինել քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձը (հայցվոր, պատասխանող, երրորդ անձ) կամ նրա ներկայացուցիչը, իսկ երկրորդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ՝ հետաքննություն կատարող անձը, քննիչը, դատախազը կամ պաշտպանը:

Մեր կարծիքով, անհրաժեշտություն է առաջանում հանցագործության սուբյեկտ-



ների ցանկը ընդլայնել, քանի որ անհասկանալի է օրենսդրի այն մոտեցումը, որ քրեական գործով ապացույցներ կեղծելու սուբյեկտների մեջ ընդգրկել է պաշտպանին, սակայն չի նախատեսել բոլոր այն անձանց (այդպիսիք են համարվում՝ տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները կամ ներկայացուցիչները, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը, կասկածյալը, մեղադրյալը կամ նրանց օրինական ներկայացուցիչը), ովքեր իրավունք ունեն նյութեր ներկայացնել քրեական գործին կցելու համար կամ ծանոթանալ գործի նյութերին: Այսինքն՝ տվյալ անձինք ապացույցներ կեղծելու համար ունեն այն նույն հնարավորությունները, ինչ՝ պաշտպանը: Այս անձանց հանցագործության սուբյեկտների ցանկում նախատեսելով՝ մենք կլուծենք օրենսդրության մեջ առկա այն բացը, որի պարագայում վարույթ իրականացնող մարմինը ստիպված է լինում հողվածի դիսպոզիցիայում նկարագրված նույն արարքը կատարած անձանց տարբեր հողվածներով քրեական պատասխանատվության ենթարկել, քանի որ տվյալ անձինք նախատեսված չեն հանցագործության սուբյեկտների ցանկում: Օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն այս, այլ նաև այլ անձանց ևս ընդգրկել վերոհիշյալ հանցագործության սուբյեկտների ցանկում, այսինքն՝ այն բոլոր անձանց, ովքեր որևէ կերպ կարող են ապացույցների հետ առնչվել և նաև կեղծել դրանք: Մեր կարծիքով, այդպիսի անձանց մեջ կարելի է առանձնացնել հատկապես փորձագետին, մասնագետին, օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, ինչպես նաև դատավորին, որոնք իրականում շփվում են գործում եղած ապացույցների հետ և հնարավորություն են ստանում կեղծելու դրանք: Այսպես, օրինակ՝ փորձագետին ուղարկվում են գործում առկա իրեղեն ապացույցները, որպեսզի նա կատարի փորձաքննություն, և հասկանալի է դառնում, որ փորձագետը կարող է այդ իրեղեն ապացույցների վրա եղած հետքերը ձևափոխել: Ինչ վերաբերում է օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից ապացույցներ կեղծելուն, ապա այս առումով պետք է նշել, որ ՌԴ-ն բավականին առաջադիմական մոտեցում է ցուցաբերել այդ մարմնին՝ որպես սուբյեկտ նախատեսելով (ՌԴ քրեական օրենսգիրք հողված 303): Իսկ գործող օրենսդրության պարագայում վերոհիշյալ պաշտոնատար անձանց (դատավոր, ոստիկանության օպերատիվ աշխատակից, ով հետաքննություն չի իրականացնում) կողմից համանման արարքներ կատարելու պարագայում վերջիններս կարող են պատասխանատվության ենթարկվել պաշտոնական կեղծիքի, իսկ տուժողը, մեղադրյալը և այլք՝ փաստաթղթեր կեղծելու համար:

Հարկ ենք համարում անդրադառնալ ապացույցներ կեղծելն այլ հանցակազմերից սահմանազատելու առանձնահատկություններին:

Քննարկվող հանցակազմի հետ սերտորեն առնչվում է փաստաթղթեր կեղծելու հանցակազմը: Հաճախ գործնականում դժվարություններ են առաջանում արարքը հանցագործությունների համակցությամբ կամ կոնկրետ հանցակազմով որակելու հարցը որոշելիս: Իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակների կարծիքով, այն դեպքում, երբ պաշտոնական փաստաթուղթը կեղծվում է քաղաքացիական գործում որպես ապացույց օգտագործելու նպատակով, ապա նման արարքն անհրաժեշտ է որակել միայն որպես ապացույց կեղծել: Այդ հեղինակները հիմք են ընդունում այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում հանցավորի նպատակն ապացույց կեղծելն է, և պաշտոնական փաստաթուղթ կեղծելը դիտվում է միայն հան-

ցավոր նպատակին հասնելու միջոց<sup>1</sup>: Հարկ է նշել, սակայն, որ վերը հիշատակված արարքների կատարման ժամանակ անհրաժեշտ է կատարված երկու արարքներին էլ քրեաիրավական գնահատական տալ: Տվյալ որակման համար հիմք է այն հանգամանքը, որ ապացույցներ կեղծելու օբյեկտիվ կողմը չի ընդգրկում պաշտոնական փաստաթղթեր կեղծելը և դրանք որպես ապացույց ներկայացնելը: Բացի այդ, հանցավորը գիտակցում է, որ նա պաշտոնական փաստաթղթեր է կեղծում, և այն ավարտված է համարվում կեղծելու պահից: Այլ կերպ՝ ապացույցներ կեղծելու և փաստաթղթեր կեղծելու հանցակազմերը միմյանց հետ չեն հարաբերակցվում որպես ընդհանուր և հատուկ նորմեր, հետևաբար փաստաթղթեր կեղծելը չի կարող կլանվել ապացույցներ կեղծելու հոդվածով: Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ նման արարքներն անհրաժեշտ է որակել համակցությամբ՝ ապացույցներ և փաստաթղթեր կեղծելու հոդվածներով:

Ինչ վերաբերում է քրեական գործերով ապացույցներ կեղծելուն, ապա անհրաժեշտություն է առաջանում այս հանցակազմը սահմանազատել պաշտոնական կեղծիքից, որը նախատեսված է Օրենսգրքի հոդված 314-ով: Ընդ որում, այս արարքները նախատեսող հանցակազմերի օրենսդրական ձևակերպումներն այնպիսիք են, որ երբեմն դրանց հստակ տարանջատումը կապված է որոշակի բարդությունների հետ: Սակայն այն դեպքում, երբ պաշտոնական կեղծիքը մեկ ուրիշ հանցագործության (տվյալ դեպքում՝ ապացույցներ կեղծելու) օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ հատկանիշ է համարվում, ապա կլանավում է համապատասխան հանցակազմով: Հետևաբար վարույթ իրականացնող մարմնի կողմից ապացույցներ կեղծելը պետք է որակել ոչ թե հանցագործությունների համակցությամբ, այլ որպես ապացույցներ կեղծել: Քրեական գործով ապացույց չհամարվող այլ դատավարական փաստաթղթերի կեղծումը (օրինակ՝ քննիչի որոշումների մեջ կատարված կեղծումները), եթե դրանք ընդգրկվում են պաշտոնական փաստաթուղթ հասկացության ներքո, անհրաժեշտ է որակել որպես պաշտոնական կեղծիք:

Օրենսգրքի հոդված 349-ի երրորդ մասում նախատեսված են հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Դրանցից է քրեական գործով ապացույցներ կեղծելը, որը

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով,

2) անզուգույթյամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Առաջին ծանրացնող հանգամանքի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում ծանոթանալ Օրենսգրքի ընդհանուր մասի հոդված 19-ին, որով սահմանվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների հասկացությունները: Սակայն քննարկվող հոդվածի շրջանակներում մենք չենք անդրադառնա դրանց:

Օրենսդրությամբ նախատեսված երկրորդ ծանրացնող հանգամանքը վերաբերում է անզուգույթյամբ ծանր հետևանքներ առաջացնելուն: Հարկ ենք համարում նշել, որ տվյալ ծանրացնող հանգամանքը հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է բացահայտել հետևանքների նկատմամբ նրա կողմից անզուգույթ մեղքի դրսևորումը, ինչպես նաև ապացույցներ կեղծելու ու առաջացած ծանր հետևանքներ

<sup>1</sup> Տե՛ս Ю. Щиголев, նշված աշխ., էջ 13: П. С. Метельский, նշված աշխ., էջ 137 և այլն:

րի միջև պատճառական կապի առկայությունը: Սակայն այս ծանրացնող հանգամանքի համար անհրաժեշտ է նաև բացահայտել «ծանր հետևանքներ» հասկացության բովանդակությունը: «Ծանր հետևանքները» արժեքավորվող հասկացություն է, որը կոնկրետ հանցագործության դեպքով օրենսդրի կողմից չի բացահայտվել, հետևաբար յուրաքանչյուր դեպքում դրա առկայությունը որոշում է իրավակիրառողը՝ գործի հանգամանքները հաշվի առնելով: Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում որպես այդպիսի հետևանքներ կարող են համարվել անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, անձին երկար ժամանակով կալանքի տակ պահելը, անմեղ անձին դատապարտելը, անձի ինքնասպանությունը, նրա աշխատանքային, բնակարանային կամ այլ կարևոր իրավունքների խախտումը, խոշոր չափերի նյութական վնաս պատճառելը: Նշված հետևանքների առաջացման դեպքում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ Օրենսգրքի հոդված 349-ի երրորդ մասով, և ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու կամ ինքնասպանության հասցնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով:

## УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ФАЛЬСИФИКАЦИИ ДОКАЗАТЕЛЬСТВ И БАЗОВЫЕ ЗАДАЧИ ЕЕ КВАЛИФИКАЦИИ

**Эмма Авагян**

*Старший лаборант кафедры уголовного  
процесса и криминалистики ЕГУ,*

*Главный специалист отдела совершенствования организации  
следственных работ Специальной следственной службы РА*

Статья посвящена вопросу фальсификации доказательств. Как преступление, направленное против правосудия, оно представляет достаточно огромную общественную опасность, так как фальшивые доказательства принимаются как истинные и принявшие на ее основе решения по виду могут казаться основательными. Но, в результате может привлекаться к уголовной ответственности невинное лицо, виновный может освободиться от уголовной ответственности или могут возникнуть иные опасные последствия.

В статье рассматривается уголовно-правовая характеристика деяния, вопросы, связанные с ее квалификацией, а также вопросы отграничения данного преступления от других преступлений.

## CRIMINAL-LEGAL CHARACTERISTICS OF FORGERY OF EVIDENCE AND THE BASIC PROBLEMS OF ITS QUALIFICATION

**Emma Avagyan**

*Senior laboratory assistant of the YSU Chair of Criminal Processing and Criminalistics,  
Chief specialist of the department of organizing and improving investigative activities of the RA Special Investigation Service*

The article is devoted to the forgery of evidence. As the crime, directed against the justice, it has enough great public danger, as the forgery of evidence adopt as true and making on its base decisions outwardly may seems well-founded. But, as a result, an innocent person may be subject to the criminal responsibility, the guilty person may release from criminal responsibility or may arise other dangerous circumstances.

In the article has been fulfilled the reflection to the criminal-legal characteristics of behavior, to the rows of problems connected with its qualification, as well as to the issues of discrimination of one crime from other crimes.

**Բանալի բառեր** – *ապացույցներ, ապացույցների կեղծել, ապացույցներ ոչնչացնել, արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, պաշտոնական կեղծիք, ծանր հետևանքներ, քրեական պատասխանատվություն:*

**Ключевые слова** – *доказательства, фальсификация доказательств, уничтожать доказательств, преступление, направленное против правосудия, служебный подлог, серьезные последствия, уголовная ответственность.*

**Key words** – *evidence, forgery of evidence liquidate of evidence, crime directed against the justice, official forgery, serious circumstance, criminal responsibility.*

## ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ<sup>1</sup> ԶՈՂԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Աննա Ասատրյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

Կրիմինալոգիական գրականության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ երբ խոսքը վերաբերում է հանցագործությունների կանխման կամ հանցավոր արարքներից հասարակության և պետության շահերը պաշտպանելու համար ձեռնարկվող միջոցառումներին, ապա առաջին հերթին ուշադրությունը սևեղվում է հանցագործի անձի, նրա վարքագծի վրա: Հաճախ հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ թեև հանցագործը հակահրավակական գործընթացում գլխավոր դերակատարն է, սակայն հաճախ ոչ պակաս դեր է ունենում նաև զոհը: Ինչպես իրավագիտորեն նշում են Վ. Ի. Պոլուբինսկին և Ա. Լ. Սիտկովսկին, հանցագործությունը մեծ մասամբ համակարգային երևույթ է, որը ձևավորվում է երեք փոխկապակցված տարրերով՝ իրավախախտում, հանրորեն վտանգավոր արարք և տուժող<sup>2</sup>:

Ազատագրկման վայրերում բավականին հեշտ է որոշել հանցագործության պոտենցիալ զոհերի շրջանակը, ովքեր պետք է դառնան կանխարգելիչ միջոցառումների իրականացման օբյեկտ: Այդ իսկ պատճառով անչափ կարևոր է ազատագրկման վայրերում հանցագործության զոհերի՝ կրիմինալ առումով «առավել խոցելի» դարձնող անձնային առանձնահատկությունների բացահայտումը: Տվյալ դեպքում խոսքը անձի վիկտիմայնության մասին է, ինչը տարբեր գիտնականների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում<sup>3</sup>:

Պետք է նշել, որ ոչ միայն վիկտիմայնությունը, այլև անձի վարքագիծը կարող է հանցագործության զոհ դառնալու պատճառ հանդիսանալ: Այդ դեպքում տեղին է խոսել վիկտիմային վարքագծի մասին: Օրինակ, բանտային ենթամշակույթը, ավելի կոնկրետ՝ նրա օրենքները խախտող թեկուզ անզգույշ մի խոսքը, կարող են դրդել հանցանքի, ընդ որում՝ բռնությամբ զուգորդված:

Վիկտիմայնություն ասելով՝ հասկանում ենք ֆիզիոլոգիական, հոգեբանական և /կամ/ սոցիալական հարաբերականորեն կայուն հատկանիշների ամբողջություն, որը արտաքին գործոնների ազդեցության հետևանքով պայմանավորում է անհատի՝ որպես կանոն որոշակի տեսակի, ազատագրկման վայրերում կատարվող պենիտենցիար հանցագործություններից զոհ դառնալու հավանականությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Պենիտենցիար հանցավորությունը հանցավորությունն է ազատագրկման վայրերում:

<sup>2</sup> Տե՛ս **В. И. Полубинский, А. Л. Ситковский**. Теоретические и практические основы криминальной виктимологии, М., 2006, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս **Л. В. Франк**, Виктимология и виктимность: Учебное пособие. - Душанбе, 1972. էջ 22: **Д. В. Ривман**, Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. էջ 13; **В. Я. Рыбальская**, Виктимологические исследования в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. Вып.33. М., «Юрид. лит-ра», 1980. էջ 33:

<sup>4</sup> Տե՛ս **А. Л. Репецкая**, Виновное поведение потерпевшего и принцип справедливости в уголовной политике. Иркутск, 1994. էջ 14:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման համար անհրաժեշտ է, որ ուղղիչ հիմնարկների աշխատակիցները ժամանակին կարողանան առանձնացնել վիկտիմայնությամբ աչքի ընկնող դատապարտյալներին: Հարկ է, որ քրեակատարողական համակարգի աշխատակիցները հատուկ մասնագիտական գիտելիքների կիրառմամբ կարողանան առանձնացնել նշված անձանց վիկտիմայնության ձևավորմանը նպաստող գործոնները կամ դրանց ամբողջությունը, տիրապետեն պենիտենցիար հանցագործության զոհերի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների: Միայն այս դեպքում է հնարավոր վիկտիմալոգիական առումով հետաքրքրություն ներկայացնող անձանց նկատմամբ ձեռնարկվող կոնկրետ միջոցառումների արդյունավետ կազմակերպումը<sup>1</sup>:

Քրեածին վիկտիմալոգիայի տեսանկյունից դատապարտյալների վիկտիմային առանձնահատկությունների տիպաբանությունը պետք է նպաստի նախ՝ ազատագրված վայրերում պենիտենցիար հանցավոր վարքագծի մեխանիզմում տուժողի դերի և տեղի որոշմանը, երկրորդ՝ ազատագրված դատապարտված անձանց վիկտիմային առանձնահատկությունների ուսումնասիրմանը և երրորդ՝ անհատական և խմբակային վիկտիմային վարքագծի դրսևորման պատճառների և պայմանների շրջանակի հստակեցմանը:

Ուղղիչ հիմնարկի վարչակազմի խնդիրներն են տուժողի անձնային առանձնահատկությունների իմացությունը և կանխարգելիչ աշխատանքների իրականացման ընթացքում դրանց կիրառումը:

Ուսումնասիրելով զոհի վիկտիմային վարքագծի առանձնահատկությունները՝ Վ. Ի. Ջադորոժնին առանձնացնում է հետևյալները՝ սոցիալ-ժողովրդագրական, կրթամշակութային, բարոյական, հոգեբանական, քրեաիրավական<sup>2</sup>: Կարծում ենք, սակայն, նշվածները ամբողջությամբ չեն կարող արտացոլել պենիտենցիար հանցագործությունների զոհ դարձած դատապարտյալների անձնային բոլոր առանձնահատկությունները, ուստի առաջարկում ենք այդ շարքը համարել հետևյալներով՝

1. Հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական (տարիք, առողջական վիճակ, ալկոհոլային, թմրանյութային հարբածություն և այլն),

2. դատապարտյալի անձնային սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ,

3. Դատապարտյալի կարգավիճակը պենիտենցիար հիերարխիայում. քրեաիրավական առանձնահատկություններ (դատվածություն, հանցագործության բնույթ),

4. Պենիտենցիար կամ քրեակատարողական հատկանիշներ (անձի վերաբերմունքը պատժի կրմանը),

5. Նյութական վիճակով պայմանավորված հատկանիշներ,

6. Բարոյահոգեբանական հատկանիշներ:

Դատապարտյալ զոհի անձը բնութագրող նշված հատկանիշների ուսումնասիրությունը կօգնի կանխատեսել կոնկրետ անձի կողմից վիկտիմային վարքագիծ

<sup>1</sup>Stu В. С. Минская, Индивидуализация уголовной ответственности с учетом неправомерного или безнравственного поведения потерпевшего // Сов. юстиция-1970. №20, էջ 11:

<sup>2</sup>Stu В. И. Задорожный, Концептуальные основы виктимологической профилактики преступлений: Дис. ... д-ра юрид. наук. М: Академия управления МВД России, 2006, էջեր 54-55:

դրսևորելու հնարավոր գրեթե բոլոր իրավիճակները, ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ դրանց կանխման ուղղությամբ:

Այսպես, ուսումնասիրելով պենիտենցիար հանցագործության զոհ դարձած դատապարտյալի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ պետք է նշել, որ տարիքային առանձնահատկություններն իրենցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում առաջին հերթին այն առումով, որ զարգացման յուրաքանչյուր փուլում անձը և՛ սոցիալապես, և՛ ֆիզիկապես ենթարկվում է որոշակի փոփոխությունների: ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների շրջանում մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքներից, նկատելի է, որ առավել բարձր վիկտիմայնությամբ աչքի են ընկնում 25-29 (38.4%), ինչպես նաև 29-39-ը (28.7%) տարիքային խումբերը, այնուհետև վիկտիմայնության աստիճանը նվազում է 18-24 (18,4%) և 40 ու ավելի տարիքային խումբը կազմող անձանց շրջանում /14,5%/:

Ըստ պենիտենցիար վիկտիմիզացիայի տեսակների՝ տարիքային վիկտիմայնությունը ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, սեռական բնույթի բռնի գործողությունների կատարման դեպքում առավել վիկտիմային են 18-24 տարեկանները (34.7%): Նրանք կազմում են առավել ռիսկային տարիքային խումբը: Նրանք, որպես կանոն, առաջին անգամ են դատապարտված ազատագրկման, չունեն կյանքի մեծ փորձ, աչքի չեն ընկնում զգուշավորությամբ և ֆիզիկական ուժով, բայց, այդուհանդերձ, բավականին ակտիվ են, ինչի պատճառով էլ առավել հաճախ են հայտնվում անձի դեմ ուղղված տարաբնույթ հանցագործությունների զոհի դերում: Բռնությամբ կատարվող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում (սպանություն, առողջությանը ծանր վնասի պատճառում և այլն) վիկտիմային առումով առավել վտանգավոր են 29-39 տարեկանները (28%), իսկ 50-ից բարձր տարիք ունեցող անձինք օժտված են վիկտիմայնության ցածր ցուցանիշով՝ 9.2%:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զոհերի տարիքային առանձնահատկությունները ևս ունեն որոշակի յուրահատկություններ: Այսպես, 30-39 տարեկաններն առավել բարձր վիկտիմայնություն ունեն (40%): Նշված հանցագործությունների դեպքում վիկտիմայնության առավել ցածր աստիճանով օժտված են 18-24 տարեկանները (8.5%): Դա պայմանավորված է առավելապես նրանով, որ այս տարիքում անձը տնօրինում է ավելի քիչ նյութական բարիքների, քան տարիքային այլ խմբերի պատկանող դատապարտյալները:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատագրկման վայրերում կատարվող հանցագործությունների զոհ են դառնում հիմնականում ակտիվ համարվող, երիտասարդ և միջին տարիքի անձինք:

Հանցագործությունների կատարման պահին զոհերի 76.5%-ն են կազմում լիովին առողջ անձինք՝ առանց տեսանելի որևէ շեղումների: Իսկ հաշմադամ կամ առողջական որոշակի խնդիրներ ունեցող անձինք կազմում են 23.5%-ը: Ազատագրկման դատապարտվածների շարքում քիչ չեն նաև հոգեկան խանգարումներով տառապողները: Նման իրավիճակների առաջացմանը նպաստում են, առաջին հերթին, անձի օրգանիզմում առկա տարբեր ախտահարումներ՝ վնասվածքներ, հիվանդություններ (սոմատիկ), ալկոհոլային թունավորում և այլն: Հոգեկան խանգարումների սրմանը նպաստում են նաև որոշակի սոցիալական գործոններ, մասնավորապես՝ ազատագրկման վայրում գտնվելը, ինչպես նաև՝ հակասոցիալական կենսաձևը: Տ. Ն.

ժուրավյովան գտնում է, որ հանցավոր գործնությամբ երկարատև զբաղվելը կամ հակահասարակական կենսաձև վարելը և այդ կապակցությամբ տարիներ շարունակ ազատագրվման վայրերում գտնվելը նպաստում են հոգեկան խանգարումների առաջացմանը և զարգացմանը<sup>1</sup>:

Տեսության մեջ, ինչպես նաև պրակտիկայում մեծ տարածում է գտել այն կարծիքը, ըստ որի՝ հոգեկան խանգարումներով տառապող անձինք առավել հաճախ են դառնում հանցագործության զոհ, քան հոգեպես առողջները, այսինքն՝ անառողջների վիկտիմայնությունը շատ ավելի բարձր է<sup>2</sup>:

Անխոս, մարդու վիկտիմային վարքագիծը կախված է նրա հոգեկան վիճակից: Հոգեկան խանգարումները նպաստում են անձի վիկտիմիզացմանը, խթանում վիկտիմային հայացքների, սովորությունների և պահանջմունքների ձևավորումը: Հոգեկան խանգարմամբ տառապող մարդուն բնորոշ է տագնապայնություն, ինչպես նաև ագրեսիվություն և դաժանություն, որոնք հանգեցնում են ինքնազգացողության կտրուկ վատթարացման, սեփական վարքագիծը վերահսկելու անկարողության և որպես հետևանք՝ վիկտիմային արարքների կատարման: Ուսումնասիրելով բռնությամբ զուգորդված հանցագործության զոհի հոգեկան շեղումները՝ Ս. Ա Պոտապովը իրավացիորեն նշում է, որ «հոգեկան խանգարումներով տառապող անձինք, որոնց մեջ խաթարված է իրականությունը ճիշտ ընկալելու և արտացոլելու ունակությունը, հաճախ դառնում են խոցելի իրավախախտումների նկատմամբ, ընդ որում՝ նման հատկանիշի ձևավորման գործում որոշակի դեր ունեն հենց հոգեկան հիվանդության առկայությամբ պայմանավորված գործոնները»<sup>3</sup>: Հոգեպես անառողջ անձանց վիկտիմայնության ձևավորման մեջ կարևոր դերակատարություն ունեն հոգեպաթոլոգիական այնպիսի գործոններ, ինչպիսիք են զառանցական համախտանիշները, հալյուցինացիաները, շարժողական գրգռվածությունը<sup>4</sup>: Նշված վիճակներն են հիմնականում պայմանավորում հոգեպես անառողջ անձանց պենիտենցիար վիկտիմիզացմանը նպաստող ոչ համարժեք և ագրեսիվ գործողությունների կատարումը:

Որոշակի հոգեկան խանգարումներով տառապող անձինք ունակ են կիրառելու իրենց հմտությունները, գիտելիքները, պահպանելու սոցիալական կապերը և սոցիալական միջավայրին հարմարվելու ունակությունը: Այդպիսի անձանց հոգեկան ոլորտը լիովին ավտահարված չէ, ինչը կարող է ինչպես նպաստել անձի սոցիալական ադապտացմանը, այնպես էլ ընդհակառակը՝ վիկտիմայնության բարձրացման վտանգ ստեղծել:

Այսպիսով, գտնում ենք, որ ճիշտ չէր լինի բացառել հոգեկան շեղումներ ունեցող մեղսունակ զոհերի դերը հանցագործության կատարման մեխանիզմում: Միա-

<sup>1</sup> Տե՛ս **Т. Н. Журавлева**, Институт принудительных мер медицинского характера в законодательстве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2002, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս **В. Я. Рыбальская**, Виктимологическое исследование в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. М., 1980, էջ 33; **Schafer S.** The victim and his criminal. - New York: Random House publ., 1968, էջեր 43-44; **В. С. Минская, Г. И. Чечель**, Виктимологические факторы и механизм преступного поведения. - Иркутск: Изд. Иркутского ун-та, 1988, էջեր 80-84, 85:

<sup>3</sup> **Потапов С. А.**, Психические аномальные жертвы насильственных преступлений // Человек против человека. Преступное насилие / Сб. ст. под общ. ред. Ю.М. Антоняна, С.Ф. Милукова. - СПб., 1994, էջ 120:

<sup>4</sup> Տե՛ս **Н. М. Жариков, Г. В., Морозов, Д. Ф. Хритинин**, Судебная психиатрия. - М.: Изд. группа ИНФРА М - НОРМА, 2006, էջ 53:



ժամանակ շատ դժվար է տալ այդ դերի գնահատականը, քանի որ հոգեկան խանգարումն ինքնին ունակ է ծնելու վիկտիմային կամ հանցավոր վարքագիծ: Յու. Մ. Անտոնյանը և Ս. Վ. Բորոդինը այս կապակցությամբ ուղղակիորեն նշում են. «Եթե հոգեկան խանգարումը հանրորեն վտանգավոր գործողության պատճառ է, ապա հանցագործություն չկա»<sup>1</sup>:

Հոգեկան խանգարումը ոչ մի կերպ չի կարող լինել վիկտիմիզացման պատճառ կամ շարժառիթ. այն ունակ է միայն անհրաժեշտ պայմաններ ստեղծելու վերջիններիս իրականացման համար: Այսպիսով, կարելի է ասել, որ հոգեկան խանգարումը անձի՝ սեփական վարքագիծը վերահսկելու կարողությունը թուլացնող և դրանով իսկ վերջինիս վիկտիմայնության ձևավորմանը նպաստող գործոն է:

Անձի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները վերջինիս վիկտիմիզացման գործընթացում «կատալիզատորի» դեր են խաղում: Դրանք կարող են ինչպես նպաստել, այնպես էլ խոչընդոտել անձի պենիտենցիար վիկտիմիզացմանը, ինչպես արագացնել, այնպես էլ դանդաղեցնել մոտիվացիայի ձևավորումը, նպաստել մոտիվացիայի իրագործմանը անհապաղ կամ հետաձգել դրա իրականացումը որոշակի ժամկետով: Այսպիսով, անձի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝

1. ներգործում են ֆիզիոլոգիական և հոգեբանական գործընթացների, իսկ դրանց միջոցով նաև մոտիվացիայի ձևավորման վրա,

2. ազդում են ինչպես սեփական հնարավորությունները, այնպես էլ ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները համարժեք գնահատելու ունակության վրա,

3. ինքնատիպ «կատալիզատորի» դեր են խաղում վիկտիմայնության ձևավորման գործում:

Անձի վիկտիմայնությունը ենթադրում է վերջինիս՝ հանցագործության զոհ դառնալու առավել մեծ հնարավորություն, որի իրագործումը, սակայն, կախված է նաև մի շարք այլ հանգամանքներից:

Ազատագրկման պայմաններին հարմարվելու կապակցությամբ դատապարտյալի անձնային սոցիալ-հոգեբանական որակների ուսումնասիրությունը ևս մեծ նշանակություն կարող է ունենալ պենիտանցիար հանցավորության զոհ դարձած դատապարտյալների վիկտիմային վարքագծի գնահատման համար:

Մարդու վարքագիծը, այդ թվում՝ վիկտիմային, պայմանավորված է վերջինիս արժեքային համակարգով, պատկերացումներով, սովորություններով, որոնք կրում են տվյալ մարդու՝ միջավայրում ձևավորված բարքերի ազդեցությունը<sup>2</sup>: Սակայն պետք է նշել, որ սոցիալական միջավայրի բնութագիրն ազատության և անազատության պայմաններում էապես տարբեր է:

Այսպես, ազատության մեջ անձի՝ նախկինում ունեցած սոցիալական կապերը, կյանքի մասին պատկերացումները անազատության պայմաններում չեն կարող լիովին ընդունվել և ավելին՝ իրականացվել: Դրանք ուղղակի կորցնում են իրենց արդիականությունը:

<sup>1</sup> Антонян Ю. М., Бородин С. В. Преступность и психические аномалии. М.: Наука, 1987, էջ 29:

<sup>2</sup> Ст'ю Кудрявцев В. Н. Преступность и нравы переходного общества. М.: Юрист, 2002, էջ 19:

Միջավայրին հարմարվելու ունակությունը հատուկ է ցանկացած կենդանի էակի: Սակայն մարդու հարմարվելու գործընթացում կենսաբանական մեխանիզմների հետ մեկտեղ մեծ դեր են խաղում նաև սոցիալական գործոնները<sup>1</sup>: Ժամանակի ընթացքում անհատի մեջ ձևավորվում է ադապտացիոն մեխանիզմ՝ հիմնված ոչ միայն ֆիզիոլոգիական հարմարվողականության, այլև միջանձնային հարաբերությունների վերափոխման վրա: Այսպիսով, ուսումնասիրվող երևույթի էությունը անձի կենսաբանական և սոցիալական ադապտացումն է նոր կենսապայմաններին, կանոնակարգին, սոցիալական նոր միջավայրին<sup>2</sup>:

Ադապտացման գործընթացի առանձնահատկությունը կապված է ենթամշակույթի պահանջներին ազատագրկվածների հարմարվելու հետ: Բանտային ենթամշակույթը հիմնվում է դատապարտյալների դասակարգման վրա, ինչը ենթադրում է անձի՝ բանտային հիերարխիայում որոշակի կարգավիճակ և դրանով իսկ պայմանավորված՝ որոշակի իրավունքներ և պարտականություններ: Դատապարտյալի ընտրության ազատությունը, որպես կանոն, սահմանափակվում է բանտային օրենքներով, որոնց խախտումը պատժելի է ազատագրկվածների հանրության կողմից<sup>3</sup>:

Հաճախ կարող է թվալ, թե դատապարտյալը լիովին հարմարվել է ուղղիչ հիմնարկի միջավայրին, բայց իրականում ամեն ինչ այլ է: Այս դեպքում խոսքը կեղծ, թվացյալ հարմարվողականության, դրա ձևացման մասին է<sup>4</sup>: Կեղծ հարմարվողականությունը հատուկ է քրեակատարողական հիմնարկների վարչակազմի հետ համագործակցող, դրական բնութագրվող դատապարտյալներին: Դատապարտյալների հիմնական մասը բացասաբար է վերաբերվում կեղծ ադապտացված դատապարտյալներին, քանի որ վերջիններս, ելնելով իրենց նեղ անձնական շահերից, համագործակցում են վարչակազմի հետ: Հենց նրանք էլ հաճախ խախտում են պատժի կրման պայմանները, իրենց վարքագծով դառնում խմբային ընդհարումների և զանգվածային անկարգությունների պատճառ:

Չադապտացված դատապարտյալները բավականաչափ շրջահայաց չեն, հակված են ալկոհոլամոլության և թմրամոլության, կոնֆլիկտային են և չհարմարվող: Հարմարվելու անընդունակությունը, բանտային հիերարխիայում գրաված ցածր դիրքը դառնում են հաճախակի ընդհարումների պատճառ<sup>5</sup>:

Կարծում ենք, ամենց ուսումնասիրելու հանցագործի և տուժողի փոխհարաբերությունները, վերջինիս վարքագիծը, հնարավոր չի լինի լրիվ ծավալով բացահայտել ազատագրկման վայրերում կատարված հանցագործությունների համար էական նշանակություն ունեցող բոլոր հանագամանքները և կազմել դրանց ամբողջական պատկերը, ինչն ամառին հերթին անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցառումներ

<sup>1</sup> Տե՛ս **Буева Л. П.** Проблемы деятельности личности в марксистской и буржуазной социологии // Исторический материализм как теория социального познания и деятельности. М., 1972, էջեր 44-45:

<sup>2</sup> Տե՛ս **Тюгаева Н. А.** Понятие адаптации личности осужденного к условиям отбывания наказания в ИТК // Личность преступника: криминологический и исправительно-трудовой аспекты: Труды РВУИ МВД СССР. Рязань, 1977. Вып. 6, էջ 222:

<sup>3</sup> Տե՛ս **Кудрявцев В. Н.** Стратегии борьбы с преступностью. М.: Юристъ, 2003, էջ 274:

<sup>4</sup> Տե՛ս **Корель Л. В.** Социология адаптаций: Вопросы теории, методологии и методики. Новосибирск: Наука, 2005, էջ 398:

<sup>5</sup> Տե՛ս **Усс В. А.**, Лишение свободы. М.: 1985, էջ 54:

րի մշակման, հանցագործությունների բացահայտման, հետաքննության անցկացման, պատժի և պատասխանատվության անհատականացման համար:

Հանցագործը, տուժողը և հանցածին իրավիճակը սերտ փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջական համակարգ, որը կարող է գոյություն ունենալ նշված բոլոր տարրերի առկայության դեպքում միայն: Ազատագրված պայմաններում դատապարտյալների վարքագիծը կարգավորվում է ոչ միայն և ոչ այնքան կանոնակարգի պայմաններով, որքան բանտային ենթամշակույթով, ավանդույթներով, ինչի արդյունքում զոհի վարքագիծը էական դերակատարում է ունենում հանցանքի կատարման մեխանիզմում:

## КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ЖЕРТВ ПЕНИТЕНЦИАРНЫХ ПРЕСТУПЛЕНИЙ

**Анна Асатрян**

*Соискатель кафедры уголовного права ЕГУ*

Вопросы предупреждения виктимного поведения потерпевших имеют большое значение не только для укрепления правопорядка и законности. Виктимное поведение потерпевшего и преступное поведение связаны друг с другом. Проблемы предупреждения виктимного поведения могут быть успешно решены с использованием новых достижений различных наук, изучающих человека и условия его жизнедеятельности, на основе эмпирических исследований и правильной теоретической интерпретации их результатов.

## CHRIMINOLOGICAL CHARACTERISTICS OF VICTIMS OF PENITENTIARY CRIMES

**Anna Asatryan**

*PHD student at the YSU Chair of the Criminal Law*

Questions of prevention of victim behavior of the victims are of great importance not only for the strengthening of law and order. Victim behavior of the victim and the criminal behavior are connected with each other. Issues of prevention of victim behavior can be successfully resolved with the use of new achievements of various sciences studying man and his conditions of life, based on empirical research and correct theoretical interpretation of their results.

**Բանալի բառեր** – վիկտիմային վարքագիծ, զոհ, իրավակարգ, հանցավոր վարքագիծ, իրավախախտ:

**Ключевые слова** – виктимное поведение, потерпевший, правопорядок, преступное поведение, правонарушитель.

**Key words** – victim, victim behavior, criminal behavior, order, offender.

## ԱՆՁԻՆ ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱԿԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Նարեկ Մինասյան

*Երևանի Չլաժոր համալսարանի ասպիրանտ*

Մրցակացային դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն այն կարևոր խնդիրն է, որը պետք է ապահովվի քրեադատավարական օրենքով ամրագրված արդյունավետ դատավարական ձևի միջոցով: Նշված շահերի պաշտպանության օրենսդրական կարգավորումը բավականին բարդ է, իսկ առավել բարդ է քրեական դատավարությունում, որովհետև այստեղ ավելի հաճախ և անմիջականորեն են շոշափվում ինչպես անձնական, այնպես էլ հանրային շահերը: Պետք է համաձայնել Ս. Ա. Դիլբանդյանի այն տեսակետի հետ, որ հանրային և մասնավոր հիմքերի հարաբերակացությունը քրեական դատավարության սկզբունքների ըմբռնման բանալին է<sup>1</sup>: Դատավարական ձևի տարբերակումը, որը նախատեսում է քրեական դատավարության գործող օրենսգրքը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետև՝ Նախագծ), չի կարող ենթադրել անձի իրավունքների այնպիսի սահմանափակում, որը կհանգեցնի մեղադրանքի և պաշտպանության հավասարակշռության խախտման: Քրեական դատավարության գործող օրենսգրքում, ճիշտ է, հանրայնությունը որպես առանձին կատեգորիա չի առանձնացված, սակայն այն առկա է բազմաթիվ նորմերում և ինստիտուտներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածում սահմանված է. «Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով», կամ «Հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, հարցաքննել, նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով» (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 34): Հանցավորության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը կարևոր է քրեադատավարական օրենսդրության զարգացման, դատավարության սկզբունքների և դատավարական ձևի, նրա խնդիրների լուծման համար, որովհետև դրանց գիտական մշակումը և օրենսդրական ճիշտ կարգավորումը նպաստում են հանրային և անձնական շահերի պաշտպանությանը<sup>2</sup>:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում, միջազգային պայմանագրերում, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում տեղ

<sup>1</sup> Տե՛ս Դիլբանդյան Ս. Ա. Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Եր., ԵՊՀ հրատ. 2011, էջ 45:

<sup>2</sup> Տե՛ս Общественные и личные интересы в уголовном судопроизводстве, Воронеж, 1984, էջ 6:

գտած որոշ հիմնարար գաղափարներ, որոնք գործող օրենսգրքում չեն առանձնացվել որպես սկզբունքներ՝ Նախագծում ամրագրված են որպես այդպիսիք (մասնավորապես՝ հանրայնությունը, պատշաճ ապացուցումը, վարույթի ողջամիտ ժամկետը, ոչ իրավաչափ վարքագծի արգելքը)<sup>1</sup>:

Նախագծում հեղինակներն առվել առարկայական դարձրին հանրայնության էությունը, այսինքն՝ այն առանձնացրին որպես քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք, որի հիմքում դրեցին հետևյալ գաղափարը. վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը (հոդված 15): Այս հոդվածից հետևում է, որ հանրայնությունը քրեական գործերով վարույթի հիմքն է, սակայն այն շահերը, որոնք բխվում են այդ հարաբերություններում, պետք է պաշտպանվեն հավասարապես: Քրեական դատավարությունը հիմնականում հանրային բնույթ է կրում, այսինքն՝ քրեադատավարական հարաբերությունները ծագում, զարգանում և դադարեցվում են իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կամահայտությամբ: Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինները, հանդես գալով պետության անունից և ներկայացնելով հանրային շահերը, իրավունք ունեն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառել դատավարությանը մասնակից անձանց նկատմամբ<sup>2</sup>: Հանրայնության դրսևորման ձևերից են անձին մեղադրյալ ներգրավելն ու մեղադրանքի առաջադրումը, քանի որ դրանով ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ սկսվում է քրեական հետապնդումը:

Մրցակցությունն անհնար է առանց մեղադրանքի և պաշտպանության, քանի որ այն առաջացնում է համապատասխան դատավարական հարաբերություններ, որոնք իրացվում են դատավարության մասնակիցներին իրավունքներով ու պարտականություններով օժտելով: Դատավարության մրցակցային բնույթն արդեն իսկ ենթադրում է նաև մինչդատական վարույթում ապացուցման գործընթացին կողմերի ակտիվ մասնակցություն:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելը քրեական դատավարության այն ինստիտուտներից է, որը կանխորոշում է քրեական դատավարության հետագա ընթացքը, և գործի քննությունը ստանում է կոնկրետ ուղղվածություն: Այն կոչված է ապահովելու անձի պաշտպանության իրավունքը: Ճիշտ է, անձի սահմանադրական որոշ հիմնական իրավունքներ կարող են սահմանափակվել միայն որպես մեղադրյալ ներգրավելուց հետո, բայց այնուամենայնիվ նշված ինստիտուտի նպատակը ոչ թե անձի իրավունքների սահմանափակումն է, այլ պաշտպանությունը: Այս հանգամանքն արդեն վկայում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի կարևորության մասին:

Միանգամայն ընդունելի է Մ. Ս. Ստորգովիչի այն կարծիքը, որ անձին մեղադրյալ ներգրավելը որոշ առումներով կարող է նպաստավոր լինել մեղադրյալ ներգրավված անձի համար, որովհետև օրենքի ուժով անձը հնարավորություն է ստանում դատավարական իրավունքների և դրանց իրականացումն ապահովող երաշ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: ՀՀ իրավաբանների միություն, Երևան, 2014, էջ 47-48:

<sup>2</sup> Տե՛ս «Հանցավորության դեմ պայքարը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնախնդիրները»: Երևանի համալս. իրատ.: Եր., 2004, էջ 123:

խիքների միջոցով վիճարկել մեղադրանքը, որը չէր կարող լինել, եթե նախաքննությունն իրականացվեր առանց անձին մեղադրյալ ներգրավելու: Նման դեպքերում անձը մեղադրանքը վիճարկելու հնարավորություն, իրեն արդարացնող կամ պատասխանատվությունը մեղմացնող փաստարկներ և ապացույցներ կարող է ներկայացնել միայն նախաքննության ավարտին: Դրա համար ստեղծվում է տարատեսակ վիճակ, այսինքն անձին մեղադրյալ ներգրավելը հայտնի պատճառով նպաստավոր է ներգրավված անձի համար և ինչ-որ չափով բխում է նրա շահերից<sup>1</sup>: Կարծում ենք, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելը նաև մեղադրյալի համար խթանիչ միջոց է՝ մասնակցելու ապացուցմանը և հիմնավորելու իրեն ներկայացված մեղադրանքի անօրինական կամ անհիմն լինելը:

Լ. Մ. Կարնեևայի կարծիքով, անձին որպես մեղադրյալ ներգրավելու էությունը այն է, որ համապատասխան որոշումը կայացնելուց հետո առաջին անգամ պետության անունից քրեական դատավարության սուբյեկտներից մեկը կոչվում է հանցագործություն կատարած անձ, սակայն միևնույն ժամանակ նա դեռևս օժտված չէ պետության կողմից մեղավոր ճանաչված սուբյեկտի կարգավիճակով<sup>2</sup>: Իհարկե արդարացված կլիներ, եթե նշված սուբյեկտին անվանենք ոչ թե հանցագործություն կատարած անձ, այլ ենթադրյալ հանցանք կատարած անձ, քանի որ ըստ անմեղության կանխավարկածի՝ այն բոլոր փաստերը, որոնք ընկած են նրա մեղադրանքի հիմքում դեռևս ենթադրություններ են:

Քանի որ անձին որպես մեղադրյալ ներգրավելն առաջացնում է իրավական լուրջ հետևանքներ, հետևաբար քննիչն անձին մեղադրյալ պետք է ներգրավի բավարար հիմքերի առկայության դեպքում: Իհարկե, անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահին նա կարող է չունենալ գործի բոլոր հանգամանքների մասին մանրամասն տվյալներ, սակայն այն տվյալները, որոնք վկայում են անձի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու մասին, բավարար են նրան մեղադրյալ ներգրավելու համար<sup>3</sup>: Իհարկե, տվյալ դեպքում մենք գործ ունենք գնահատողական կատեգորիայի հետ, սակայն բոլոր դեպքերում բացահայտված գործի հանգամանքներն ու դրանք հաստատող փաստական տվյալները պետք է բավարար լինեն հիմնավոր կասկածը հաստատելու համար:

Ղատավարական գրականության մեջ անձին որպես մեղադրյալ ներգրավելու նշանակությունը արդարացիորեն հանգեցնում են հետևյալի՝ 1) դատավարությունում հանդես է գալիս նոր ակտիվ սուբյեկտ՝ մեղադրյալ, որն օժտված է համապատասխան իրավունքներով ու պարտականություններով, 2) նախաքննության մարմինը հնարավորություն է ստանում մեղադրյալի նկատմամբ կիրառել ղատավարական հարկադրանքի միջոցներ, 3) մեղադրյալի հարցաքննությամբ քրեական հետապնդման մարմինը ձեռք է բերում ապացույց, որը ինչպես ապացուցման, այնպես էլ

<sup>1</sup> Տե՛ս **Строгович М. С.** Право обвиняемого на защиту и презумпция невиновности. М., 1984, էջ 31:

<sup>2</sup> Տե՛ս **Карнеева Л. М.** Привлечение к уголовной ответственности. Законность и обоснованность, М., 1971, էջ 6:

<sup>3</sup> Տե՛ս **Дьяченко М. С.** Привлечение в качестве обвиняемого и предъявление обвинения // Уголовный процесс: учебник для вузов /под. Ред. П.А. Лупинской. М., Юристь, 1995, էջ 276:

պաշտպանության միջոց է, 4) դատավարությունը ստանում է որոշակի ուղղվածություն, և ընդգծվում են դատական քննության առարկան և սահմանները<sup>1</sup>:

Քրեական դատավարությունում «անձին որպես մեղադրյալ ներգրավել» հասկացությունը ներկայացվում է մի քանի իմաստներով՝ 1) որպես դատավարական ինստիտուտ, 2) որպես նախաքննության որշակի հատված, 3) որպես դատավարական ակտ կամ որոշում: Նշված հասկացությունների առանձնացումը վկայում է իրավաբանական բարդ կատեգորիայի մասին, իսկ դրանց առանձին ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու էության և բնույթի մասին:

Քրեական դատավարության գործող օրենսգրքում տրված է դատավարական տարբեր կատեգորիաների բնորոշումը, սակայն նույնը չենք կարող ասել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որովհետև ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածում ներկայացված կատեգորիաների շարքում չկա այդ հասկացության բնորոշումը: Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ և 64-րդ հոդվածներում տրված է «մեղադրանք», «մեղադրյալ» հասկացությունների բնորոշումը, սակայն դրանք այն հասկացություններ են, որոնք կանխորոշում են անձին որպես մեղադրյալ ներգրավելու հասկացության բովանդակային կողմը: Մեղադրանքը քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված կարգով ներկայացված է հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարք կատարելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 6, մաս 1, կետ 20): Մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 64, մաս 1): Քրեական դատավարությունում հանդիպում ենք նաև նման այլ հասկացությունների, մասնավորապես մեղադրանքի կողմ, մեղադրող և այլն: Ինչպես տեսնում ենք, մեղադրյալ ներգրավելն այն գործողությունն է, որն ապահովում է քրեական դատավարությունում սուբյեկտի ի հայտ գալը և քրեական գործով վարույթի հետագա ուղղվածությունը: Անձին որպես մեղադրյալ ներգրավելը նաև մեղադրյալին ապացուցման գործընթացին ներգրավելու դատավարական միջոց է:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելն այնպիսի ինստիտուտ է, որը ենթադրում է միմյանց հաջորդող համապատասխան գործողությունների կատարում: Քանի որ դատավարական այս ինստիտուտը բովանդակային լայն հասկացություն է, հետևաբար դատավարական գրականության մեջ դրա բնորոշման վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Ավելին, առանձին աշխատանքներում, որոնք նվիրված են անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմնախնդիրների ուսումնասիրությանը ընդհանրապես չկա նշված հասկացության բնորոշումը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Чеботарева И. Н.** Обвиняемый в стадии предварительного расследования современного российского уголовного процесса. Дисс. ... канд. юрид. наук. Воронеж, 2004, էջ 33; **Шадрин В. С.** Обеспечение прав личности при расследовании преступлений /Волгоград, 1997, էջ 96, **Карнеева Л. М.** Привлечение в качестве обвиняемого. М., 1962, **Ефимичев С. П.** Привлечение к уголовной ответственности в качестве обвиняемого – этап стадии предварительного расследования. //Правоведение, 1985, N 5, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս **Карнеева Л. М.** Привлечение в качестве обвиняемого. М., 1962: **Статкус В. Ф., Цоколов И. А., Жидких А. А.** Предъявление обвинения и составления обвинительного заключения. /Под ред. И. А. Попова. М., 2002:

Ղատավարական գրականության մեջ անձին որպես մեղադրյալ ներգրավելը ներկայացվում է տարբեր տեսանկյունից: Ղատավարագետների մի խումբ անձին որպես մեղադրյալ ներգրավելը ներկայացնում է որպես դատավարական ինստիտուտ: Իրավունքի տեսության մեջ իրավական ինստիտուտ ասելով հասկանում են իրավական նորմերի համակցություն, որն իրավունքի ճյուղի առանձնացված մասն է և կարգավորում է միասեռ հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ, որոշակի կողմ<sup>1</sup>: Քրեական դատավարության իրավունքի շրջանակներում մեղադրյալ ներգրավելն ներառում է ավելի նեղ շրջանակի նորմեր: Այն նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ գլուխում և կոչվում է «Որպես մեղադրյալ ներգրավելը»: Հիմք ընդունելով տեսության մեջ տրված բնորոշումը՝ կարող ենք ասել, որ որպես մեղադրյալ ներգրավելն այնպիսի դատավարական ինստիտուտ է, որը ներառում է իրավական նորմերի այն համակցությունը, որոնք կարգավորում են որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու վարույթային մասը:

Իհարկե, քրեական դատավարության օրենսգրքի նշված գլխում տեղ գտած հոդվածները շատ չեն, սակայն մեղադրանքին վերաբերող շատ հարցեր իրենց կարգավորումն են ստացել օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի այլ ինստիտուտներում, օրինակ՝ մեղադրանքի հասկացություն, մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները, մեղադրանքի փոփոխումը կամ լրացումը դատական քննության փուլում և այլն: Բնականաբար հարց է առաջանում, թե դատավարական այս ինստիտուտն ինչպիսի իրավական հարցեր է ներառում իր կարգավորման մեջ:

Քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխում տեղ գտած իրավական վերլուծությունից հետևում է, որ որպես մեղադրյալ ներգրավելը ներառում է «որպես մեղադրյալ ներգրավելը» և «մեղադրանքի առաջադրումը»: Իհարկե, մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելը տարբեր գործողություններ են, բայց դրանք կազմում են միասնական ինստիտուտի անբաժան մասերը: Կարծում ենք, որ հենց այդ տրամաբանությամբ էլ այն կարգավորված է օրենսգրքում և կոչվում է մեկ ընդհանուր անվանմամբ՝ «Որպես մեղադրյալ ներգրավելը»<sup>2</sup>: Չնայած օրենսդրական հստակ կարգավորմանը՝ դատավարական գրականության մեջ այս կապակցությամբ միանշանակ մոտեցում չկա, քանի որ որպես մեղադրյալ ներգրավելու մեջ ներառում են նաև մեղադրյալին կանչելը և հարցաքննելը: Քրեական դատավարույթ-

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Теория права, М., 1994, էջ 12, **Վաղարշյան Ա. Գ.** Պետության և իրավունքի տեսություն – 2: Ղատախոսություն, Եր., 2011, 204 էջ:

<sup>2</sup> Ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի տրամաբանության՝ դրանք միմյանցից առանձնանում են, քանի որ այն նախ դառնում է քրեական հետապնդման հարուցում, երկրորդ՝ մեղադրյալ ներգրավելու և մեղադրանքի առաջադրման սուբյեկտները տարբեր են, այսինքն՝ քրեական հետապնդում հարուցելու որոշումը կայացնում է միայն դատախազը, իսկ մեղադրանքն առաջադրում է քննիչը: Կարծում ենք, որ այսպիսի կարգավորումն ավելի է հստակեցնում քննիչի դատավարական գործառնության բնույթը, այսինքն՝ քննիչն իրականացնում է ոչ թե մեղադրանքի, այլ քրեական գործի քննության գործառնություն, քանի որ մեղադրանքը որպես քրեական հետապնդման իրականացման ձև ներկայացվում է դատախազի կողմից: Միայն դատախազի կողմից անձին մեղադրյալ ներգրավելը կամ քրեական հետապնդում հարուցելը համարվում է մինչդատական վարույթում դատախազի կողմից մեղադրական գործառնության իրացում: Քննիչի հետագա գործունեությունն ուղղված է քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:



յան գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումն արդարացված է, որովհետև մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելը պետք է տեսնել միասնության մեջ: Եթե մեղադրյալ ներգրավելու իմաստը մեղադրանք ներկայացնելն է, հետևաբար այն ներկայացված կարող է համարվել միայն մեղադրյալին իրազեկելուց հետո:

Այսպես, Վ. Ա. Սերբուլովի կարծիքով, որպես մեղադրյալ ներգրավելը ներառում է միայն համապատասխան որոշում կայացնելը, այսինքն՝ անձին մեղադրյալի կարգավիճակ տալը<sup>1</sup>:

Ղատավարագետների մեծ մասի կարծիքով՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտը ներառում է հետևյալ երկու տարրերը՝ 1) քննիչի կողմից անձին որպես մեղադրյալ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, 2) մեղադրյալին մեղադրանք առաջադրելը<sup>2</sup>:

Ս. Պ. Եֆիմիչևի կարծիքով, որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի մաս է նաև մեղադրյալի հարցաքննությունը<sup>3</sup>: Կարծում ենք, որ Ա. Ի. Տրուսովը տալիս է նշված հասկացության առավել լայն բնորոշումը, այսինքն՝ այստեղ ներառելով հետևյալ տարրերը՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը, մեղադրանքի առաջադրումը, նրա իրավունքների պարզաբանումը և դրանց իրականացման ապահովումը, ինչպես նաև մեղադրյալի հարցաքննությունը<sup>4</sup>: Ղատավարական գրականության մեջ նշված կարծիքը քննդատվել է այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալ ներգրավելը, մեղադրանքի առաջադրումը և հարցաքննությունը ժամանակագրական առումով սերտորեն կապված են, բայց այդ ակտերն ունեն տարբեր իավական բնույթ և նշանակություն: Որպես մեղադրյալ ներգրավելը որոշում է, որի կայացման միջոցով ի հայտ է գալիս մեղադրյալը, իսկ մեղադրանքի առաջադրումը և հարցաքննությունը դատավարական գործողություններ են, որոնցից առաջինի միջոցով մեղադրյալը իրազեկվում է, թե ինչում է մեղադրվում, իսկ երկրորդը՝ քննչական գործողություն, որը կոչված է ապացույցի ձեռքբերմանը<sup>5</sup>: Մեղադրանքը բնորոշվում է որպես դատավարական փաստաթղթերում կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն:

Կարծում ենք, որ Ա. Ի. Տրուսովի կարծիքն առավել ընդունելի է, քանի որ այն ներառում է դատավարական այս ինստիտուտի էությունը բնութագրող բոլոր գործողությունները, որոնք գտնվում են տրամաբանական հաջորդականության մեջ և միասնաբար բնութագրում են մեղադրյալ ներգրավելու ինստիտուտի էությունն ու նշանակությունը:

Քրեադատավարական գործող օրենսդրության կարգավորման պայմաններում որպես մեղադրյալ ներգրավելը պետք է ներկայացնել նաև որպես քրեական

<sup>1</sup> Տե՛ս **Сербулов В. А.** Привлечение в качестве обвиняемого в советском уголовном процессе: дис. .... канд. юрид. наук: Киев, 1989, էջ 35:

<sup>2</sup> Տե՛ս **Строгович М. С.** Курс советского уголовного процесса. Т. 2. М., 1970, էջ 86, **Карнеева Л. М.** Предьявление обвинения и допрос обвиняемого. Советский уголовный процесс, /Под ред. В. С. Бородина, М., 1982, էջ 310, **Колбеева М. Ю.** Институт привлечения лица в качестве обвиняемого в условиях реформирования уголовно-процессуального законодательства: дисс. ... канд. юрид. наук, М., 2013, էջ 23:

<sup>3</sup> Տե՛ս **Ефимичев С. П.** Предварительное расследование и его роль в реализации уголовной ответственности: дисс. ... д-ра. юрид. наук, Л., 1987, էջ 16:

<sup>4</sup> Տե՛ս **Трусов А. И.** նշվ. աշխ., էջ 256:

<sup>5</sup> Տե՛ս Уголовный процесс: Учебник, //Под ред. И.Л. Петрухина. – М.: М., 2001, էջ 255:

հետապնդման իրականացման ձև, որովհետև, ըստ ՀՀ քր. դատ. օ-րի 6-րդ հոդվածի 27-րդ կետի, քրեական հետապնդում հարուցելը նաև անձին մեղադրյալ ներգրավելն է:

Ժամանակակից քրեական դատավարության իրավունքում անձին մեղադրյալ ներգրավել հասկացության վերաբերյալ չկա միասնական մոտեցում, որովհետև այն հարաբերակցվում է նաև այնպիսի իրավական կատեգորիաների հետ, ինչպիսիք են «անձին քրեական պատասխանատվության ենթարկելը» և «քրեական հետապնդում հարուցելը»: Պատահական չէ, որ քրական հետապնդումը հարուցելը քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով ներկայացվում է որպես մեղադրյալ ներգրավել:

Իհարկե, որպես մեղադրյալ ներգրավելու իստիտուտի բնութագրման համար կարևոր մասն է նաև *մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը*: Քրեական դատավարության ոլորտում որոշում կայացնելը դատավարական տեսանկյունից բնորոշվում է որպես «օրենքով սահմանված դատավարական ձև ստացած իրավական ակտ, որում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատավորը կամ դատարանն իրենց իրավասության շրջանակներում օրենքով սահմանված կարգով պատասխանում են գործի շրջանակներում առաջացող հարցերին և դրսևորում են իրավագոր կամարտահայտություն այն գործողությունների առնչությամբ, որոնք բխում են պարզված հանգամանքներից և օրենքի պահանջներից և ուղղված են քրեական դատավարության խնդիրների իրագործմանը»<sup>1</sup>: Որքանով որ որոշումները վերաբերում են դատավարական գործունեությանը, ընդունվում են դրա ընթացակարգի շրջանակներում, ունեն դատավարական բնույթ, այդքանով էլ դրանք հիմնականում հետազոտվում են մեկ գիտության՝ քրեական դատավարության շրջանակներում:

Քրեական դատավարությունում որոշումներն ունեն վճռորոշ դեր, որովհետև դրանցով են պայմանավորված քրեական գործով վարույթի ընթացքը, անցումը դատավարական մեկ փուլից մյուսը: Քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների իրավակիրառ գործունեությունն արտահայտվում է համապատասխան դատավարական որոշումների կայացմամբ: Քրեական դատավարության իրավունքի գիտության կողմից դատավարական որոշումների հիմնահարցերը ենթարկվել են բազմաթիվ ուսումնասիրությունների՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշման առանձին տեսակների հետ կապված:

Քրեադատավարական օրենսդրությունից հետևում է, որ դատավարական որոշումը բովանդակային լայն հասկացություն է և կախված այն բանից, թե ինչ հարց է լուծվում, բաժանվում է մի քանի տեսակների: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատավարական որոշումները՝ քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ՝ դատավճիռներ, որոշումներ: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը դատավարական որոշում ասելով հասկանում է վարույթի ընթացքում կայացվող բոլոր ակտերը: Օրենսդրական նշված կարգավորումից հետևում է, որ դատավարական որոշումը սեռային հասկացություն է, որն արտահայ-

<sup>1</sup> Стѣи **Лупинская П. А.** Решения в уголовном судопроизводстве. Их виды, содержание и форма, М., 1976, էջ 18:

տում է որոշման բնույթը, իսկ որոշումը կամ դատավճիռը դատավարական որոշման տեսակ է: Քանի որ վարույթի ընթացքում առաջացող և լուծում պահանջող հարցերը բազմաբնույթ են, ուստի օգտագործվում են այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են՝ դատավճիռ և որոշում: Հարկ է նշել, որ ճիշտ կլիներ, օրենսգրքում օգտագործվող այդ հասկացությունների հետ միասին նշվեր նաև մեղադրական եզրակացության մասին, քանի որ այն իր բնութիւնով մինչդատական վարույթն ավարտող դատավարական ակտի ինքնուրույն տեսակ է:

Նշված իրավական ակտերի համար ընդհանուր հատկանիշ է այն, որ քրեական դատավարության որոշակի փուլերում այդ ակտերում տրվում է իրավական հարցերի պատասխան և կատարվում է ամփոփում, որը հնարավորություն է տալիս դատավարական այդ որոշումները տարբերակել այնպիսի դատավարական գործողություններից, ինչպիսիք են արձանագրությունները, որոնցում հաստատվում են քննչական գործողությունների կատարման փաստը, բովանդակությունը և արդյունքները: Որոշումը դատավարական այն փաստաթուղթն է, որի եզրափակիչ մասում արտացոլվում է վարույթն իրականացնող մարմնի լուծումները կամ վճիռները:

Պետք է նշել, որ օրենսգրքում որոշումները դասակարգվում են նաև *վերջնական որոշումների*, այսինքն՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության (<< քր. դատ. օր-ի հոդված 6, կետ 10): Անկասկած որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը վերջնական չէ, որովհետև դրանով չի լուծվում քրեական գործի ճակատագիրը կամ անցում չի կատարվում դատավարական մեկ փուլից՝ մյուսին, բայց այդ որոշման կայացմամբ ընթացք է տրվում գործի հետագա քննությանը, ընդգծվում է գործի քննության սահմանները: Անձին մեղադրյալ ներգրավելով նախաքննությունը չի ավարտվում, այլ այն շարունակվում է՝ մինչև գործով ապացուցման ենթակա բոլոր հանգամանքների պարզաբանումը, որն առանձին դեպքում կարող է նաև հանգեցնել մեղադրանքի փոփոխության կամ քրեական գործի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման:

Քրեական դատավարությունում ընդունվում են տարբեր որոշումներ, բայց մեղադրյալ ներգրավելն այն որոշումն է, որն ուղղված է քրեական դատավարության հիմնական հարցի լուծմանը, այսինքն՝ մեղսագրավող արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելուն:

## ЗНАЧЕНИЕ И РОЛЬ ИНСТИТУТА ПРИВЛЕЧЕНИЯ В КАЧЕСТВЕ ОБВИНЯЕМОГО

**Нарек Минасян**

*Аспирант Ереванского Университета Гладзор*

---

Вопросы защиты прав обвиняемого всегда были в центре внимания процессуалистов. Этот вопрос стал наиболее актуальным в связи с принятием проекта нового Уголовно-процессуального кодекса. Расширение состязательности в уголовном производстве имеет цель сделать наиболее реальным участие подсудимого в процессе доказывания. При регулировании правового статуса обвиняемого должны учитываться демократические развития, которые происходят в области уголовного правосудия во всем мире. Прецедентное право Европейский суда требует существенно изменить процессуальный статус обвиняемого, в частности, расширить сферу гарантий, которые обеспечат эффективное участие обвиняемого в уголовном процессе.

## THE ROLE OF THE INSTITUTE OF THE INVOLVEMENT OF A PERSON AS AN ACCUSED

**Narek Minasyan**

*Ph.D student, Yerevan University, Gladzor*

---

The issues of the rights of the accused have always interested law specialists. The issue becomes more actual in connection with the Draft New Criminal Procedure Code. The expansion of the grounds of the adversariality is aimed to provide the defendant's real participation in the evidentiary process. The regulation of the legal status of the accused is supposed to take into account the democratic developments that are taking place all around the world in the field of criminal justice. The case-law of the European Court of Human Rights obliges to significantly change the procedural status of the accused, in particular, to expand the scope of guarantees that will ensure the effective participation of the accused in the criminal proceedings.

**Բանալի բառեր** – մեղադրյալ, դատավարական վիճակ, քրեական դատավարություն, դատավարական որոշում, մեղադրանք առաջադրել:

**Ключевые слова** – обвиняемый, процессуальный статус, уголовное судопроизводство, процессуальные решения, предъявить обвинение.

**Key words** – defendant, procedural capacity, criminal proceeding, procedural decisions, to bring charges.

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Նարինե Կարապետյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ,  
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ավագ սպա, փոխգնդապետ*

Ժամանակակից միջազգային հանրության յուրաքանչյուր անդամ պետություն, իր անվտանգությունն ապահովելու և այլ պետությունների հետ խաղաղ գոյակցելու անհրաժեշտությունից ելնելով, ձգտում է նախևառաջ կատարելագործել ներպետական օրենսդրությունը՝ փորձելով ստեղծել իրավական պետություն, որտեղ երաշխավորված են և առավելագույնս ապահովված մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

Ներկայումս միջազգային մարդասիրական իրավունքի (այսուհետև՝ ՄՄԻ) ոլորտում ստեղծված է միջազգային իրավական փաստաթղթերի բավականին մեծ համալիր, և պատերազմի օրենքներն ու սովորույթները ամփոփված են դոկտրինալ մակարդակով: Սակայն իրավաբանական նորմերի ցանկացած համակարգ, անկախ դրա մշակվածության աստիճանից, չի կարող գոյատևել, եթե այն չունի ազդեցություն հասարակական կյանքի վրա<sup>1</sup>: Իրավունքը պարզապես ոչինչ է, եթե դրա դրույթները չեն իրացվում մարդկանց գործունեության մեջ և հասարակական հարաբերություններում<sup>2</sup>:

Փորձը ցույց է տալիս, որ գործնականում ազգային իրավական համակարգերը միշտ չէ, որ ապահովում են իրենց կառավարությունների ստանձնած միջազգային իրավունքի նորմերի անշեղորեն կատարելու պարտավորությունները, այդ թվում նաև՝ զինվորական հանցագործությունների արդյունավետ կանխարգելումը, որի դերն ու նշանակությունը չափազանց կարևոր են զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության առումով:

XX-XXI դդ. սահմանագծին միջազգային հանրությունը համոզվել է, որ ստեղծված իրավիճակում միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու միակ միջոցը միջազգային մարդասիրական իրավունքի պայմանագրային և սովորույթային նորմերի ազգային իրավական համակարգերի ներդրումն է ու դրանք անշեղորեն կատարելու նպատակով համապատասխան ներպետական գործունեականիզմի ստեղծումն է:

Միջազգային իրավունքի, այդ թվում ՄՄԻ-ի նորմերի, ներպետական իմպլեմենտացիայի մեխանիզմի առկայությունն ապահովում է ստանձնած միջազգային պարտավորությունների լիարժեք և ժամանակին կատարումը:

Իմպլեմենտացիայի ազգային գործունե մեխանիզմից հիմնականում կախված են պետության հեղինակությունը և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավական համակարգի արդյունավետությունը, այդ թվում նաև զինված ընդհարումների պայմաններում: Եթե խաղաղ ժամանակ ՄՄԻ-ի իրացման ուղղությամբ

<sup>1</sup>Տե՛ս **Ա. Շ. Գարբերովսկի**, *Имплементация норм международного права*. Киев: Вища школа, 1980, էջ 47:

<sup>2</sup>Տե՛ս **Լ. Շ. Կյաչ**, *Общая теория права*. Л., // 1976, էջ 201:

չձեռնարկվեն միջոցներ, ապա հնարավոր չէ երաշխավորել, որ զինված ընդհարման պայմաններում հակամարտարող կողմերը կպահպանեն ՄՄԻ-ով սահմանված կանոնները: Այդ պատճառով Ժնևի կոնվենցիաների և 1977 թ. Լրացուցիչ արձանագրությունների մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները ՄՄԻ-ի նորմերի իմպլեմենտացիայի ուղղությամբ: Այս խնդրի լուծմանն է կոչված ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի ազգային մեխանիզմը:

Զնայած միջազգային և պետական մակարդակով իրավական բազայի զգալի կատարելագործմանը, այդուհանդերձ վերջին շրջանում աշխարհի տարբեր մասերում ծագած ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված ընդհարումների ժամանակ արձանագրվում են միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների չափազանց մեծ ծավալների խախտումներ, որոնք հաճախ մնում են անպատիժ, ինչն ավելի է խստացնում ՄՄԻ-ի ոլորտում պետությունների ստանձնած պարտականությունների կատարման անհրաժեշտությունը:

ՄՄԻ-ի նորմերը նշանակալից չափով *jus cogens* բնույթի են, և համաձայն Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի՝ «ամբողջությամբ ընդունվում և ձանաչվում են միջազգային հանրության կողմից որպես նորմեր, որոնցից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով»<sup>3</sup>:

ՄՄԻ-ի կիրառման լավագույն երաշխիքը պետությունների կողմից *Pacta sunt servanda* սկզբունքի պահպանումն է: Ժնևի կոնվենցիաներին և դրանց Լրացուցիչ արձանագրություններին միանալով՝ պետությունները ստանձնել են այդ փաստաթղթերի դրույթների կատարման և պահպանման պարտավորությունը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ պետությունների համար միջազգային իրավունքից բխող իրավական բնույթի պարտավորությունների պարտադիր ուժի սահմանումն այնպես, ինչպես առանձին անձանց համար ներպետական օրենսդրությունից բխող պարտավորությունների պարտադիր կատարումը, ժամանակակից միջազգային իրավունքի կարևորագույն խնդիրն է:

ՄՄԻ-ի նորմերի կատարման հիմնական միջոցը վարքագծի որոշակի կանոնների անմիջական կատարումն է այն սուբյեկտների կողմից, որոնց համար դրանք նախատեսված են<sup>4</sup>: Իրավունքի իրացման գործառնություն պետության դերը չնվազեցնելով, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ՄՄԻ-ի նորմերի բացարձակ մեծամասնությունը հասցեագրված է միջազգային պայմանագրի մասնակիցների պետական մարմիններին և ֆիզիկական անձանց<sup>5</sup>:

Այս առումով ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը պետությունների պատասխանատվության վերաբերյալ հողվածների նախագծում մատնանշում է. «Պետությունը դա իրական կազմակերպված ամբողջականություն է, սակայն այդ «իրականության» ձանաչումը չի հերքում տարրական ճշմարտությունն առ այն, որ պետությունը որպես այդպիսին չի կարող գործել ֆիզիկապես: Հետևաբար վերջին հաշվով որպես «պետության գործողություն դիտվող վարքագիծը չի կարող լինել այլ ինչ, քան գործողություն կամ անգործություն, որն իրականացվել է մարդու կամ մարդկային հասարակության կողմից»<sup>6</sup>:

Միջազգային իրավունքի նախանշումների իրականացումն ապահովող իրավա-

<sup>3</sup> Lauri Hannirainen. Peremptory Norms (*jus cogens*) in International Law, Historical Development, Criteria, Present Status. Helsinki, Finnish Lawyers' Publishing Company, 1998:

<sup>4</sup> St'u Sassoli M. Mise en aevure du droit international humanitaire et du droit international des droits de l'home//Schw eizerisches Jahrbuch des Volkerrechts. Vol. XLIII. 1987, էջ 34:

<sup>5</sup> Scelle G. Regles generals du droit de a paix //R.C.A.D.I. 1993, vol. 46, էջ 366:

<sup>6</sup> Doc. UN A/51/10, էջ 183:

կան և կազմակերպչական միջոցների բովանդակությունը նախևառաջ կախված է միջազգային իրավանորմերի բնույթից և իհարկե ներպետական իրավական համակարգի առանձնահատկություններից:

Ուսումնասիրելով ՄՄԻ-ի նորմերի իրավական բովանդակության ազդեցությունը դրանց ներպետական մակարդակով իրագործման գործընթացի վրա՝ հարկ է նշել, որ իրավունքի նախանշումների բնույթով և դրանք պետության ներսում կիրառելու հնարավորության առումով ՄՄԻ-ն ներառում է նորմերի երկու տեսակ. նորմեր, որոնք կարող են գործել (կիրառվել) անմիջականորեն (ինքնակատարվող նորմեր), և նորմեր, որոնց կիրառումը պայմանավորված է ներպետական իրավունքով:

Որպեսզի միջազգային պայմանագրերի դրույթները որակվեն ինքնակատարվող, դրանց ձևակերպումը պետք է լինի հստակ և համակողմանի<sup>1</sup>. այսինքն՝ առանց ազգային օրենսդրի միջամտության այդ նորմերը պետք է պայմանագրի մասնակիցներին ուղղակիորեն օժտեն իրավունքներով և պարտականություններով<sup>2</sup>, ընդ որում, ինչպես նշում է բելգիացի իրավագետ Էրիկ Դեյվիդը, «այն հանգամանքը, որ միջազգային նորմը կարող է անցնել ներպետական իրավունք ներմուծվելու ընթացակարգը, չի նշանակում, որ դրա ուղղակի գործողությունը հնարավոր չէ»<sup>3</sup>:

ՄՄԻ-ի նորմերի մեծ մասը կարող է գործել (կիրառվել) անմիջականորեն, քանի որ հիմնական իրավական ակտերը՝ ժնկի չորս կոնվենցիաները և դրանց Լրացուցիչ արձանագրությունները, բովանդակում են բավականին ճշգրիտ և բազմաձևավոր կանոններ, որոնք, լինելով բազմակողմանի և մանրամասն ձևակերպված, բավականին հարմար են ուղղակի կիրառելու համար:

ՄՄԻ-ի նորմերի երկրորդ խմբին են դասվում նրանք, որոնց իրացումը պայմանավորված է ազգային իրավունքով և կախված է միջազգային պայմանագրի մասնակից պետության համապատասխան մարմինների կողմից ձեռնարկվող կազմակերպական միջոցառումներից: Նման նորմեր պարունակող պարտավորությունները ընդգծված են 1949 թ. ժնկի կոնվենցիաների 1-ին հոդվածում, համաձայն որի՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորված են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել պահպանելու սույն կոնվենցիան»:

Լեի իրավաբան Կ.Դոժեհիցկին նման պարտավորությունները կոչում է «իրագործելի»<sup>4</sup>:

ժնկի կոնվենցիաներով սահմանված վերոնշյալ իրագործելի պարտավորությունն ընդլայնվեց 1977 թ. I Լրացուցիչ արձանագրության 80-րդ հոդվածով, որը սահմանում է՝

«1. Բարձր պայմանավորվող կողմերը և ընդհարման մեջ գտնվող կողմերը անհապաղ կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կոնվենցիաներով և սույն արձանագրությամբ իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար:

2. Բարձր պայմանավորվող կողմերը և ընդհարման մեջ գտնվող կողմերը հրամաններ և կարգադրություններ կանեն կոնվենցիաների և սույն արձանագրության իրագործման ապահովման նպատակով և վերահսկողություն կիրականացնեն դրանց կատարման նկատմամբ»:

Ինչպես տեսնում ենք, իրագործելի պարտավորությունների բովանդակության

<sup>1</sup> Տե՛ս **Drzewicki K.** National legislation as a Measure for implementation of International Humanitarian Law. էջ 110:

<sup>2</sup> Տե՛ս **David E.** Principes de droit des conflits armes. էջ 164:

<sup>3</sup> Տե՛ս **David E.** Le droit a la santé comme droit de la personne humaine // R.Q.D.I., 1985, էջեր 90-95:

<sup>4</sup> Տե՛ս **Drzewicki K.** National legislation as a Measure for implementation of International Humanitarian Law// Implementation of International Humanitarian Law. էջեր 110-111:

զլխավոր հատկանիշն այն է, որ համապատասխան ազգային օրենսդրության ընդունումը պետք է ճանաչվի մասնակից պետությունների հիմնական պարտավորություններից մեկը:

Որոշ երկրներում միջազգային պայմանագիրը դառնում է ազգային իրավունքի մաս, ներպետական իրավունքի գործող աղբյուր, որը հիմք է դառնում ազգային դատարանների համար վեճերը լուծելիս: Այդպիսի երկրներից են՝ Մեծ Բրիտանիան, Կանադան, Իսրայելը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Բելգիան, Նիդերլանդները, Շվեդիան, Լիտվան և այլն:

Մի շարք երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Մեծ Բրիտանիան, Կանադան, Իսրայելը, միջազգային պայմանագրային նորմերի ընդունումը տեղի է ունենում հատուկ իրավական ակտ ընդունելով, որում վերաշարադրվում են միջազգային պայմանագրի դրույթները, կամ ընդունվում է պայմանագրի դրույթները հրապարակելու մասին իրավական ակտ<sup>1</sup>:

Նաև կան երկրներ, որտեղ միջազգային պայմանագրերն ազգային օրենսդրության հանդեպ ունեն գերակա ուժ: Այդպիսի երկրներից են Գերմանիան, Իտալիան, Թուրքիան, Թուրքմենստանը, Ուզբեկստանը: Մյուսները՝ ինչպես օրինակ, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, ճանաչում են միջազգային պայմանագրերի առաջնայնությունը կամ ազգային օրենսդրության հանդեպ համահավասարությունը:

«Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սահմանված կարգով ուժի մեջ մտած միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է, և դրանց նորմերը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են անմիջականորեն:

Այսպիսով, խորհրդարանի կողմից պայմանագիրը վավերացնելու հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն ճանաչում է պայմանագրերի պարտադիր բնույթը, այլև դրանք ուղղակիորեն դիտում է որպես իրավական համակարգի բաղկացուցիչ մաս՝ ընդունելով դրանց գերակայությունը ազգային օրենսդրության նկատմամբ:

Ազգային օրենսդրությունը պետք է կազմի ՄՄԻ-ի պատշաճ իմպլեմենտացիան երաշխավորող միջոցների ընդհանուր ծավալի մեծ մասը, իսկ ՄՄԻ-ի կիրառումը հիմնականում կախված է դրա կանոնները ազգային իրավունք ներառելու արդյունավետությունից: Ընդ որում, ակնկալելի վերջնական նպատակը ՄՄԻ-ի և բոլոր երկրների ազգային օրենսդրությունների լիարժեք համապատասխանեցումն է, որը պետք է իրականացվի խաղաղ ժամանակ<sup>2</sup>:

Ինչպես արդեն ասվել է, իմպլեմենտացիայի մեխանիզմը ներառում է նաև պետական մարմինները, որոնք իրավասու են իրագործել միջազգային իրավունքից բխող պարտավորությունները: Պետությունները որպես կանոն օրենսդրորեն սահմանում են իմպլեմենտացիայի հատուկ մարմինների համակարգը և կանոնակարգում իմպլեմենտացիայի ուղղությամբ պետական մարմինների պարտականությունները: Սովորաբար դրանք այն պետական մարմիններն են (երկրի ղեկավարները,

<sup>1</sup> Տե՛ս **Калугин В.** Механизм имплементации норм МГП на внутригосударственном уровне //Беларусский журнал международного права и международных отношений. N 1. // evolution.info/content/view/336151.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 110.



խորհրդարանները և կառավարությունները), որոնք իրենց իրավասության շրջանակում իրականացնում են արտաքին հարաբերությունները:

Միջազգային իրավունքի իմպլեմենտացիայի հարցում կարևոր դերակատարություն ունի ներպետական իրավակիրառ պրակտիկան, որի միջոցով իրականացվում է միջազգային իրավունքի նորմերի հարմարեցման գործընթացը: Այն կոչված է լուծելու միջազգային իրավունքը ներպետական փոփոխվող պայմաններին հարմարեցնելու, միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների իրագործումն ապահովող միջազգային և ներպետական նորմերը համաձայնեցված կիրառելու խնդիրները:

Այս առումով պրոֆեսոր Ի. Ի. Լուկաշուկը նշում է. «Կիրառման պրակտիկան, ավելի ճիշտ՝ նորմի չկիրառումը, կարող է հանգեցնել դրա սառեցմանը, որի դեպքում դրա գոյությունը ձևական բնույթ է կրում: Մյուս կողմից՝ պրակտիկան ձևական շրջանակից դուրս նորմին կարող է տալ իրական բովանդակություն: Նորմը հնարավորություն է, որը սուբյեկտների ջանքերի շնորհիվ կարող է իրականություն դառնալ»<sup>1</sup>:

Իրավակիրառ պրակտիկան իրավասու մարմինների իշխող գործունեության միասնություն է, որն ուղղված է անհատական կոնկրետ կարգադրերի ընդունմանը և մշակված է իրավական փորձի նման գործունեության ընթացքում<sup>2</sup>: Հենց փորձն է, որ ապահովում է կիրառման ենթակա իրավական նորմի ընտրությունը, հնարավորություն է տալիս կուտակված փորձի հիման վրա միջազգային և ազգային իրավունքի նորմերի մեկնաբանմամբ լուծելու այս կամ այն իրավիճակներում ծագած խնդիրները:

Ազգային իմպլեմենտացիայի մեխանիզմի կարևոր տարրերից են նաև ներպետական մակարդակով կիրառվող կազմակերպական միջոցները, որոնք կարող են սահմանվել միջազգային պայմանագրով, ինչպես նաև որոշվել ինքնուրույն՝ ներպետական մակարդակով: Այդ միջոցներին են դասվում ազգային օրենսդրության վերլուծությունը՝ ՄՄԻ-ի նորմերին համապատասխանելու տեսանկյունից, տարատեսակ խորհրդակցությունների և սեմինարների անցկացումը, ՄՄԻ-ի վերաբերյալ գիտելիքների տարածումը, միջազգային իրավունքի դրույթների իրականացման մասին տեղեկացնելը և այդ ուղղությամբ այլ նյութատեխնիկական գործողությունները:

Մի շարք դեպքերում կարող են ստեղծվել միջգերատեսչական հանձնաժողովներ կամ ՄՄԻ-ի նորմերի իմպլեմենտացիայի ոլորտի պետական կառավարման այլ մարմիններ: Ըստ ԿԽՄԿ ՄՄԻ-ի խորհրդակցական ծառայության տվյալների՝ 2014 թ. դրությամբ 102 պետություն ստեղծել են ազգային կոմիտեներ կամ ՄՄԻ-ի այլ ազգային մարմիններ<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետությունը միացել է մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտները կարգավորող միջազգային պայմանագրերի մեծ մասին<sup>4</sup>, սակայն առ այսօր միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու միակ միջոցը միջազգային մարդասիրական իրավունքի պայմանագրային և սովորութային նորմերը ազգային իրավական համակարգեր ներդրելն ու դրանք անշեղորեն կատարելու նպատակով համապատասխան ներպետական գործուն մեխանիզմ ստեղծելն է:

Միջազգային իրավունքի, այդ թվում ՄՄԻ-ի նորմերի, ներպետական իմպլեմեն-

<sup>1</sup> Տե՛ս **И. М. Лукашук**, Международное право: Общая часть, Учебник для вузов, М., 1997, М., էջ 196:

<sup>2</sup> Теория государства и права: Курс лекций. Под. ред. И. М. Метузова.

<sup>3</sup> [https://www.icrc.org/rus/assets/files/2013/list\\_of\\_ncs\\_rus-2013.pdf](https://www.icrc.org/rus/assets/files/2013/list_of_ncs_rus-2013.pdf)

<sup>4</sup> Տե՛ս Հավելված 1:

տացիայի մեխանիզմի առկայությունն ապահովում է միջազգային ստանձնած պարտավորությունների լիարժեք, բազմակողմանի և ժամանակին կատարումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ հանրապետությունում ձեռնարկվում են բավականին ծավալուն գործընթացներ, որոնք հիմնականում դրսևորվում են ներպետական մակարդակով կամ այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող պետության իրավական և կազմակերպական գործունեությամբ, այդուհանդերձ պետք է արձանագրել, որ ՄՄԻ-ի փոխակերպման գործընթացը բավականին դանդաղ է:

Հայաստանում ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի գործընթացի զարգացմանն է անդրադարձել Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը միջազգային պայմանագրերի դրույթները ՀՀ օրենսդրության մեջ փոխակերպելու վիճակի և դրանց կատարման վերաբերյալ համեմատական վերլուծությունում:

Եզրակացության մեջ ընկերության խորհրդի նախագահը նշում է. «Ուսումնասիրությունը ցույց է տվեց, որ լուրջ թերություններ և բացթողումներ կան ՀՀ միջազգային պայմանագրային պարտավորությունները ՀՀ ազգային օրենսդրության մեջ փոխակերպելու հարցում»<sup>1</sup>:

Համեմատական վերլուծությամբ մատնանշվել են 2000 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի, այդ թվում նաև ՄՄԻ-ի ոլորտում, փոխակերպման հետ կապված իրավական և կազմակերպական բնույթի թերություններն ու բացթողումները:

Հանրապետությունում ՄՄԻ-ի կատարման ուղղությամբ վերջին 14 տարիների զարգացումներն ուսումնասիրելու համար Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության վերլուծությունը սույն ուսումնասիրության համար բավականին կարևոր համեմատական հիմք է, և այդ առումով հարկ է նշել, որ ՄՄԻ-ի շրջանակներում հանրապետության ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելուն ուղղված եզրակացության մեջ նշված դիտողություններն ու առաջարկությունները մեծ մասամբ հաշվի են առնվել, և ներպետական օրենսդրության մեջ կատարվել են բավականին ծավալուն փոփոխություններ և լրացումներ:

1949 թ. ժնկի կոնվենցիաներով և I Լրացուցիչ արձանագրությամբ սահմանվել են ներպետական մակարդակով մի շարք կազմակերպական միջոցներ, որոնց ձեռնարկումը նպաստում է ՄՄԻ-ի նորմերի իրացմանը, ուստի և պարտադիր են մասնակից պետությունների համար: Այդ միջոցներից են Կոնվենցիաների և I Լրացուցիչ արձանագրության մասին գիտելիքների տարածումը, պետական մարմինների համապատասխան ներկայացուցիչների հատուկ ուսուցումը, ՄՄԻ-ի կիրառումն ապահովելու նպատակով հատուկ անձնակազմի նախապատրաստումը, հրամանատարների պարտականությունների սահմանումը, իրավաբան-խորհրդատուների գործառույթների սահմանումը, ՄՄԻ-ի խախտումները կանխելու ուղղված վերահսկողական միջոցառումները և այլն:

Վերոնշյալ կոնվենցիոն նորմերի կատարման մասով պետք է նշել, որ հանրապետության քաղաքացիական բնակչությանը ՄՄԻ-ի հիմնական սկզբունքներին ծանոթացնելու համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը խոչընդոտող հանգամանքների բացակայության պարագայում, այդուհանդերձ առայսօր ՄՄԻ-ի ուսուցու-

<sup>1</sup> Եզրակացություն ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի դրույթները ՀՀ օրենսդրության մեջ փոխակերպելու վիճակի և դրանց կատարման վերաբերյալ// Միջազգային իրավունքի հայկական ընկերակցություն, 2000, էջ 4:

ըն իրականացվում է միայն հանրապետության համալսարանների իրավագիտության ֆակուլտետներում՝ միջազգային իրավունք առարկայի շրջանակներում, և ռազմաուսումնական հաստատություններում: Մինչդեռ հարկ է նշել, որ ճիշտ այնպես, ինչպես խաղաղ ժամանակ պետությունները զինում, ուսուցանում և վարժեցնում են իրենց զինված ուժերին, պետք է նաև տարածեն ՄՄԻ-ի մասին գիտելիքները, քանի որ զինված ընդհարման ժամանակ այդ գիտելիքների տարածումն արդեն ժամանակավրեպ է և անարդյունավետ:

ՄՄԻ-ի նորմերի կատարումն ապահովելու հարցում առաջնային նշանակություն ունեն զինվորական հրամանատարների վրա դրված պարտավորությունների սահմանումը, ինչպես նաև այդ պարտավորությունների անվերապահ կատարումն ապահովող իրավական և կազմակերպական միջոցների ձեռնարկումը:

I-ին Լրացուցիչ արձանագրության 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ հրամանատարները պարտավոր են կանխել իրենց ենթակայության տակ գտնվող անձանց կողմից կոնվենցիաների և I-ին Լրացուցիչ արձանագրության հնարավոր խախտումները:

Հոդվածի 2-րդ կետը մասնավորապես սահմանում է. «...կողմերը պետք է պահանջեն, որպեսզի հրամանատարները, իրենց վրա դրված պատասխանատվության սահմաններում միջոցներ ձեռնարկեն, որպեսզի իրենց ենթակա զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք իմանան այն պարտականությունները, որոնք նրանց վրա դրվում են կոնվենցիաներով և սույն արձանագրությամբ»

Այսպիսով հրամանատարը պատասխանատվություն է կրում իր ենթակաների՝ ՄՄԻ-ի նորմերի մասին տեղեկացված չլինելու հետևանքով կատարած խախտումների համար, ուստի և հանդիսանում են վերահսկողական համակարգի հիմքը, այն համակարգի, որը պետք է սահմանեն պայմանավորվող և հակամարտող կողմերը:

Վերոգրյալը նաև նշանակում է, որ զինվորական հրամանատարների պարտավորությունները չեն սահմանափակվում ՄՄԻ-ի նորմերի կատարման վերահսկմամբ և դրանց խախտողների հանդեպ պատժամիջոցների կիրառմամբ. վերջիններս պարտավոր են նաև իրենց անձնակազմի շրջանում տարածել ՄՄԻ-ի մասին գիտելիքներ:

Զինված ուժերում ՄՄԻ-ի կատարման ու պահպանման հարցում զինվորական հրամանատարների դերակատարության մասին խոսելիս հարկ է նշել նաև այն, որ խախտումների կանխման հարցում հրամանատարի դերը սահմանափակվում է կարգապահական և կանխարգելիչ բնույթի միջոցների կիրառմամբ:

ՄՄԻ-ի նորմերի կատարումն ապահովելու արդյունավետ միջոցներից է զինված ուժերում իրավախորհրդատուների առկայությունը, ինչն ուղղակիորեն սահմանված է I Լրացուցիչ արձանագրության 82-րդ հոդվածով: Նրանց դերը կոնվենցիաների և I Լրացուցիչ արձանագրության կիրառման վերաբերյալ զինվորական հրամանատարներին անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհուրդներ տալն է և այդ հարցի առթիվ զինված ուժերում համապատասխան ուսուցում անցկացնելը:

1996 թ. դեկտեմբերի 3-ի N 99 օրենքով հաստատված՝ ՀՀ ներքին ծառայության կանոնադրքի 104 հոդվածով սահմանված է գնդի հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի պարտավորությունները: Համաձայն հոդվածի 1-ին պարբերության սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպան պարտավոր է «զորամասի մյուս ծառայությունների հետ համատեղ մշակել և իրականացնել զորամասում օրինականության պահպանման ապահովմանն ուղղված միջոցառումներ, միջոցներ ձեռնարկել ՀՀ գործող օրենսդրության և այլ գերատեսչական նորմատիվ ակտերի խախտումների կանխման համար»: Իսկ հոդվածի վերջին

պարբերության համաձայն՝ սպան պարտավոր է նաև աշխատանք կատարել միջազգային մարդասիրական իրավունքի իրավական քարոզչության ուղղությամբ:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ զինված ուժերում սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի նշանակությունն ու նրան օրենսդրորեն ամրագրված պարտականությունները ՄՄԻ-ի կատարումն արդյունավետ ապահովելու առումով չեն համապատասխանում I Լրացուցիչ արձանագրության 82-րդ հոդվածով նախատեսված զինված ուժերում իրավախորհրդատուների դերակատարությանը:

Ելնելով այն նախադրյալից, որ ՀՀ ՋՈՒ զորամիավորման հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի հաստիքները համալրված են բարձրագույն կրթությամբ իրավաբաններով, որոնք տիրապետում են ՄՄԻ-ի դիսցիպլինին, հետևաբար վերջիններիս պարտականությունների օրենսդրական սահմանումը, ՄՄԻ-ի նորմերին համապատասխանեցումը կնպաստեն ոչ միայն ՄՄԻ-ի մասին գիտելիքների տարածմանը, այլ նաև այդ գիտելիքների գործնական կիրառմանն ու ՄՄԻ-ի խախտումների կանխարգելմանը:

Բացի այդ հրամանատարների համար նախատեսված դասընթացների ծրագրով սահմանված՝ ՄՄԻ-ի մի քանի դասաժամերը բավական չեն զինված ուժերում ՄՄԻ-ի նորմերի անվերապահ կատարումն ապահովելու համար, ուստի զինված ուժերի իրավախորհրդատուների մասնակցությունը գործողությունների պլանների քննարկմանը կարող է նպաստել իրավական դրույթների ավելի արդյունավետ իրագրվմանը հրամանատարական կազմին ավելի կարճ ժամանակահատվածում:

Չինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների լուրջ խախտումները կանխելու հարցում կարևոր դերակատարություն ունի 1998 թ. Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) կանոնադրության (Հռոմի ստատուտի) դրույթների իմպլեմենտացիան ազգային օրենսդրություն:

ՄՔԴ-ն պետությունների ինքնիշխանության ուժով և կամավորության հիման վրա ստեղծված միջազգային կառույց է, որը կոչված է անձանց՝ սահմանված միջազգային ընթացակարգով քրեական պատասխանատվության ենթարկելուն, այդ թվում նաև՝ զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքներն ու ազատությունները խախտելու մեջ մեղադրվող անձանց:

ՄՔԴ-ն կարևորագույն միջոց է միջազգային ծանր հանցագործություններ կատարած անձանց դատապարտելու և անպատժելիության մթնոլորտը վերացնելու գործում: Դատարանը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է քրեական արդարադատության ազգային համակարգը: Դատարանին ընդդատյա են ներկայումս մարդկության պատմությանը հայտնի ամենադաժան և ծանր հանցագործությունները՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը:

ՄՔԴ-ի կանոնադրությունը միջազգային պրակտիկայում մինչ օրս նմանը չունեցող փաստաթուղթ է, որը շոշափում է այդ մարմնի գործունեության իրականացմանն առնչվող նյութական, դատավարական, ընթացակարգային խնդիրները:

Կանոնադրությունը ընդունվել է 1998 թ. հուլիսի 17-ին և ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ին: 2013 թ. դեկտեմբերի դրությամբ այն ստորագրվել է 139 և վավերացվել 122 պետության կողմից<sup>1</sup>:

Յուրաքանչյուր պետություն ազատ է իմպլեմենտացիայի մոտեցումների ընտրության մեջ, եթե այն հետապնդում է միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու նպատակ:

Ընդհանուր առմամբ Կանոնադրությունը բոլոր մասնակից պետությունների հա-

<sup>1</sup> Տե՛ս <http://ru.wikipedia.org/>

մար ստեղծում է միջազգային արարքների համընդհանուր քրեականացման մոդել՝ ազգային քրեաիրավական համակարգերի համապատասխան մասերի միավորմամբ<sup>1</sup>:

Հայաստանը ՄՔԴ-ի կանոնադրությունը ստորագրել է 1999 թ. հոկտեմբերի 1-ին, սակայն առայսօր այն չի վավերացրել:

Կանոնադրության դրույթները Հայաստանի ազգային օրենսդրություն ներմուծելու համար պետք է լուծվի երեք հիմնական խնդիր. վերացվեն երկրի սահմանադրական նորմերի և ՄՔԴ կանոնադրության հնարավոր հակասությունները, համապատասխանեցվեն ազգային քրեական օրենսդրությանը, և ստեղծեն համապատասխան իրավական բազա ՄՔԴ-ի հետ արդյունավետ համագործակցության համար:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի՝ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Հետևապես, միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, եթե դրանք հակասում են Սահմանադրությանը: Այդ իսկ պատճառով ՄՔԴ ստատուտի վավերացման վերը թվարկված խնդիրներից առաջնայինը Կանոնադրության սահմանադրական վերահսկողության հարցն է:

Կանոնադրության վավերացման գործընթացում իրավական տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանը, ինչպես և պայմանագրի այլ կողմերը, Կանոնադրության բովանդակության վերաբերյալ վերապահումներ անել չի կարող, քանի որ դա Կանոնադրությամբ արգելված է: Սակայն Հայաստանը Կանոնադրությանը միացել է հայտարարությամբ, քանի որ դրա 124 հոդվածը մասնակից պետություններին թույլ է տալիս հայտարարել, որ տվյալ պետության համար Կանոնադրությունը ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում ՄՔԴ-ի իրավասությունը չի ընդունվում կանոնադրության 8-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ:

Բացի այդ, փորձը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի կողմից երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթները ՀՀ Սահմանադրությանն անհամապատասխանություն հայտնաբերելու բոլոր դեպքերում էլ այդ պայմանագրերի հետագա վավերացման հարցը լուծվել է պայմանագրերի համապատասխան դրույթներում փոփոխություններ կատարելու և դրանց դրույթները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու միջոցով:

Իրավիճակը բոլորովին այլ է միջազգային բազմակողմ պայմանագրերի պարագայում, տվյալ դեպքում՝ ՄՔԴ-ի կանոնադրության և ՀՀ Սահմանադրության միջև հակասության (ների) առկայության դեպքում դրա(նց) հարթեցման խնդրի կարգավորումը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2004 թ. օգոստոսի 13-ին կայացրած որոշման համաձայն՝ ՄՔԴ-ի կանոնադրության նախաբանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը, առ այն, որ ՄՔԴ-ն լրացնում է ներպետական քրեական իրավագործության մարմինները, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներին: Ինչպես նաև ՄՔԴ-ի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 40 հոդվածի, 55-րդ հոդվածի 17 կետի և 81-դ հոդվածի 1-ն կետի պահանջներին:

<sup>1</sup> Стѣи Е.Н Трикоз, Перспективы присоединения РФ к Римскому Статуту международного уголовного суда//Журнал Российского права. 2007, № 12, էջ 133:

ՄՔԴ կանոնադրության և ՀՀ Սահմանադրության վերոնշյալ հակասությունների իրողության պարագայում ՄՔԴ-ի կանոնադրության վավերացումը հնարավոր կլինի միայն ՀՀ Սահմանադրության մեջ որոշակի փոփոխություններ կատարելու դեպքում:

Միաժամանակ հարկ է նշել, որ հիշյալ որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը արձանագրել է. «Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները, ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ելնելով նաև միջազգային իրավակիրառ պրակտիկայից, հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կձևանաչի ՄՔԴ Կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավագործությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»:

ՄՄԻ-ի շատ դրույթներ հստակ պահանջում են դրանց կիրառման ուղղությամբ ազգային մակարդակով միջոցների ձեռնարկում, ինչը լիովին բխում է Վիեննայի կոնվենցիայի 26-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի»:

Նշված դրույթը համապատասխանում է զինված հակամարտությունների մարդասիրական պաշտպանության հատուկ պահանջներին, որոնց կատարումը դժվար է պատկերացնել առանց միջազգային և ազգային մակարդակներով հստակ սահմանված օրենսդրական և կազմակերպական միջոցների ձեռնարկման:

Այսպիսով, պրակտիկ և տեսական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ ներկա դրությամբ ՄՄԻ-ն կարևորագույն խնդիրը ռազմական գործողությունների ժամանակ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված իրավանորմների իրագործումն է: Այս առումով Հայաստանի համար առավելապես կարևոր նշանակություն ունեն կազմակերպական և լուսավորական բնույթի միջոցների կատարելագործումը, ինչն ուղղակիորեն նպաստում է ՄՄԻ-ի մասին գիտելիքների տարածմանը, ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի գործընթացը վերահսկող հատուկ մարմինների ստեղծումը, ՄՔԴ կանոնադրությունը վավերացնելու նպատակով ներպետական օրենսդրությունը փոփոխելու և լրանշակելու ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը, ինչպես նաև արդեն իսկ ստեղծված իրավական բազայի համապատասխանեցումը ՄՄԻ-ի արդի պահանջներին:

## СРЕДСТВА ИМПЛЕМЕНТАЦИИ МГП В НАЦИОНАЛЬНУЮ ПРАВОВУЮ СИСТЕМУ И ИХ ОСОБЕННОСТИ

**Нарине Карапетян**

*Соискатель кафедры европейского и международного права ЕГУ,  
Старший офицер Юридического управления МО, подполковник*

Несмотря на постоянное и значительное усовершенствование международно-правовой базы как на международном уровне, так и на уровне национального законодательства тем не менее, в последнее время во время вооруженных конфликтов, вспыхивающих в разных частях мира, регистрируются крупномасштабные нарушения как международного гуманитарного права так и прав человека, которые зачастую остаются безнаказанными, что и обостряет необходимость осуществления принятых государствами мирового сообщества обязательств в сфере МГП.

В статье исследуются примеры разных стран по внедрению обычных и договорных норм МГП в национальные правовые системы и созданию действующих правовых механизмов, способствующих неуклонному выполнению норм и принципов МГП.

Автор затрагивает вопросы внедрения конвенционных средств по имплементации МГП в правовую систему Республики Армения, а так же проблемы как правового так и организационного характера в сфере имплементации МГП.

## METHODS AND FEATURES OF IMPLEMENTATION THE IHL IN THE NATIONAL LEGAL SYSTEM

**Narine Karapetyan**

*Applicant of the YSU Chair of European and International Law,  
Senior officer of the Legal Department of the MOD,  
Lieutenant Colonel*

---

Despite the constant and significant improvement in the international legal framework at the international level and at the level of national legislation however, recently during armed conflict breaking out in various parts of the world, recorded large-scale violations of both international humanitarian law and human rights which often go unpunished, and that exacerbates the need for the international community adopted by States of obligations in the field of IHL.

The article examines examples from different countries for the implementation of customary and treaty IHL into national legal systems and the establishment of effective legal mechanisms to facilitate the steady implementation of the norms and principles of international humanitarian law.

The author touches upon the issues of introduction of conventional tools for the implementation of IHL in the legal system of the Republic of Armenia, as well as problems such as legal and organizational measures in the implementation of IHL.

**Բանալի բառեր** – զինված ընդհարում, ՄՄԻ-ի իմպլեմենտացիա, ՄԲԴ Կանոնադրություն, փոխակերպման մեխանիզմներ, ՄՄԻ-ի սկզբունքներ, զինվորական հանցագործություններ, ներպետական իրավական համակարգ

**Ключевые слова** – вооруженный конфликт, реализация норм МГП, Статут МУС, механизмы имплементации МГП, принципы МГП, военные преступления, национальная правовая система.

**Key words** – armed conflict, the implementation of IHL, the ICC Statute, the mechanisms of implementation of IHL, the principles of IHL, war crimes, the national legal system.

**Հարգելի՛ հեղինակներ,  
Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք  
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնայինի հետ միասին:

Հոդվածները առավելագույնը պետք է ունենան 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները և բանալի բառեր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները. տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2013 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (օրինակ՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր ստորագրում է, նշում կոնտակտային տվյալները: